

ԹԻՖԼԻՍԻ ԶԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԳՉՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

---

№ 156

ՍԵՐԷՈՍԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

Մ. ԽՈՐԵՆԱՑԻ

---

ՄԱՏԵՆԿԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

---

ՍՏ. ՄԱԼԿՈՍԵԱՆՑ

---

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Գ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

Типография М. Д. Ротинианца, Гол. пр., д. № 41.

1899

49-16

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

№ 156

ՍԵՐԵՈՍԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

Մ. ԽՈՐԵՆԱՑԻ

2993

ՄԱՅՆԵԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՍՏ. ՄԱՂԽԱՍԵԱՆՑ



ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. Գ. ՌՕՏԻՆԱՆՑԻ

Типографія М. Д. Ротинянца, Гол. пр., д. № 41.

1899



Дозволено Цензурою. Тифлисъ, 15 Января 1899 г.

## Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Մովսէս Խորենացու և նրա պատմութեան ուսումնասիրութիւնը վերջին 5—6 տարիներում մի նոր կերպարանք ստացաւ, որի գլխաւոր լատկանիչներն են—արագընթացութիւն և լուստեսութիւն: Ամեն մի տարի բերում է իւր հետ նորանոր գիւտեր, մէկը միւսից աւելի աննպաստ՝ Խորենացու նկատմամբ: Կեռ 1892 թուին էր, որ Հ. Յ. Տաշեան իւր «Ուսումնասիրութիւնք Ստոյն Կալլիսթենեար» հետազոտութեան մէջ աշխատում էր մանրամասն մատենագրական քննութիւններով սրուշել, թէ Ն վարի ութսնական թուականներէ որ տարում է գրուած Խորենացու պատմութիւնը բայց արդէն 1893-ին պրոֆ. Ա. Կարիէր հանդէս եկաւ «Հանդէս ամսօրեայում» մի շարք մերկացուցիչ լօղուածներով, և ահա Խորենացու պատմութիւնը, ինչպէս մի գնդակ սանդուխի վերակից՝ սկսեց արագ-արագ գլորուել, նախ մինչև եօթներորդ դարը, ապա ութերորդը, ապա իններորդը: Եթէ էլ աւելի չգլորուեց՝ պատճառն այն էր, որ այլևս տեղ չկար գլորուելու: Մասնագիտական

տարի չետոյ նրանց սխալ լինելը խոստովանելու վտանգով:

Այն առերևոյթ, երբեմն և իրապէս լուրջ վրաստերի հետ, որոնց հիման վրայ Խորենացու պատմութեան գրուելու ժամանակը մինչև Ը—Թ դարերն իջեցրուեց՝ կան և շատ ուրիշ երևոյթներ, որոնք, ընդհակառակը, ցոյց են տալիս, թէ Խորենացու Պատմութիւնը գոյութիւն է ունեցել այս դարերից զեռ շատ առաջ էլ: Առանց այս կարգի երևոյթները մանրամասնօրէն քննելու և լուծելու՝ անկարելի է վերջնական որոշում կազմեցնել Խորենացու պատմութեան յօրինուելու ժամանակի մասին:

Ներկայ ուսումնասիրութիւնը նպատակ ունի շօշափել միայն մի այսպիսի երևոյթ՝ ի նպատակ Խորենացու վաւերականութեան: Մենք աշխատել ենք սրա մէջ ցոյց տալ, թէ եօթներորդ դարի կէսերում արդէն Խորենացու պատմութիւնը լայտնի էր և հռչակուած և նրանից, իբրև ճշմարիտ և հաւատարմ մատենագրից, օգուտ է քաղել Սերէոս եպիսկոպոսը իւր Պատմութեան մէջ, Սոկրատի և Սեղբեստրոսի վարքի հպերէն թարգմանութիւնից զիւր բաւական ժամանակ առաջ:

Այս տեսակէտն ապացուցանելու համար՝ մենք ուսումնասիրել ենք Սերէոսի Պատմութեան սկզբում գրուած, իբրև անձանօթ հեղինակների գրուածքներ ճանաչուած երկու Գպրութիւնները, և

ցոյց ենք տուել, որ դրանք անտարակոյս Սերէոսին են պատկանում, իբրև նրա Պատմութեան անբաժան, համերաշխ և անհրաժեշտ մասերը:

Մեր քննութեան մէջ այս Գպրութիւններն ի նկատ են առնուած սահմանափակ ծաւալով— այն չափով միայն՝ որքան հարկաւոր էր նրանց ներքին և արտաքին կապը հաստատելու Սերէոսի Պատմութեան հետ և որոշելու Մ. Խորենացու, Ստ. Տարօնացու և Ասողիկի դերերը Բ. դպրութեան մէջ՝ իբրև աղբիւրների կամ բանաքաղների: Սրանցից զուրս կան նրանց մէջ շատ ուրիշ հետաքրքրական խնդիրներ, մատենագրական, պատմական բովանդակութեամբ, որոնք չեն շօշափուած մեր այս քննութեան մէջ: Ընդհակառակը, մեր պաշտպանած տեսակէտը իւր կողմից այս դպրութիւնների աւիթով զեռ նոր խնդիրներ կարուցանէ, որոնք հետզհետէ կ'քննուին և կ'լուծուին:

Սա. Մ.

10 դեկտեմբերի, 1898.

Քիֆլիս:

## ՍԵՐԷՈՍԻ Ը ԵՒ Բ ԴՊՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ինչպէս լալտնի է՝ Սերէոսի ի Հերակլէն պատմութեան սկզբում գրուած են կրկու գլուխ, որոնք սովորաբար կոչուած են Ա և Բ գպրութիւն: Ա գպրութեան մէջ Անծանօթ հեղինակը իւր գրելիքի մասին համառօտ տեղեկութիւն տալուց լետոյ՝ լալտնում է, թէ օգտուելու է Մարարայ (իսկապէս՝ Մարարաս) Մծուրնացի փիլիսոփայի մատեանից: ալս մատեանը, նրա տօնով՝ գրուած է համաձայնալն արձանագրութեան, որ գտնուել է Սանատրուք թագաւորի պալատի փլատակները բանալիս և պարունակելիս է եղել «զամս և զաւուրս հինգ թագաւորացն Հայոց և Պարթևաց, լունարէն դրպրութեամբ»: Արձանագրութիւնը հետեեալ վերնագիրն է ունեցել. «Ես Ագաթանգեղոս գրիչ գրեցի ի վերայ արձանիս այսորիկ իմով ձեռամբս զամս առաջին թագաւորացն Հայոց, հրամանաւ քաջին Տրդատայ, առեալ ի զիւանէ արքունի»: Այս մատեանը Անծանօթը Միջագետքում ձեռք բերելով՝ Մարարասի աշակերտներից՝ նրանից առնում է իւր-

պատմելիք նիւթը: Յիշում է աշտարակաշինութիւնը, Հալկի չհնազանդելը Բէլին և իւր սերունդով դէպի հիւսիս գաղթելը, Բէլի արշաւանքը Հալկի վրայ և նրանից սպանուելը, Հալկի լաջորդները, Շամիրամի և Արալի վէպը, հայոց ենթարկուելը Ասորեստանի իշխանութեան մինչև Սենեքերիմի մեռնելը. ապա հայերն ապստամբում են և կռոււիւրում են բնիկ իշխաններով, որոնցից վերջինը, Փառնաւազ, Արամանեակի սերունդից, Բագարատի հայրը, հնազանդում է Նաբուչոդոնոսորին, և հայերն աշուճեալ մտում են բարեւազոց և մարաց իշխանութեան տակ՝ մինչև Աղեքսանդր Մակեդոնացին նուաճում է բոլոր արևելքը: Մակեդոնացոց իշխանութեան տակ մտում են հայերը՝ մինչև պարթևները ապստամբում են նրանցից և հիմնում են Արշակունեաց հարստութիւնը: Այստեղ մի անկապ հատուած է գալիս, որտեղ չիշում է Աբրահամի ընդոծին Մարտակի փախչելը Խաճակից, գալ Հալատան բնակելը և երեք որդի ունենալը, որոնցից միայն մէկի, Փառոխի անունն է չիշում: Սրանից չետոյ գալիս է «Ապստամբութիւն Պարթևաց, որ եղև ի չաջո ժամանակի», որտեղ բուսական մանրամասն պատմելով Արշակ մեծի վարած կռիւները Սելևկեանների հետ՝ ապա աւանդում է, որ նա իւր որդուն, փոքր Արշակին, թագաւոր է նշանակում Հալատանի վրայ, որոշ սահմաններ նշանակելով և օդնական մեծ զօրք տալով: Նո-

րան ընդ առաջ է դուրս գալիս Բագարատ Փառադեանը, պսակում է հայրենական թագով, իւր դուստրը կնութեան է տալիս և փոխադարձաբար մեծ պատիւներ է գտնում նորաստեղծ թագաւորից: Աշուճեալ գալիս են երկու ցանկ,— Պարթևների՝ նրանց հարստութեան սկսուելուց մինչև վերջը, և հայ Արշակունիների՝ սկզբից մինչև Պապ թագաւորը: Սրանով վերջանում է Ա. դպրութիւնը:

Բ. դպրութիւնն սկսում է ալպիսի վերնադրով. «Արդ թէ պիտոյ է քեզ, ո՞վ ընթերցասէր, Երկրորդեցից ի պատմագրացն Մովսիսի Խորենացու և Ստեփաննոսի Տարանագրուց, հաւատի և ճշմարիտ մատենագրաց՝ զորդի ի հաւրէ ճանաչելը»: Ապա համառօտապէս պատմում է Արշակ քաջի թագաւորելը Բանլում, նրա թուան, Արշակ մեծի ձեռքով Վաղարշակի թագաւորելը Հալատանի վրայ, որով Արշակի ցեղը երկուսի է բաժանւում — Պահլաւ և Արշակունի: Աշուճեալ զրում է Պահլաւ թագաւորների ցանկը, մինչև նրանց վերջին թագաւոր Արտաւանի սպանուելը Արտաշէր Սասանեանի ձեռքով և Սասանեան հարստութեան գահ բարձրանալը: Սորան անկապ կերպով լաջորդում է մի հատուած՝ Մամիկոնեան ցեղի ձենական ծագում ունենալու մասին. այս հատուածը վերջանալուց չետոյ՝ գալիս է եռանուն սինխրոնիկ կանոն Սասանեան, Յունաց և Արշակունի թագաւորների՝ մինչև սրանց բարձումը վերջին» հայ Ար-

տեսակէաների հետ, որոնց հիման վրայ նրանք անվաւերական ճանաչուեցին Ք. Պատկանեանի կողմից և ապա՝ լաջորդ բանասէրներին:

Ք. Պատկանեանը (Սերէոսի ռուս. թարգմ., Ս. Պետերբուրգ, 1862, Առաջաբան, էր. 6 և լաջ.) այս գպրութիւնները Սերէոսինը չէ համարում հետեւեալ տեսակէաներով. նախ՝ որ նրանք ոչ մի կապ չունին Հերակլ կալսեր շրջանի հետ, որի պատմութիւնն է գրել Սերէոս: Երկրորդ՝ որ Երրորդ մասի, այսինքն բուն պատմութեան սկզբում հեղինակը գրել է մի նախերգանք, որի մէջ լայանում է, թէ ինչ պէտք է նկարագրէ և որ շրջանը. նա ասում է, թէ ինքը չպէտք է խօսի վաղեմի ժամանակների մասին (о временахъ давнопрошедшихъ), որովհետև այս բոլորը նկարագրուած և պատմուած է ուրիշների ձեռքով: Երրորդ՝ որ Բ գպրութիւնը բովանդակում է թագաւորների սինխրօնիկ ցանկ, որ քաղուած է Մ. Խորենացու և Ստ. Տարօնացու պատմութիւններից: Առաջին հրատարակիչը (Թ. Միհրդատեանց), նկատելով այս անուան զուգադրութիւնը Մ. Խորենացու անուան հետ, Բ գպրութեան բունած տեղը բուն Սերէոսի պատմութեան սկզբում, և վերջապէս կարծելով, թէ բոլոր երեք գպրութիւններն էլ պատկանում են Սերէոսին՝ ընկել է մոլորութեան մէջ և ենթադրել է, թէ Ստեփանոս Տարօնացին հին հայ հեղինակ է, կամ ժամանակակից Խորենացուն, կամ

նրա լաջորդը, որովհետև Սերէոս նրանից քաղուածք է անում: Ինքը, պրօֆ. Ք. Պատկանեանը, չէ ընդունում այս կարծիքը և պնդում է, որ Ստ. Տարօնացին ոչ այլ ոք է՝ եթէ ոչ ԺԱ գարի հեղինակ Ստեփանոս Ասողիկը: Իւր այս կարծիքը նա հիմնում է նախ նրա վրայ, որ Ստ. Տարօնացու — ոչ Ասողիկի — անունը ոչ մի հայ հեղինակ չէ վիշում, և երկրորդ՝ որ ակնյալանի երևում է և ոչ մի կատկածի չէ ենթարկուած՝ որ Բ գպրութեան անձանօթ հեղինակը բանաքաղութիւն է արել Ասողիկից. այս բանում համոզուելու համար՝ բաւական է համեմատել այս գպրութիւնը Ասողիկի պատմութեան հետ: Աւրեմն այս երկրորդ գպրութիւնն ամբողջապէս՝ գործ է մի անձանօթ հեղինակի և ոչ Սերէոսի, իսկ սրա պատմութեան հետ պատահաբար է հանդիպել ձեռագիր ժողովածուի մէջ: Ա գպրութիւնը նոյնպէս չէ պատկանում Սերէոսին. սա նոյնպէս պատահաբար է կցուած Սերէոսի պատմութեան, որի հետ ոչ մի կապ չունի (не имѣетъ ничего общаго съ нимъ): «Եթէ կարելի է այս գպրութիւնից որեէ բան վերագրել Սերէոսին — ասում է հանդուցեալ գիտնականը — այդ միայն սկզբի 16 տողն է, այն էլ միայն այն պատճառով, որ մենք չգիտենք, թէ ո՞վ է եղել առաջին անգամ (Ագաթանդեղեան) արձանագրութեան արտագրողը»: — Նոյն հպեացքը, Սերէոսի և Ա գպրութեան լարաբերութեան մասին, լայանել է Ք. Պատկա-

նեանը և աւելի ուշ, 1875 թուին (Վանի արձա-  
նագրութիւնների մասին, Եր. 66), աւելով, թէ  
«Վիան լարդելի պատճառներ այս դպրութիւնը  
Սերէոսինը համարելու... բայց քանի որ այս զը-  
պրութեան հեղինակն անպաշտ է, և հրատարակիչը  
նրան տպել է իբրև Ա զլուխ Սերէոսի պատմու-  
թեան՝ մենք, մինչև աւելի լարմար անուն գտնելը,  
պիտի կոչենք նրան Սերէոսի պատմութեան Ա  
զլուխ»։— Նոյն հալեացքը նա լայտնել է աւելի  
միջնական կերպով և 1879 թ., Սերէոսի Բ տը-  
պագրութեան Առաջաբանի մէջ— «Յերից դպրու-  
թեանց մատենիս միայն զերրորդն համարիմք լի-  
նել Սերէոսի», և այս համոզմունքին համապատաս-  
խան ձև է տուել իւր տպագրութեանը։

Ք. Պատկանեանից լսող Ա զպրութեան մա-  
տին կարծիք են լայտնել շատ բանասէրներ, ոմանք  
անցողակի <sup>1)</sup> և ոմանք լատուկ մանրամասն ու-

<sup>1)</sup> Հիւրշման, Zur Geschichte Armeniens und der  
ersten Kriege der Araber, aus dem armenischen Sebeos,  
1875, Եր. 4.— Բառագարտէր, Ueber das Buch die Chrie,  
ZDMG, XL, 466, ծանօթ. 1.— Գուաշմիտ, Ueber die Glaub-  
würdigkeit der armenischen Geschichte des Moses von Kho-  
rea, Kleine Schriften, III, Եր. 320—325.— Ա. Գարագա-  
շեան, Քննական պատմութիւն Հայոց, Բ տպ. հտ. Ա, Եր.  
185.— Նարիէր, Moïse de Khoren et les Généalogies pa-  
triarciales, Եր. 16—18.— Գար. Զարբանակեան, Հայկա-  
կան Հին դպր. պատմ. Բ տպ. 1886, Եր. 417.— Բառագ-  
արտէրի և Հիւրշմանի մասնաւոր կարծիքներին ծանօթ  
չենք անմիջապէս, այլ Ն. Մարի և Գ. Բալաթեանցի ներ-  
քն լիշուած աշխատութիւնների միջոցով։

տումնասիրութիւնների մէջ <sup>1)</sup>։ Առանց մտնելու  
այս աշխատութիւնների գնահատութեան մէջ, որ-  
տեղ շատ ուղիղ հալեացքներ կան արտապաշտուած  
Մար-Աբասեան աղբիւրի և սրա ու Խորենացու մէջ  
եղած աղերսի նկատմամբ՝ այսքան միայն ասենք  
մեզ հետաքրքրող խնդրի վերաբերութեամբ, թէ  
բոլոր այս բանասէրները համաձայն են Ք. Պատ-  
կանեանի լայտնած հիմնական մտքին, այսինքն՝  
թէ այս դպրութեան խմբագրողը Սերէոսը չէ, այլ  
մի Անծանօթ (Анонимъ), որին բանասէրներից  
տմանք (Գուաշմիտ, Ֆէտտէր, Մառ.) դնում են Սե-  
րէոսից առաջ, հինգերորդ դարի առաջին կեսում,  
իսկ Գ. Խալաթեանց՝ Սերէոսից լսող։ Այս հեղի-  
նակներն էլ իրանց կողմից աւելացնում են մի  
քանի նոր հալեցակէտներ լոգուտ այն ենթադրու-  
թեան՝ թէ այս դպրութիւնը Սերէոսին չէ պատ-  
կանում։ Որ. Գուաշմիտ ուշադրութիւն է դարձնում  
այն հանգամանքի վրայ, որ այս դպրութեան աղ-  
բիւրը, Մար Աբաս Մծուրնացին, Հափազանց մեծ  
նմանութիւն ունի Խորենացու Մար Աբաս Կատի-  
նալի հետ, նիւթով և լեզուով նրանք շատ նման

<sup>1)</sup> Ֆէտտէր, Մար-Աբաս Մծուրնացու դիրքը, Հայ-  
կական աշխատութիւնք, Վիեննա, 1895, Եր. 31—45.  
— մանաւանդ Ն. Մառ, О начальной истории Армении Ано-  
нима, „Визант. Временник“, 1894, II, Եր. 263—306, և Գ.  
Խալաթեանց, Анонимъ, какъ поздній апокрифъ, Армянскій  
эпосъ..., 1896, Եր. 58—105։

են միմեանց. իսկ որտեղ որ տարբերութիւններ կան՝ դիտաւորեալ շեղումի կերպարանք են կրում Խորենացու մօտ. այնպէս որ Գուշմիտ ենթադրում է, թէ այս դպրութեան հեղինակը պէտք է լինի նոյն ինքն Խորենացին, որ նրան համառօտապէս ծրագրել է և ապա ընդարձակօրէն մշակել իւր պատմութեան մէջ: — Գ. Խալաթեանց, որ այս դպրութիւնը ուսումնասիրել է նրա նիւթի, այսինքն լեզուի և ոճի տեսակէտից՝ եկել է այն եզրակացութեան, թէ այս կողմից Ա. դպրութիւնը մեծ նմանութիւն ունի Սերէոսի պատմութեան հետ, որի հետ կապուած է և մեքենայէս. բացի արտաքին նմանութիւնից՝ պ. Խալաթեանցը երկուսի մէջ գտնում է և ներքին կապ. այն է, որ ինչպէս Սերէոսը Բագրատունեաց պատմիչ է՝ այնպէս էլ այս դպրութիւնը նպատակ ունի փառաւորել Բագրատունեաց ծագումն ու նշանակութիւնը հին ժամանակներում: Հէնց այս նպատակով էլ մի անձանօթ հեղինակ շարադրել է նրան և միացրել լատկապէս Սերէոսի պատմութեան: Այսու ամենայնիւ բարգելի բանասէրը և ոչ մի բողոք հարց չէ դնում, թէ այս դպրութիւնը, այսքան առնչութիւններ ունենալով Սերէոսի հետ՝ գուցէ հէնց Սերէոսինն է. նա «միանգամայն հիմնաւոր» համարելով Ք. Պատկանեանի ապացոյցները (եր. 62)՝ իւր կողմից կարծիք է լայտնում, թէ այս դպրութիւնը պէտք է շարադրուած լինի Ը—Թ դարե-

րում մի անձանօթ հեղինակից, որ չափազանց ենթարկուել է Սերէոսի լեզուի և ոճի աղբեցութեանը: Իբրև նոր ապացոյց, որ այս դպրութիւնը Սերէոսի հեղինակութիւնը չէ՝ պ. Խալաթեանցը բերում է հետևեալ դիտողութիւնները. 1) Սերէոսի պատմութիւնը իւր որոշ, աղղու կերպով դժազբուած կերպարանքն ունի լեզուի, ոճի, բառերի գործածութեան և տեղագրական անունների կողմից, որոնք անցնում են նրա ամբողջ պատմութեան միջով և սերտ կերպով կապուած են նրա բովանդակութեան հետ. այն-ինչ Անձանօթի այս դպրութիւնը մի խաչաձևով քաղուածք է զանազան հեղինակներից. 2) Սերէոսի պատմութիւնը ներկայացնում է հաստատ պատմական իրողութիւններ, նկարագրուած մի հեղինակից՝ որ ոչ միայն նորանց ժամանակակից էր, այլ և չաճախ ակնատես. այն-ինչ Անձանօթի դպրութիւնը ներկայացնում է մի անվաւերական աւանդութիւն (73—74). 3) Յովհանն (ձնեցու մօտ, (Ը դարի առաջին երրորդում) պատահում են «տիտանեան» մակդիրը, «աստուածօրէն» բառը և մի-երկու մանրամասնութիւն Բէլի մասին («աստուածօրէն իմն պատուով պատուեցին», եր. 36. (ղեք) «գերի վերջ մարդկայնոցս համբառնային բնութեան», եր. 37), որոնցից «ըստ երևութին» օգտուել է Անձանօթը, ուրեմն նա աւելի լետու է քան (ձնեցին (եր. 93): Այս կարծիքների մանրամասն քննութիւնը

մեզ շատ հեռուն կտանէր. մենք կրտսակսնանանք մի քանի համառօտ նկատողութիւններով նրանց մասին, այսքան միայն ցոյց տալու համար, թէ նրանք անհերքելի ապացուցներ չեն ի նպատակ ապացուցելու անվաւերականութեան, և թէ անվաւերականութեան տարակուս ծագեցնող կէտերը զիւրաւ կարող են բացատրուել և ուրիշ կերպով:

1. Եթէ Ա. դպրութիւնը Սերէոսի գործ չհամարենք այն հիման վրայ, որ նա ոչ մի կապ չունի Հերակլ կալսեր շրջանի հետ, որի պատմութիւնն է գրում Սերէոս՝ պէտք է, հետևողաբար վարուելով, Սերէոսինը չհամարենք նաև նրա բուն պատմութեան գոնէ Ա. և Բ. գլուխները, որոնք պարունակում են լիշատակութիւն Հալատտան եկող զանազան մարդկանների ու նրանց կախները և Պարսկաստանի անցքերի՝ նախ քան Հերակլեան շրջանը: Հերակլ կալսը Սերէոսի պատմութեան մէջ հանդէս է գալիս ՌԱ. գլխում և վերջանում է Լ. գլխով, ուրեմն ընդամենը տասն գլխի մէջ. միւս 28 գլուխները Հերակլից առաջ և լիտոյ կատարուած բաներ են, շատ անգամ այնպիսի բաներ, որոնք ամենեին կապ չունին քաղաքական պատմութեան հետ, որոնք, ուրեմն, նոյնպէս պէտք է անհարազատ համարուէին: Տեսնում ենք ուրեմն, որ չէ կարելի դրքի վերնագիրը («Պատմութիւն ի Հերակլին») նեղ մտքով հասկանալ և անհարազատ համարել այն՝ որ Հերակլի շրջանի հետ կապ չու-

նի:— Մենք լիտոյ կտանենք, որ Ա. դպրութիւնը անհրաժեշտ կապ ունի Սերէոսի պատմութեան հետ:

2. Բուն պատմութեան սկզբում գրուած Նախերգանքում Սերէոսը չէ ասում, թէ «ինքը չպիտի խօսի վաղմի ժամանակների մասին, որովհետև այս բոլորը նկարագրուած և պատմուած է ուրիշների ձեռքով»: Նա, համառօտիւ փշելով, որ Արշակունեաց տէրութեան բարձունից լիտոյ Սասանեանները խորհուրդ չզայցան քրիստոնէութիւնը վերացնել Հալատտանից՝ շարունակում է. «արդ՝ դժամանակս Յաղապարեան չարագործին Յաղիբաթի, և եթէ ձրպէս նա կամէր զատուածայինն եղծանել կարգս. և կամ ձրպէս քաջ նախարարացն Հալսց և .. նահապետն Մամիկոնէից տանն Աարմիրն կոչեցեալ Վարդան... զինեցան ի պատերազմս, և կամ ձրպէս... սուրբ վկայքն Քրիստոսի կատարեցին զնահատակութիւնս իւրեանց... մերձ ի Նիւշապուհ քաղաքի... այն ամենայն ի ձեռն ալսց գրեցաւ, որպէս ցուցանէ նոյն իսկ պատմութիւնն» (Բ Տպ. Ա. Պետերբուրգ, Էր. 22—23): Ուրեմն խօսքը ալտոկ միայն Վարդանանց ժամանակի մասին է, որը մանրամասն պատմել Սերէոսը զանց է անում՝ քանի որ Եղիշէն («նոյն իսկ պատմութիւնն») արդէն գրել է: Վաղմի ժամանակների մասին ակնարկութիւն անգամ չկայ այս խօսքերում:— Մենք լիտոյ կտանենք, որ այս խօսքերը բոլորովին հա-

կառակն են ապացուցանում—Ա. և Բ դպրութիւնների վաւերականութիւնը:

3. Բ դպրութեան վերնագրում չիշուած Ստեփանոս Տարօնացին կարող է և չլինել Ասողիկը: Յիրաւի, այս դպրութեան սկիզբը, մինչև «և չեա նորա պաշտօնաւոր նորին ղնոջն ձև աւրինա(կի)» (Եր. 11—12), մի երեսից պակաս բան, կալ, մի քանի լաւելուածներով, և Ասողիկի մէջ (Տպ. Ս. Պետերբուրգի, Եր. 29—32). բաւց փոխ աւնողը կարող է լինել և Ասողիկը, որ ուրիշ տեղերում էլ տասնհակ երեսներով արտագրում է— Սերէտից. մնացած՝ 9 երեսից աւելի նիւթը ոչ մի կերպով չէ կարող քաղուած լինել ոչ Ասողիկից, ոչ Խորենացուց և ոչ երկուսից միասին, ուրեմն ենթադրում է ուրիշ աղբիւր—մեզ անծանօթ Ստ. Տարօնացուն — ոչ Ասողիկին: Իսկ որ Ստեփանոս Տարօնացին, բացի այս վերնագրից, ուրիշ հեղինակների մօտ չիշուած չէ՝ սա բաւական հիմք չէ նրա գոյութիւնը մերժելու: Ունեցել ենք և ուրիշ հեղինակներ, որոնք նոյնպէս մի կամ երկու անգամ են չիշուած չեաազաւ հեղինակներից, ինչպէս Թէոդորոս Վերթող, Աբրահամ Խոստովանող և այլն: — Մենք չեաոլ կտեսնենք, որ Ստեփանոս Տարօնացին—ոչ Ասողիկը, չիշուած կալ և ուրիշ տեղ:

4. Տարօրինակ կլինէր ենթադրել, որ այս երկու դպրութիւնները, որոնցից իւրաքանչիւրն առանձին վերցրած, իբրև անկախ գործ, անխոր-

հուրդ աշխատութիւն է՝ պատահաբար երկուսն էլ կցուէին Սերէտի պատմութեան սկզբին. նախ Ա դպրութիւնը կցուէր, և ապա, մի քանի հարիւր տարի վրան անցնելուց չեաոլ, կցուէր Բ դպրութիւնը, ալն էլ՝ Ա դպրութեան և Սերէտի պատմութեան մէջ, և ապա ալնուհետև, այս երկու անհարազատ լաւելուածներն ընդունելուց չեաոլ, ամբողջ գրուածքը բաժանուէր գլուխների:

5. Գուռչմիտի նկատած ակնայտնի նմանութիւնը և դիտաւորեալ շեղումի կերպարանք ունեցող տարբերութիւնները Ա դպրութեան և Խորենացու պատմութեան մէջ՝ կարող էին առաջ դալ և ալն դէպքում, եթէ թէ Խորենացին և թէ Ա դպրութեան հեղինակը միմեանցից անկախ կերպով օգտուած լինէին հասարակաց աղբիւրից, Մար Աբասեան պատմութիւնից, և իւրաքանչիւրը նրան մշակած ըստ իւր ճաշակի և հալեացքների, ինչպէս իրաւամբ ենթադրում է Ն. Մառը: Այս դէպքում՝ առաջին դէմքով խօսող Անծանօթը կարող էր լինել և Սերէտ: Իսկ որ Խորենացին չէ ալդ դպրութեան հեղինակը՝ արդէն ցոյց է տրուած ուրիշներից:

6. Գ. Խալաթեանցի կարծիքների նկատմամբ կարելի է հետեւեալ առարկութիւններն անել. 1) Ինքը պ. Խալաթեանցը ցոյց է տուել առաջին անգամ ալն ապշեցնող (паразительный) նմանութիւնը, կարելի է աւել նոյնութիւնը (тождествен-

НОСТЬ), որ նկատուած է այս դպրութեան և Սեբէոսի պատմութեան լեզուի, ոճի և դարձուածքների մէջ. իսկ որ այս դպրութիւնը քաղուածք է դանազան աղբիւրներից՝ դա չէ կարող խանդարել, որ նա գրուած լինէր Սեբէոսից. որովհետև Սեբէոսըն էլ, ինչպէս և ամեն ոք, անցեալ դարերի մասին գրելիս՝ ստիպուած պէտք է լինէր զանազան աղբիւրներից քաղուածքներ անելու: 2) Երբ Սեբէոսը գրում է իրան մօտ ժամանակ կատարուած դէպքերը իբրև ժամանակակից և նոյն-իսկ ակադատես՝ անտարակոյս նրա գրածը ստույգ-պատմական կլինի. իսկ երբ, հեռաւոր ժամանակների համար, զիմուած է գրաւոր կամ անգիր աղբիւրների՝ նրա գրածը բնականաբար կտանաչ այդ աղբիւրների գոյնը: Հայոց նախնական ժամանակի պատմութիւնը նա առել է Մար Աբստից — մեր այժմեան հասկացողութեամբ՝ անվաւերական (апокрифъ) գրուածքից, և նրա աշխատութեան այս մասը, մեր այժմեան հասկացողութեամբ՝ անվաւերական է. նոյն դպրութեան երկրորդ մասը, Պարթևների սպստամբութիւնը, առել է «ժամանակագրից» (= ժամանակագրութեան հեղինակ Նևերբիտից?), ուստի նոյն դպրութեան այս մասն արդէն պատմական է: Նոյն-իսկ անկասկած Սեբէոսի համարուած պատմութեան մէջ, երբ հեղինակն աւանդութիւնից կամ ի լրոջ է գրում՝ արդէն աւանդական և հրաշալիե գոյն է ստանում նրա ստույգ-պատմական աշխատու-

2993

թիւնը <sup>1)</sup>: 3) Յովհան Օձնեցու և այս դպրութեան մէջ նկատուած մի-երկու բառերը առանձին կարևորութիւն չունին. ինքը պ. Խալաթեանցն էլ կարծիքաբար է ասում, թէ Անծանօթը այդ մի քանի բառն «ըստ երևութին» առած պէտք է լինի Յովհան Օձնեցուց: Ի հարկէ, կարող էր և ընդհակառակը պատահած լինել, որ Օձնեցին առած լինէր Սեբէոսից, եթէ միայն կամենայինք այդ մի-երկու բառի վերաբերութեամբ բանաբաղութեան խնդիր չարուցանել:

Բ դպրութիւնը նուազ բախտաւոր է եղել առաջինից. ոչ միայն ընդարձակ, այլ և համառօտ քննութիւններ նրա մասին չեն կատարուած: Քաթողիկոսների արտապայտած հայեացքը, թէ այս դպրութիւնը խմբագրուած է Մովսէս Խորենացուց և Ստեփանոս Տարօնացուց — Ասողիկից, ուրեմն ոչ վաղ քան ժԱ դարը՝ կատարեալ հմայութիւն է առաջ բերել: Բանասէրներն արհամարհել և անտես են արել այս դպրութիւնը՝ ինչպէս արդէն ծանօթ աղբիւրներից ուշ ժամանակ կատարուած մի խմբագրութիւն: Ճիշտ է, մի քանի տարի ա-

<sup>1)</sup> Օրինակ. «Ընդդէմ սորա (գօրուն Պերոզի) աճապարելով Վահան սպարապետ և հաղարաւ ընտիր վանելոց... չաւգնութիւն հասեալ աստուածեան բանն, հողմն սաստկացուցեալ զմրբիկ փոշուոյն զդարաւքն Պարսից հեղոյր, իբրև զմութիաւարի՝ զնոսապատէրի միջաւրեաց ժամանակիս (եր. 24): Նոյնպէս Իսմայէլացոց նաւատորմի կործանման նկարագիրը (եր. 145—146) և այլն:



առջ Նորայր Բիւզանդացին կարծիք չալտնեց, թէ այս դպրութիւնը Սերբէոսինն է, թէ Ստ. Տարօնացին Ասողիկը չէ, և Ասողիկը քաղուածք է արել այս դպրութիւնից <sup>1)</sup>։ Բայց նրա այս կարծիքները, քանի որ պակասում էին ապացոյցներ՝ մնացին ձայն բարբառոյ լանապատիւ Գոնէ Գ. Խալաթեանց, այս կարծիքներն լայտնուելուց մօտ 3 տարի լետու, մնում է դարձեալ Ք. Պատկանեանի

<sup>1)</sup> «Երեսք 27—41 Սերբոսի» (ըստ Ա. տպագրութեան, այսինքն Բ. դպրութիւնը) շատուց Սերբոսի են ըստ իս... Ես կարծեմ թէ Ստեփանոսը Տարաւնացի է իշատակեալն ի Հայկ. Հին Գ. պր. Պատմ. Հ. Գար. 2, 277, մի չերկրորդ Քարգմանչաց, որպէս թուի Հատուածն ի Ստ. Ասողիկ, Ա. դ. 30—32, «Թագաւորեցոյց զեղբայր իւր զՎաղարշակ ի վերայ աշխարհիս Հայոց», մինչև ի կատարած զլիտոն, առեալ է ի Սերբոսէ, 27—28. «Սա թագաւորեցոյց զեղբայր իւր զՎաղարշակ ի վերայ աշխարհիս Հայոց», մինչև «Եւ յետ նորա պալազատը նորին զնոյն ձև արինա(կի)»։ Նաև այլուր Ասողիկ ընդօրինակէ ի Սերբոսէ ընդարձակ հատուածս։ «Հանդէս ամսօրեայ», 1893, Սեպտեմբեր, էր. 276, բւ—Նոյն 1893 թուին Ա. Տէր-Միքելեան Սամուէլ Սնեցու պատմութեան ծանօթութիւններն մէջ Վաղարշապատ, 1893, ծան. 11, էր. 253—254) խօսում է համառօտ այս երկու դպրութիւնների մասին, որոնք համարում է Սերբոսի պատմութեան մասն, հակառակ Ք. Պատկանեանի կարծիքին։ Իւր այս հայեացքը նա պատճառաբանում է մի քանի հիմնատր դատողութիւններով։ Սոս զրուածքի հետ մենք ծանօթացանք շնորհիւ Ք. Տէր-Մկրտչեանի ցուցման՝ երբ մեր ներկայ ուսումնասիրութիւնը գրուած վերջացած էր։

զայտնած հայեացքին. իւր «Հայոց Վէպում» (էր. 58) լայտնելով, որ Բ. դպրութիւնը իւր հետազօտութեան առարկայ չէ՝ անցողակի կերպով նկատում է. «Բ. դպրութիւնը, որ պարունակում է համաժամանակ ցանկ Սասանեանների (227—652 թ.), հայ Արշակունիների մինչև Գ. դարի վերջը և Նոմէական-բիւզանդական կայսրների Աւրեղիանոսից մինչև Հերակլ (270—641 թ.), յօրինուած է ոչ վաղ քան Ժ. դարը, որին ապացոյց են նրա սկիզբը և վերնագիրը, որոնք կրում են հետքեր Խորենացոյց և Ասողիկից (ԺԱ. դար)»։—Նոյն հայեացքն ունեցել ենք և մենք՝ Ասողիկի պատմութեան հրատարակութեան ժամանակ (էր. 321, ծանօթ. 2)։

Սրանք են, որչափ մենք գիտենք, Ա. և Բ. դպրութիւնների մասին լայտնուած կարծիքները։ Ա. դպրութիւնն ենթարկուած է բազմակողմանի լուրջ ուսումնասիրութիւնների, որոնք շատ ուղիղ հայեացքներ են պարունակում. բայց այս դպրութեան և Սերբոսի պատմութեան մէջ եղած չարաբերութեան մասին, ինչպէս տեսանք, բաւական համոզիչ չեն այն պատճառաբանութիւնները, որոնց հիման վրայ սա համարուել է անվաւերական, ոչ Սերբոսի գործ։ Իսկ Երկրորդ դպրութեան մասին մինչև օրս չէ եղել քննութիւն՝ որոշելու համար նրա չարաբերութիւնը Սերբոսի, Ասողիկի, Խորենացու և «Ստ. Տարաւնացու» հետ։

Այս պատճառով, կարծում ենք, աւելորդ չէ նորից դնել Ա և Բ դպրութեան խնդիրը, նրանց հեղինակի կամ խմբագրողի նկատմամբ: Յիշ լա- ջողուի ցոյց տալ, թէ սրանք երկու Անձանօթիե- րի, սիմեանցից անկախ և անխորհուրդ գործեր չեն, այլ նոյն-խակ Սեբէոսի աշխատութիւնը, իբրև առաջին մասն նրա ծրագրի՝ սրանով ոչ միայն լուծուած կլինի Սեբէոսի պատմութեան սկզբնա- կան ծաւալի խնդիրը, այլ և լոյս կախուել մի շատ աւելի կարևոր մատենագրական խնդրի վրայ, որ ներկայումս զբաղեցնում է հայ բանասիրութեամբ հետաքրքրուողներին:

### Ք Ն Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Բ Գ Պ Ր Ո Ւ Թ Ե Ը Ն

Մենք նպատակաւարմար ենք համարում նախ քննել Բ դպրութիւնը՝ նրա աղբիւրները—Մովսէս Խորենացու և Ստեփանոս Տարանացու նկատմամբ, այնուհետև՝ ընդհանրապէս խօսել Ա և Բ դպրու- թիւնների չարաբերութեան մասին Սեբէոսի պատ- մութեան հետ:

Պարզութեան համար՝ Բ դպրութիւնը բաժա- նում ենք չորս մասի—1) Պարթեների ժամանա- կագրութիւնը, սկզբից մինչև «և լեա նորա պաշա- զատք նորին զնոյն ձև աւրինա(կի)»: 2) Հատուած Մամիկոնեանների ծագման մասին, մինչև «չալսմա-

նէ այն է սպարապետ»): 3) Առանուն կանոն Պար- սից, Յունաց և Հայոց թագաւորների, մինչև «և վախճանեցաւ և վճարեցաւ»: 4) Երկանուն կանոն Պարսից և Յունաց թագաւորների, մինչև վերջը: Առաջին և երկրորդ մասերը միմեանց հետ չեն կապ- ւում, և նկատում է աղաւաղութիւն նրանց միա- նալու տեղում.—«և լեա նորա պաշազատք նորին զնոյն ձև աւրինադրէն զՄամիկոնէիցն ապա աղաց զնեղութիւնն» և այլն: Մեր կարծիքով՝ աչտեղ ձե- ւագրից թուղթ է ընկած <sup>1)</sup>: Երրորդ մասում ան- հարազատ ենք համարում մի կցկաուր հատուած (եր. 16), որ վերաբերում է Յուլիանոսի կոստաշտ զառնալուն, Աթանասի հալածուելուն, Սոկրատի եկեղեցական պատմութեան բովանդակութեան, Կոստի թագուհու մահուան են,—«Սա որդի է քեռ մեծին Կոստանդիանոսի.... որ ի բռնադրաւսելն մեռաւ»: <sup>2)</sup> Բացի սրանցից՝ թուերի մէջ պատա- հում են բաւական աղաւաղութիւններ, որոնք ուղղում են հէնց նոյն բնագրի նախընթաց և հե- տեորդ հաշիւներից: Սրանցից մեզ համար կարե- ւորները, իրանց տեղում, ուղղուած են Բ դպրու- թեան քննութեան մէջ, միւսները Ա չաւելուա- ծում:

Այս նախընթաց բացատրութիւններից լեաու զանք Բ դպրութեան աղբիւրների քննութեան,

1, 2) Տես Յաւելում Ա. չորում Ա և Բ:

որոնք են «Մովսէս Խորենացի և Մտեփանոս Տարաւնացի, հաւաստի և ճշմարիտ մատենագիրք», ինչպէս չարտնում է այս դպրութեան հեղինակի վերնագիրը:—Ո՞վ է այս Ստ. Տարաւնացին, Ասողիկը թէ մի ուրիշ հեղինակ:

Կարծում ենք՝ մեզ իրաւունք կտան, եթէ մենք հարցը այսպէս դնենք.—Եթէ այս դպրութեան վերնագրում չիշուած հեղինակներից երկրորդը, այսինքն Մտեփանոս Տարօնացին, Ասողիկն է՝ ուրեմն պէտք է սպասել, որ Բ դպրութեան պարունակած նիւթերը քաղուած լինին կամ՝ Խորենացուց կամ Ասողիկից, կամ երկուսից միասին. զոնէ այս երկու հեղինակները, Խորենացին և Ասողիկը, պէտք է ունենան այնպիսի բովանդակութիւն, որից կարելի լինէր խմբագրել և կազմել այս Բ դպրութիւնը:

Այս տեսակէտից նայելով՝ տեսնում ենք որ այս դպրութեան առաջին մասը, Պարթևների ժամանակագրութիւնը, բառացի պատահում է և Ասողիկի մէջ, մի քանի լուեղուածներով վերջինիս մաս: Երկրորդ մասի, Մամիկոնեանների ծագման վերաբերեալ հատուածի մէջ, առաջին երկու-երեք տողը մասամբ համաձայն և մասամբ անհամաձայն են Խորենացուն (Ասողիկ չունի այդ), իսկ մնացած մասը պատմում է նոյն ինքն հեղինակը, ճեւացի պատգամաւորի խօսքերից, ուրեմն զրականաղբիւր չունի: Երրորդ և չորրորդ մասերը, եռա-

նուն և երկանուն կանոնները, ոչ Խորենացուց կարող են լինել, ոչ Ասողիկից և ոչ երկուսից միասին. (չորրորդ մասին վերաբերեալ նիւթ, Արշակունեաց բարձումից լետոյ, Խորենացին չունի էլ):

Առաջին մասն ամենից կարևորն է, որովհետև անվիճելի նմանութիւն ներկայացնելով Ասողիկի պատմութեան հետ՝ վերնագրում իբրև աղբիւր չիշուած Ստ. Տարաւնացու անուան հետ միասին՝ առիթ է տուել բանասէրներին կարծելու, թէ այս դպրութեան աղբիւր է ի միջի ալլոց և Ասողիկը, ապա ուրեմն խմբագրուած է ոչ կանուխ քան ՓԱ դարը, ուրեմն և Սերէոսի՞ զործը չէ: Բայց սա մի պատահական զուգադիպութիւն է, մի խաբուսիկ պատրանք, որ իսկոյն եեթ կըացուի՝ երբ մարդ մանրամասն քննէ այս հատուածը: Բերենք այստեղ այդ քննելի հատուածն ըստ Ասողիկի և ըստ Բ դպրութեան, ծանօթութիւնների մէջ նշանակելով աղբիւրներն այն լուեղուածների՝ որ կան Ասողիկի խմբագրութեան մէջ:

Ասողիկ. (տպ. Ս. Պետերբ. Բ դպր. (տպ. Ս. Պետերբ. եր. 29—32). եր. 11—12):

Եւ եղև ի ժո ամին սորա (Անտիոքայ Քէոսի) եւ ի ի ամի գգնի վախճանիւ Աղերսանգրի ապստամբեցին

Յետ մահուանն Աղէքսանդրու

Ասողիկ.

Պարթևք ի ծառայութենէ  
Մակեդոնացոց եւ 1)

Թագաւորէ ի վերայ նոցա  
Արշակ Քաջ ի Բաճ Եւ-  
հաստանի լերկրին (var.  
լերկիրն) Քուշանաց  
եւ թափէ զամենայն կողմանս  
Արեւելից եւ տայ պատերազմ  
սաստիկ յոյժ: Հալածէ եւ ի  
Բարելոնէ զՄակեդոնացոց իշ-  
խանութիւնն եւ 2)

Թագաւորէ ընդ ամենայն  
ամս ծէ: Եւ լետ նորա  
որդի նորա Արտաշէս (var.  
Արտաշիր) ամս լա. և լետ  
սորա թագաւորէ սորին  
որդի Արշակ, որ կոչեցաւ  
Մեծ:

Ի վերայ սորա եկեալ Գե-  
մետրիոս արքայ Մակեդոնա-  
ցոց ի Բարելոն, եւ պար-  
տեալ ի գերութիւն ընդուն-

1) Խոր. Բ. ա. «Եւ ի մետաղաբարդին (Անտիոքայ  
Թէոսի) ապստամբին Պարթևք ի ծառայութենէ Մակեդո-  
նացոցն»:— Խոր. Բ. ր. «Յետ վաթսուն ամի մահուանն Ա-  
ղեքսանդրի թագաւորէ ի վերայ Պարթևաց Արշակ Քաջ»:

2) Խոր. Բ. ր. «Եւ տայ պատերազմ սաստիկ յոյժ,  
թափելով լինքն զամենայն արևելեայս Հալածէ և ի Բա-  
րելովն զՄակեդոնացոց իշխանութիւնն»:

Բ. դպրութիւն.

Թագաւորէ Արշակ Քաջ ի  
Բաճ Եւհաստանի լերկի-  
րըն Քուշանաց. կեցեալ  
ամս ծը

Թագաւորեաց ամս ծէ: Յետ  
նորա որդի նորա Արտա-  
շիր՝ ամս լա: Յետ նորա  
թագաւորէ սորին որդի  
Արշակ որ կոչեցաւ մեծ՝  
ամս ծը:

Ասողիկ.

ցաւ ի նմին Արշակայ, զու-  
տեալ տարաւ ի Պարթևս,  
ուստի եւ Սեպերիթէսն (var.  
սիրիպիդէսն) կոչեցաւ... քան-  
զի գերի չողաւ եւ յերկաթս  
կապեալ կայր ի պահեստի:  
Իսկ զնորին որդին զՍելեւկոս,  
որ եկեալ էր զհետ հօրն՝ կա-  
լեալ Արշակայ տանէր գերի  
եւ թագաւորաբար պահէր 1):

Յայնմ ժամանակի Ար-  
շակ Մեծ, թռուս Արշակայ  
Քաջի թագաւորեցոյց զեղ-  
բայր իւր զՎաղարշակ ի  
վերայ աշխարհիս Հայոց:  
Թողու ի նա եւ զամենայն  
աշխարհս արեւմտից, որ ընդ  
մեռամբ նորա իշխանութեանն  
էին հնազանդեալք. եւ ինքն  
չուեալ գնաց ի Բաղ 2):

Բ. դպրութիւն.

Սա

Թագաւորեցոյց

Վաղարշակ իւր զՎաղարշակ  
ի վերայ աշխարհիս Հայոց

1) Եւսերիոսի ժամանակագրութիւն, տղ. Աղեքեա-  
նի, Վենետիկ, 1818, մասն Ա. եր. 349—350. «Եւ խաղար-  
(Գէմէտրիոս արքայ) ի վերայ Արշակայ ի Բարելոն... և  
ի գերութիւն ըմբռնէր զԱրշակայ, զոր ետ տանել ի Պար-  
թևս պահել. ուստի և... սիրիպիդէս (կոչեցաւ), քանզի  
գերի չողաւ, լերկաթս կապեալ կայր ի պահեստի... Իսկ  
զնորին որդի զՍելեւկոս զեկեալ զհետ հօրն... առեալ Ար-  
շակ արքայ տանէր գերի, և թագաւորաբար պահէր»:

2) Խոր. Ա. ր. «Ասիայ, որում և տիրեաց Արշակ» —  
Բ. ր. «Ջնիսիսի և դարեմուտո տալով նմա (Վաղարշակայ)  
սահմանս» — Ա. կը. «Եւ ինքն չուեալ ի Բաճ, հաստատեաց  
զթագաւորութիւնն իւր»:



այս կտորները, Ասողիկից արտագրելիս, թէ Ասողիկը, Բ դպրութիւնից արտագրելիս՝ զանազան չաւելուածներ է մտցրել:

Ասողիկի մօտ եղած աւելի կտորները, ինչպէս ցոյց տուինք ծանօթութիւնների մէջ՝ բոլորը, բացի Արշակ պարթևի ազատամբութեան վերաբերեալ կտորից՝ առնուած են Խորենացուց, այն էլ մեծ մասամբ բառ առ բառ: Ենթադրելով թէ ներկայ խնդրում բանաբաղը Բ դպրութեան հեղինակն է, որ իրան աղբիւր ունի «Մովսէս Խորենացու և Ստ. Տարօնացու»=Ասողիկի պատմութիւնները՝ անհասկանալի կմնար, թէ ինչո՞ւ այդ հեղինակը իւր բնագիր Ասողիկից արտագրելիս՝ զուրս է ձգել վերոյիշեալ կտորները: Պէտք է ենթադրել, թէ նա Ասողիկից արտագրելիս՝ նրան ուսումնասիրել է աղբիւրների նկատմամբ, որոշել է նախապէս, թէ իւր առաջ գրուած հատուածի մէջ որն է Ասողիկի խմբագրութիւնը և որոնք են փոխ առնուած կտորները Խորենացուց և Եւսեբիոսից: ապա, մի զարմանալի ճաշակով կամ հասկացողութեամբ, չտակապէս անց կտորները աւելորդ է համարել և դուրս ձգել իւր արտագրութեան մէջ: Եւսեբեան կտորի մասին դեռ կարող ենք բացատրութիւն տալ.— Անծանօթ հեղինակը, մտադիր չլինելով Եւսեբիոսից օգտուել, և նրանից փոխ առնուած մի մեծ կտոր գտնելով այս հատուածում՝ զուրս է ձգել. բայց ինչ ասենք Խորենացուց փոխ

առնուած կտորների մասին. չէ որ Խորենացին Անծանօթի աղբիւրների մէջ առաջինն է լինուած. ինչո՞ւ ուրեմն այդպիսի խստութեամբ նա արտաքսել է իւր խմբագրութիւնից այն կտորները, որ Ասողիկ բառացի քաղել է Խորենացուց: Գուցէ պատասխանող լինի, թէ Անծանօթը աւելորդ մանրամասնութիւններ է համարել այդ կտորները: Բայց այս պատճառաբանութիւնն էլ հաւանական չէ: Այս հասուածը, ինչպէս տեսանք, Պարթևների ժամանակագրութիւնն է. հնար է արդեօք ենթադրել, որ Անծանօթը, այսպիսի նիւթի մասին գրելիս՝ աւելորդ մանրամասնութիւն համարէր արտագրել Ասողիկից, թէ երբ սկսուեց և երբ վերջացաւ այդ հարստութիւնը. հնար է արդեօք ենթադրել, որ «Յետ մահուանն Աղէքսանդրու» գրող հեղինակը՝ զանց անէր «կ ամի» բառն էլ արտագրել իւր աղբիւրից — «Յետ կ ամի մահուանն Աղէքսանդրու»: Նա աւելորդ մանրամասնութիւն չէ համարում ուրիշ աղբիւրից (նչ Խորենացուց և ոչ Ասողիկից) վերցնել Արշակի 130 տարի ապրելը, բայց աւելորդ է համարում՝ իւր երկու աղբիւրների լիջած ժամանակները Պարթևների սկզբնաւորութեան և վերջնաւու մասին: Եթէ այս միակ երևոյթը լուրջ ուշադրութեան առնենք, առանց կանխակալ կարծիքի՝ ստիպուած պէտք է լինինք եզրակացնել, թէ Անծանօթը չէ, որ լինեալ հատուածը քաղել է Ասողիկից, այլ Ասողիկն է բա-

նաքաղը, որ իւր արտագրած հատուածի մէջ իրան կարևոր թուած լաւելումներն է արել:

Որ իրաւի այսպէս է իրողութիւնը՝ երևում է և մի քանի ուրիշ փաստերից: Համեմատուած հատուածներում պատահում է «Բահլ Ծահաստանի» բառը: Ասողիկ Բահլ քաղաքը լինում է ընդ ամենը 4 անգամ. մի անգամ այստեղ՝ կոչում է նրան Բահլ Ծահաստանի. մի անգամ կոչում է նրան Բահլ Առաւատին (=առաւօտին), ըստ Խորենացու՝ որից արտագրում է. («ի քաղաքին, որ կոչի Բահլ Առաւատին, լերկրին Քուշանացոյ» Խոր. Բ, ք. — «ի քաղաքին, որ կոչի Բահլ Առաւատին լերկրին Քուշանացոյ» Ասող. եր 32): Մի անգամ կոչում է նրան պարզապէս Բահլ՝ դարձեալ ըստ Խորենացու, որից արտագրում է. («Նւ ինքն չուեալ գնաց ի Բահլ» Խոր. Բ. կը. = Աս. եր. 30): Վերջապէս մի անգամ էլ, նորից պարզապէս Բահլ՝ ըստ Սեբէոսի, որից արտագրում է. («Բռնութեամբ ունէր զԲահլ և զամենայն երկիրն Քուշանացոյ» Սեբէոս, եր. 30. — «Բռնութեամբ ունէր զԲահլ և զամենայն երկիրն Քուշանացոյ» Ասող. եր. 112): Արդ, իրտեղից Ասողիկ այս մի տեղում ունի «Բահլ Ծահաստանի», երբ այս բառը նա ուրիշ ոչ մի անգամ չէ գործածում և ոչ էլ երբէք Խորենացին: Պարզ չէ, որ ինչպէս Ասողիկ միւս երեք զէպքերում հաւատարիմ կերպով արտագրել է իւր բնագիրներին՝ այստեղ նույնպէս արտագրել է Բ զպրութիւնից: Իսկ

Ք զպրութեան մէջ այս «Բահլ Ծահաստանի»-ն շատ հասկանալի է, որի մասին քիչ լետու:

Այս հատուածից լետու անմիջապէս Ասողիկ նոր զլուխ սկսելով՝ գրում է այսպէս. «Բայց մեք անդրէն ի կարգն առաջին դարձցուք: Որպէս ասացաք՝ լետ կ ամի մահուանն Աղէքսանդրի թագաւորէ Պարթեաց Արշակ Քաջ ի քաղաքին, որ կոչի Բահլ Առաւատին լերկրին Քուշանաց: Նւ լետ սորա որդի սորին Արտաշէս ամս լա» և այլն: Սա — բառացի արտագրութիւն է Խորենացուց, Բ, ք, ինչպէս և շարունակութիւնը: Բայց միևնույն ժամանակ սա կրկնութիւն է վերոյիշեալ հատուածի սկզբին, փոխանակելով Բահլ Ծահաստանի անունը Բահլ Առաւատին անունով ըստ Խորենացու: Արդ, եթէ լիշեալ հատուածը Ասողիկը ինքն էր խմբագրել ինքնուրոյն կերպով, ինչո՞ւ պէտք է նա իւր մէկ անգամ ասածը նորից կրկնէր՝ ըստ Խորենացու: Պարզ չէ, որ այն հատուածը նա արտագրել է ուրիշ աղբիւրից, իսկ այժմ սկսում է արտագրել Խորենացուց, բոլորովին հաւատարիմ իւր սովորութեան՝ որ նրա պատմութեան մէջ ուրիշ տեղեր էլ է նկատուում:

Այս հատուածում Ասողիկի մօտ երկու տեղ նկատուում են ոճի անհարթութիւններ, որոնք լայտնապէս մատնում են Ասողիկի բանաքաղութիւնը: Ք զպրութիւնն ունի. «Յետ նորա թագաւորէ նորին որդի Արշակ, որ կոչեցաւ մեծ՝ ամս ծր: Սա

թագաւորեցոյց զեղբայր իւր զՎաղարշակ) և ալլնորտեղ սա զերանունը միանգամայն ընտանի կերպով գործ է ածուած՝ անմիջապէս առաջ լիշուած Արշակ մեծի համար: Իսկ Ասողիկը Արշակ մեծի անունն արտագրելիս՝ կարեւոր է համարել այստեղ զետեղել Արշակ մեծի մղած պատերազմները Սելևկեանների դէմ, առնելով Նւսերթոսից. այս չաւելուած հատուածը վերջանում է այսպէս. «զնորին որդի .. կալեալ Արշակայ տանէր գերի և թագաւորաբար պահէր».— Ապա անմիջապէս գրում է. «Յայնմ ժամանակի Արշակ մեծ, Յոռն Արշակայ քոջի թագաւորեցոյց զեղբայր իւր զՎաղարշակ) և ալլնորտեղ «Արշակ մեծ, թոռն Արշակայ քաջի» ականջ ծակելու չափ անքնական և անտեղի է, կարծես այս տիտղոսաւոր անունը հակադրուած է՝ անմիջապէս առաջ լիշուած «Արշակայ», իբրև մի ուրիշ անձ, այն-ինչ զրանք երկուսն էլ նոյն անձնաւորութիւնն են նշանակում: Այս խորթ գործածութիւնը սակայն զիւրաւ բացատրուում է. երբ Ասողիկը իւր աղբիւրի մէջ աւելացրել է հատուածը Նւսերթոսից՝ սրանով խղուել է կապը աղբիւրի «Արշակ մեծ՝ ամս ծբ. սա թագաւորեցոյց» խօսքի մէջ. ալլես սա բառն, Ասողիկի կարծիքով, անտեղի կլինէր, և նա զերանուան տեղ գործ է ածել արդէն Արշակ անունը, և շփոթութիւն չծագեցնելու համար՝ շեշտել է նրանք Արշակը լինելը. բայց այս գործածութիւնը, ինչպէս ասացինք՝ ոճի ան-

հարթութիւն է առաջացրել, և մատնում է, որ Նւսերեան կտորը նոր չաւելուած է հին սկզբնագրի մէջ.— Նրկորդ անտեղութիւնը ոճի մէջ՝ պատահում է ներքեր: Բ դպրութիւնն ասում է. «Ձսասպանեալ Ստահրացուն Արտաշրի... երործ զտէրութիւնն Պահլաւաց, սկսեալ լերեսուն ամի Փիլիպիոս Պտղմէոսի», են: Այս խօսքում Ասողիկը հարկ է համարել, Խորենացու վկայութեան համեմատ, աւելցնել Պարթևների տէրութեան բարձման տարին. ուստի նա գրում է. «Ձսասպանեալ Ստահրացուն Արտաշրի... երարձ զտէրութիւնն Պահլաւաց, յերկորդ ամիս Փիլիպպայ Յագաւորին Հոռմայ: Աստանոր զտղարէ Յագաւորութիւնն Պարթևաց յաղգէն Պահլաւաց, սկսեալ լերեսուն ամի Փիլադելփոսի Պտղմէոսի»... Դարձեալ նկատուում է, որ Փիլիպպոսի տարին նորամուծ չաւելուած է, որի պատճառով խղուել է կապը բնագրի «երարձ զտէրութիւնն Պահլաւաց, սկսեալ...» խօսքի մէջ: Ասողիկ ստիպուել է նոր նախադասութիւն կազմել, բայց անչափ կերպով, որովհետև կրկնաբանութեան մէջ է ընկել. քիչ վերեր ասում է. «երարձ զթագաւորութիւնն Պահլաւաց», այժմ նորից ասում է. «զաղարէ թագաւորութիւնն Պարթևաց յաղգէ Պահլաւաց»:

Ինչպէս վերն լիշեցինք և լետոյ պարզ ցոյց կտանք՝ Բ դպրութեան 2, 3 և 4 մասերը ոչ Խորենացուց են առնուած և ոչ Ասողիկից. արդ էթէ.

այս առաջին մասն Անծանօթ հեղինակն ուղղակի առած լինէր Ասողիկից՝ այն ժամանակ Բ զպրութեան վերնագիրն ու բովանդակութիւնը կհակասէին միմեանց, որովհետև վերնագրում Մ. Խորենացին լիշուած է իբրև առաջին աղբիւր, այն-ինչ զպրութեան մէջ նա իբրև աղբիւր գործածուած չէր լինի:

Այս բոլոր անտեղութիւնները կվերանան և ամեն ինչ ընական կդառնայ՝ եթէ հակառակ ենթադրութիւնն անենք, այն է, որ Պարթևների ժամանակագրութեան հատուածում՝ Բ զպրութիւնը սկզբնապիւր է, իսկ Ասողիկը արտագրել է նրանից՝ անելով իրան կարևոր թուած լաւերուածները: (Յաջտնի է, որ Ասողիկը իւր աղբիւրների շարքում լիշուած է Սեբէոսի պատմութիւնը և իւր աշխատութեան մէջ ամբողջ երեսներ է արտապրում նրանից): Եւ չիրաւի, Բ զպրութեան մէջ այս հատուածը միանգամայն ընական է և իւր տեղում, սերտ կերպով կապուած Ա զպրութեան և Սեբէոսի պատմութեան հետ՝ ինչպէս գրքի մի գլուխը նախընթաց և չաջորդ գլուխների հետ: Ա զպրութեան մէջ Անծանօթ հեղինակը պատմում է Պարթևների ապստամբութիւնը և զնում է Պարթևների ցանկը ըստ «ժամանակագրին»։ այս զպրութեան մէջ նա նախ կարևոր է համարում նոյն Պարթևների ցանկը, շատ տարբեր առաջինից՝ դնել ըստ նոր, հաւաստի և ճշմարիտ մատենագիրների. որից լետոյ անցնում է

Մասանեանների ժամանակագրութեան: Առաջին զպրութեան մէջ լիշել է, որ Պարթևների տէրութեան սկիզբն եղաւ Աղեքսանդրի 61-րդ տարում, ուստի այս զպրութեան մէջ այլ ևս չէ կրկնում: «Բահլ Շահաստանի» անունը բացատրում է լիտվին. այդ անունը Սեբէոսը շատ է սիրում և չաճախ գործ է ածում թէ Ա զպրութեան և թէ բուն պատմութեան մէջ: Նոյնպէս Արշակի 130 տարի ապրելը բացատրում է Ա զպրութեամբ, որտեղ նոյնպէս լիշուած է: Բացատրում է և «Պարթև և Պահլաւ» անունների զուգադրութիւնը, որ Ասողիկի մէջ ուրիշ տեղ չէ պատահում, իսկ Սեբէոսի մէջ գործ է ածուած և ուրիշ տեղերում—«եկն ասպետն մեծ, պարթևն և պահլաւն» (եր. 34). «սպան սա զասպարապետն մեծ, զպարթևն և զպահլաւն» (եր. 36):

Ուրեմն Բ զպրութեան այս առաջին մասից հեռացնելով Ասողիկի անունն իբրև աղբիւրի՝ պէտք է, համաձայն վերնագրին, ենթադրենք, որ նա կաղմուած պէտք է լինի ըստ Մ. Խորենացու և կամ Մտ. Տարօնացու (ոչ Ասողիկի): Այս տեսակետից քննելով՝ մենք արդարև տեսնում ենք, որ այս մասը, Պարթևների ժամանակագրութիւնը, քաղուած է Մովսէս Խորենացու պատմութիւնից: Այս բանում համոզուելու համար նորից բերենք այդ հատուածը՝ զէմը լօղուած առ լօղուած նշանակելով աղբիւրները:—

Բ դպրութիւն.

Աղբիւրներ.

Չսա սպանեալ Ստա-  
հրացւոյն Արտաշրի որ-  
դու Սասանայ, երարձ  
զտէրութիւնն Պահլա-  
ւաց

սկսեալ լերեսուն ամի  
թագաւորութեանն Փի-  
լիբելիոս Պտղոմէոսի,

կալեալ նոցա ընդ ա-  
մենայն ամս նծէ:

Յետ որոյ նուաճեալ  
Ստարհացւոյն Արտա-  
շրի որդու Սասանայ  
զամենայն արիս և զա-  
նարիս և զբազումս ի  
նոյն ազգէ թագաւո-  
րութեան Պարթևաց և  
պահլակաց՝ թագաւո-  
րէ ինքն.

և լետ նորա պալա-

լիսուն. Արտաւան ամս երեսուն  
եւ մի»:

Խոր. Բ, ԿԹ. — «Չսա սպա-  
նեալ ստահրացւոյն Արտաշրի  
որդոյն Սասանայ, բառնալով  
զթագաւորութիւնն Պարթևաց»:

Խոր. Բ, ԿԸ. — «Չարմք (Ար-  
շակայ մեծի) պահլաք ան-  
ուանեցան»:

Նւս. Ժկմգրութիւն, Բ, եր.  
232. Պտղոմէոս Փիլոզոքե-  
փոսի լղ տնրու հանդէպ զը-  
նում է. «Պարթևք ապստամ-  
բեցին ի մակեդոնացւոց, և  
ի նոցանէ թագաւորեաց Ար-  
շակ»:

Թագաւորների տարիների  
զումարումից (=456):

Խոր. Բ, ԿԹ. — «Հանելով  
(Արտաշրի) ի նոցանէ (ի  
Պարթևաց) զաշխարհն ժա-  
ռանգութեան»:

Խոր. Բ, հա. — «Երկու ցեղք  
Պահլաւին, որ Ստղանապետդ  
և Սուրենեանի պահլաւն ան-  
ուանին... կամաւ չանձն ա-  
ռին թագաւորել Արտաշրի:  
Այլ (տուն) Կարն Պահլաւին  
ընդդիմացան պատերազմաւ»:  
(Գուցէ Ստ. Տարօնացին,

Բ դպրութիւն.

Աղբիւրներ.

զառք նորին զնոյն ձև  
աւրինակի:

գուցէ և առանց աղբիւրի,  
ընդհանուր տեղեկութիւննե-  
րի հիման վրայ):

Այս համեմատութիւնից երևում է, որ Բ դը-  
պրութեան Պարթևների թագաւորների ցանկի հա-  
մար իբրև գլխաւոր և տիրապետող աղբիւր է ծա-  
ռալել Մ. Խորենացու պատմութիւնը, որի զանա-  
զան տեղերից (Գիրք Բ, զԼ Բ, ԿԸ, ԿԹ, հա) հեղի-  
նակը խմբագրել է միայն ժամանակագրական նիւ-  
թը, բաց թողնելով պատմական միւս տեղեկու-  
թիւնները: Խորենացու այն ցուցումը, թէ Արշակ  
մեծը Հալաստանի վրայ թագաւոր կարգեց իւր եղ-  
բոր Վաղարշակին, և այս ժամանակից բաժանուեցին  
թագաւորական երկու տոհմերը, Պարսկաստանում  
կոչուեցին Պահլաւ, իսկ Հալաստանում Արշակու-  
նի — Բ դպրութեան հեղինակը խմբագրել է ինքն-  
ուրոյնբար, աւելի որոշ կերպով բացատրելով  
Խորենացու միտքը. բովանդակութեան կողմից նը-  
րանք բոլորովին համաձայն են միմեանց, ինչպէս  
և «Պահլաւ» և «Արշակունի» բառերի զուգարու-  
թեամբ:

Թողնելով թուերի մի քանի մանր տարբե-  
րութիւնները, որոնք կարող են հետեանք լինել  
աղաւաղութեան Խորենացու կամ Բ դպրութեան  
հին ձեռագիրների մէջ՝ նկատենք մի մեծ տար-

բերութիւնը՝ առաջին երկու պարթեաների տարի-  
ների մէջ: Ըստ Բ զպրութեան՝ Արշակ քաջ թա-  
գաւորում է 57 տարի, ապա որդին Արտաշէրը՝  
31 տարի. իսկ ըստ Խորենացու՝ Արշակ քաջ թա-  
գաւորում է 31 տարի, ապա որդին Արտաշէսը՝ 26  
տարի: Բայց նկատելու է, որ Բ զպրութիւնը քիչ  
լետույ, դարձեալ տալով Արշակ քաջին 57 տարի՝  
նրանից քիչ չէ չիշում Արտաշէրին, այլ անմիջա-  
պէս Արշակ մեծին, այնպէս որ այս երկրորդ ան-  
գամ Արշակ քաջի 57 տարին բովանդակում է  
Խորենացու Արշակ քաջի և Արտաշէսի տարիների  
գումարը—31+26: Նկատելու է նոյնպէս, որ Բ  
զպրութեան մէջ պարթե թագաւորների տարիների  
գումարը, 457, այն ժամանակ համապատասխան  
կլինի իւրաքանչիւր թագաւորի տարիների գումար-  
ին՝ եթէ Արշակ քաջին և Արտաշէրին տանք այն  
տարիները՝ որ ունի Խորենացին, կամ եթէ ջըն-  
ջենք Արտաշէրի անունը իւր թագաւորութեան 31  
տարիով: Ուրեմն Բ զպրութեան մէջ Արշակ քաջի  
57 տարին պայմանաւոր կերպով պէտք է ընդու-  
նել, նոյն իսկ Բ զպրութեան հաշուով, այսինքն  
ընդունելով դրա մէջ թէ Արշակի և թէ Արտաշէրի  
թագաւորութեան տարիները, համաձայն Խորենա-  
ցու տուած թուերին:

Ուրեմն այտեղ տարբերութիւնը միայն ար-  
տաքին է. ներքուստ՝ Բ զպրութիւնը դարձեալ  
համաձայն է Խորենացուն, երի չնորհիւ միայն կա-

քելի է բացատրել Բ զպրութեան մէջ Արշակ քա-  
ջի 57 տարին, Արտաշէրի անունը մի անգամ չիշելը  
և մի անգամ զանց անելը, ինչպէս և Պարթեանե-  
րի տեղութեան գումարը <sup>1)</sup>:

Բ զպրութեան միւս, երկրորդական աղբւր-  
ները Պարթեաների ժամանակագրութեան համար,  
ինչպէս են Ա զպրութիւնը, Եւսեբիոսի ժամանա-  
կագրութիւնը (կամ անմիջապէս, կամ Ստեփանոս  
Տարօնացու միջնորդութեամբ), մեզ համար կա-  
րեւորութիւն չունին: Մեզ համար հետաքրքիրն  
այն էր, թէ Բ զպրութեան հեղինակն այս մասում  
չիրաւի օգտուել է Մովսէս Խորենացու պատմու-  
թիւնից, ինչպէս չայտնել է վերնագրում, և համե-  
մատութիւնից տեսանք, որ անտարակոյս օգտուել  
է: Ինչպէս առաջ առիթ ունեցանք չիշելու՝ Բ.  
Պատկանեանն էլ, Գ. Խալաթեանցն էլ ընդունել  
են, որ Բ զպրութեան համար իբրև աղբւր է ծա-  
ռայել և Խորենացին:

Որպէտղի աւելի շօշափելի դառնայ համերաշ-  
խութիւնը Բ զպրութեան և Խորենացու մէջ և  
բացատրուի, թէ ինչու Բ զպրութեան հեղինակը  
հարկ է համարել Պարթեաների ցանկը երկրորդ ան-

<sup>1)</sup> Բ զպրութեան «57» տարուայ մասին, որ տրուած  
է Արշակ քաջին՝ տես Գուաշմիտ, վերոյիշեալ հատուած.  
Պատկանեան, Նիւթեր հայերէն բառարանի համար, տետր  
Բ, էր. 62—64. Ստողիկ, ծանօթ. 39, էր. 316—317:

գամ կրկնել, մինչ Ա. դպրութեան մէջ մի անգամ գրել էր՝ զնում ենք այստեղ Պարթևները ցանկը ըստ Ա. և Բ. դպրութեան և Խորենացու:

Ա. դպրութիւն. Խորենացի. Բ. դպրութիւն.

Արշակ մեծ 56 տ.	Արշակ քաջ 31 տ.	Արշակ Քաջ 57 տ.	
—	Արտաշէս 26 ,, (Արտաշիր 31 ,,)		
Արշակ 70 ,,	Արշակ մեծ 53 ,,	Արշակ մեծ 52 ,,	
Աշնաշ 32 ,,	Արշական 30 ,,	Արշական 30 ,,	
—	Արշանակ 31 ,,	Արշանակ 32 ,,	
Արշէն 22 ,,	Արշէզ 20 ,,	Արշէս 20 ,,	
Արշաւիր 45 ,,	Արշաւիր 46 ,,	Արշաւիր 46 ,,	
Արտաշէս 34 ,,	Արտաշէս 34 ,,	Արտաշէս 31 ,,	
Գարեհ 30 ,,	Գարեհ 30 ,,	Գարեհ 30 ,,	
Արշակ 17 ,,	Արշակ 19 ,,	Արշակ 19 ,,	
Աստաշիր 46 ,,	Արտաշէս 20 ,,	Արտաշէս 20 ,,	
Պերոզ 64 ,,	Պերոզ 34(33),,	Պերոզ 33 ,,	
Վաղարշակ 50 ,,	Վաղարշ 50 ,,	Վաղարշակ 50 ,,	
Արտաւան 36 ,,	Արտաւան 31 ,,	Արտաւան 36 ,,	
Գումար 502	Գում. 455(454)	Գում. «նծէ»(456)	

Պէտք է դիտնալ, որ Ա. դպրութեան մէջ թուերի ազաւաղութիւն չկայ, կամ ոչ աւելի է քան 3 տարուան. որովհետեւ նա թագաւորները զումարը զնում է 573 (չհզ) տարի, հաշուելով Արշակ մեծի ոչ միայն թագաւորութեան, այլ ամբողջ կեանքի տարիները—130. և իբրաւի, Արշակ մեծի

56 տարուայ տեղ զնելով 130 տարի՝ կտտանանք 576 տարի (չհզ), որ համաձայնում է բնագրի տուած զումարին (չհզ—փոխանակ չհզ, գ և զ գրերի շիթթութիւնից առաջ եկած), կամ զանազանում է 3 տարով:

Ա. դպրութեան և Խորենացու մէջ, բացի Պարթև թագաւորների անունների և տարիների զանազանութիւնից՝ կան ուրիշ, աւելի մեծ տարբերութիւններ. ըստ Ա. դպրութեան՝ առաջին պարթև թագաւորն էր, որ Հալաստանի վրայ իւր որդուն թագաւոր նշանակեց, իսկ ըստ Խորենացու՝ երրորդ պարթևն էր, որ իւր եղբօրը նշանակեց. առաջին հաջ Արշակունի թագաւորն ըստ Ա. դպրութեան կոչում էր Արշակ փոքր, իսկ ըստ Խորենացու՝ Վաղարշակ:

Այս և ուրիշ անհաշտելի տարբերութիւնների պատճառով է, որ Ա. դպրութեան հեղինակն, առաջին անգամ զնելով Պարթևների ցանկը ըստ վաւերական «Ազաթանդեղեան արձանագրութեան», կամ մանաւանդ ըստ «Մարաբասեան մատեանին»՝ կարիք է զգացել նոյն ցանկը «երկրորդել ի պատմագրէն Մովսիսի Խորենացու, հաւաստի և ճշմարիտ մատենագրէն»:

Ուրեմն Բ. դպրութեան առաջին մասի, Պարթևների ժամանակագրութեան քննութիւնից գալիս ենք այս եղրակացութեան, թէ նրա համար

զլխաւոր, տիրապետող աղբիւր է եղել Խորենացու պատմութիւնը. իսկ Ասողիկը ոչ թէ աղբիւր է նրա համար, այլ նրանից օգտուել է իբրև աղբիւրից:

Երկրորդ մասի, Մամիկոնեանների ծագման հատուածի վերաբերութեամբ, կարիք չկայ երկար խօսելու: Բաւական է այսքանը որոշել, թէ այստեղ նոյնպէս աղբիւր չէ Ասողիկը, որովհետև սա Մամիկոնեանների ծագման մասին ոչինչ չէ պատմում, բացի մի անգամ «ճենաղնեան» Մամիկոնին վիշելուց (եր. 61) ըստ Խորենացու (Բ, կդ): Իսկ թէ այս հատուածը, չատկապէս առաջին երեք տողը, Խորենացուն հետևողութեամբ է գրել հեղինակը, թէ ուրիշ, մեզ անծանօթ (Ստ. Տարօնացու) մատենագրի՝ մեզ համար կարևորութիւն չունի:

Չանք Բ դպրութեան երրորդ և չորրորդ մասերին, այսինքն եռանուն և երկանուն կանոններին, և բաղդատենք նրանց՝ Խորենացու և Ասողիկի հետ, տեսնելու համար, թէ արդեօք Խորենացին և Ասողիկը (կարծեցեալ Ստ. Տարօնացին) աղբիւր եղել են այս կանոնների համար թէ ոչ: Պարզութեան համար՝ Բ դպրութեան ժամանակադրական նիւթը բաժանենք ըստ աղբութիւնների, Սասանեան, Բիւզանդական և Արշակունի թաղաւորների:

1) Սասանեանները.

Բ դպրութիւն.	Ասողիկ.	Խորենացի.
Արտաշիր որդի Սասանայ 50 տ.	Արտաշիր 40 տ.	Արտաշիր (?)
Շապուհ որդի Արտաշրի 73 ,,	Շապուհ 53(?)	Շապուհ որդի Արտաշրի (?)
Ներսէս որդի Շապհոյ 9 ,,	Ներսէս 14 ,,	Ներսէս 9 տ. (Բ, ձթ)
Որամաղ որդի Շապհոյ 4 ,,	Որմիլդդ 3 ,,	Որմիլդդ 3 տ. (Բ, ձթ)
Շապուհ որդի Որամաղդայ 70(74)	Շապուհ 58 ,,	Շապուհ (?)
Արտաշիր որդի Շապհոյ 4 ,,	Արտաշիր 3 ,,	Արտաշիր որդի Շապհոյ 5 տ. (Գ, ծա)
Վ.ռամ 11 ,,	Վ.ռամ 11 ,,	Վ.ռամ, որ և Կըրման 10 (Գ, ծա)
Յազկերտ որդի Վ.ռամայ 21 ,,	Յազկերտ 20(21?) ,,	Վ.ռամ Բ 21 տ. (Գ, կէ)
Վ.ռամ որդի Յազկերտի 22 ,,	—	—
Յազկերտ որդի Վ.ռամայ 19 ,,	Յազկերտ-19 ,,	Յազկերտ (?)
Վ.աղարշ որդի Յազկերտի 4 ,,	Պերոզ 27 ,,	Շ ա ր ու լ
Պերոզ 48 ,,	Վ.աղարշ 4 ,,	ն ա կ ու լ
Ջամասպ 8 ,,	Կաւատ 11 ,,	թ իւն
	Ջամասպ 4(2?)	չ կ ա ՚:
Կաւատ 41 ,,	Կաւատ 31(41?)	
Խոսրով որդի Կաւատայ 47(48)	Խոսրով 48(47)	

Բ դպրութիւն.	Աստղիկ.	Խորենացի.
Որմիզդ որդի	Որմիզդ 12	
Խոսրովու 12	»	
Խոսրով որդի	Խոսրով (?)	
Որմիզդի	37	
Կաւատ որդի	Կաւատ 6 ամիս	
Խոսրովու 1	»	
Արտաշիր 3	»	Արտաշիր որդի
Բքոր դուտոր	Կաւատայ (?)	
Խոսրովու 2	—	
Յազկերտ 20	—	
<hr/>	<hr/>	
Գումար, ըստ	Գումար, ըստ	
բնագրին 532	բնագրին 386	
Տարիների	Տարիների	
հաշուով 510	հաշուով 382	
(Նկամուտ թագաւորներ՝ Խոռեմ, Խոռուս Որմիզդ, Խոսրով, Որմիզդ):	(Կարծ ժամանակեայ՝ Խոռեմ, Բորն, Յազկերտ):	

2) Յունաց կայսրները.

Բ դպրութիւն.	Աստղիկ.	Խորենացի.
(Աւր)եղիանոս 4 տ.	Աւրեղիանոս 6 տ	Աւրեղիանոս (քիչ ժաման., Բ, հղ)
—	—	Կիւնտոս } ամուս-
Տերենտիոս 6 ամիս	Տակիտոս 6ամ. Փլորիանոս 88 օր	Տակիտոս } կանօք, Բ, հղ
Պրորոս 6 տ.	Պառոս 6տ.	Պառոսու?

Բ դպրութիւն.	Աստղիկ.	Խորենացի.
Վարոս, Կարեն, Նոմերիանոս 7	Կարոս 2	Կարոս, Կարինոս, Նոմեռիանոս? Բ, հթ
Գիոկղետիանոս 22	Գիոկղետիանոս 20	Գիոկղետիանոս?
Կոստանդիանոս 9(10)	Կոստանդին 32	Կոստանդիանոս?
Մաքսիմիանոս } 18	—	—
Փալիանոս } 18	—	—
Կոստանդէս 17	Կոստանդոս	Կոստանդոս
Կոստանդիանոս 32	Կոստաս } 24	23 տ. (Գ, ժբ)
Կոստանդիաս, Կոստաս 14	Կոստանդիանոս } 24	
Յուլիանոս 2	Յուլիանոս 2	Յուլիանոս (?)
—	Յորիանոս 1	Յորիանոս սաւաւուրս, (Գ, ժէ)
Վաղենտիանոս, Վաղէս 13	Վաղենտիանոս, Վաղէս 11	Վաղենտիանոս (?)
—	—	Վաղէս (?)
Գրատիանոս 17	Գրատիանոս 5	
Թէոդոս մեծ 19	Թէոդոս 15	Թէոդոս մեծ (?)
Արկաղէոս 19	Արկաղէոս (Ոնորիոս) 24	Արկաղիոս (և Ոնորիոս ի Հաուլմ)
Ոնորէոս և ալլն 22	և ալլն	Թէոդոս փոքր? Չկայ շարունակութ.

3) Հայ Արշակունիները.

Բ դպրութիւն.	Ատողիկ.	Խորենացի.
Խոսրով 51 տ.	Խոսրով 48 տ. (Արտաշէր 26 տ.)	Խոսրով 48 տ. (Արտաշէր 26 տ.) (Շապուհ 1 տ.)
—	—	—
Տրդատ 70 տ.	Տրդատ 56 տ.	Տրդատ 56 տ.
Խոսրով 17 տ.	Խոսրով 9 տ.	Խոսրով 9 տ.
Տիրան 12 տ.	Տիրան (?)	Տիրան 11 տ.
Արշակ 49 տ. (կամ 20?) (Շապուհ 12 տ.)	Արշակ 7 տ. (է, փոխ. է?)	Արշակ 30 տ.
Պապ 13 տ.	Պապ 7 տ.	Պապ 7 տ.
Վարազդատ 6 տ.	Վարազդատ 4 տ.	Վարազդատ 4 տ.
Արշակ, Վաղարշակ 5 տ.	Արշակ, Վաղարշակ 5 տ.	Արշակ, Վաղարշակ (?)
Խոսրով 3 տ.	Խոսրով 3 տ.	Խոսրով 7 <sup>1</sup> / <sub>2</sub> տ.
Վ. Բամշապուհ 8 տ.	Վ. Բամշապուհ 15 տ.	Վ. Բամշապուհ 21 տ.
	Խոսրով (կըր կին) 1 տ. (Շապուհ 11 տ.)	Խոսրով (կըր կին) 1 տ. (Շապուհ 4 տ.)
	Արտաշէս (Արտաշէր) 6 տ.	Արտաշէս (Արտաշէր) 6 տ.
Տեղութիւն «405» տ.	Տեղութիւն «559» տ.	Տեղութիւն չկայ:

Այս համեմատական ցուցակները իրանք իրանց խօսում են: Սասանեանների ցանկում Բ դը-

պրութիւնը անհամեմատ լիակատար է քան Ատողիկն և Խորենացին (որ նրանց հասցնում է մինչև Յազկերտ Ա). Բ դպրութիւնը քիչ բացառութեամբ նշանակում է թագաւորներին (որդի ի հօրէն), այն-ինչ Ատողիկը այս չունի, իսկ Խորենացին՝ միայն երկուսի համար. Բ դպրութիւնը գիտէ Սասանեանների վերջին թագաւորներին, և ճիշտ կերպով նշանակում է, որ նրանց հարստութիւնը վերջացաւ Յազկերտի 20 ուղ տարում. այն-ինչ Ատողիկը նրանց թագաւորութեան բարձումը սխալ դնում է Արտաշէր ժամանակ, որի տարիներն էլ չէ լիշում. իսկ այնուհետև Խոռեմին, Բորին և Յազկերտին ամիսներով թագաւորած է նշանակում, որ ճիշտ չէ Յազկերտի վերաբերութեամբ: Բացի սրանից՝ թագաւորների անունների և լաջորդութեան կարգի մէջ զգալի զանազանութիւն կայ Բ դպրութեան և Ատողիկի մէջ, (Խորենացին այս մասերը ամենեին չունի). իսկ թագաւորների տարիների մէջ 12 անգամ Բ դըպրութիւնը չէ համաձայնում ոչ Խորենացուն և ոչ Ատողիկին, իսկ 11 անգամ՝ մէկին կամ միւսին: Սասանեան հարստութեան տեղութիւնը Բ դպրութիւնը դնում է «532» տարի. իսկ Ատողիկը «386». (Խորենացին չունի):—Այս հիման վրայ ստիպուած ենք եզրակացնելու, թէ Բ դպրութեան Սասանեանների ցանկը չէր կարող կազմուած լինել Խորենացու և Ատողիկի աղբիւրներից:

Նոյն եզրակացութեան ենք գալիս՝ քննելով

Բիւզանդական կայսրների ցանկը, որտեղ զանազանութիւնը թէ կայսրների անունների և թէ նրանց տարիների մէջ շատ աւելի մեծ է, այնպէս որ Բ դպրութեան և Ասողիկի մէջ համաձայնութիւնը տարիների նկատմամբ՝ բացառութիւն է կազմում, իսկ անհամաձայնութիւնը՝ սովորական կարգ: Նոյն երևոյթն է նկատուում և շարունակութեան մէջ, որը համառօտութեան համար մէջ չը բերինք: Եւ առհասարակ աչքի է ընկնում, որ Ասողիկի մօտ Բիւզանդիան կայսրների ցուցակը շատ աւելի ճիշտ է քան Բ դպրութեան մէջ՝ սկզբներում. իսկ վերջը, ընդհակառակը, Բ դպրութիւնը բոլորովին ճիշտ է, Ասողիկից աւելի: Այս տարբերակ երևոյթը վետոյ կպարզուի: Ուրեմն Բիւզանդական կայսրների ցանկի համար էլ պէտք է եզրակացնենք, որ Խորենացին և Ասողիկը չեն Բ դպրութեան աղբիւրները:

Նոյնպիսի խոշոր տարբերութիւններ նկատուում են և հայ Արշակունիների ցանկում: Այստեղ Ասողիկի աղբիւրն է Խորենացին. իսկ Բ դպրութիւնը երկուսից էլ սաստիկ զանազանուում է. ութ թագաւորների տարիներ Բ դպրութիւնը տարբեր է դնում երկուսից էլ, միայն երկու թագաւորի տարիներ համաձայն են՝ մէկը Խորենացուն, միւսը Ասողիկին: Բ դպրութիւնը վերջին հայ Արշակունի թագաւոր է համարում Վռամշապուհին, հակառակ Խորենացուն, Ասողիկին և բոլոր մեզ ծանօթ հայ

պատմագիրներին. (այստեղ բնագրի մէջ պակասութիւն չկայ. նախորդ և լաջորդ համաժամանակ թուերը ցույց են տալիս, որ շրաւի Բ դպրութեան հեղինակն այսպէս էլ գրել է): Նա Արշակունի հարստութեան տևողութիւնը դնում է 405 տարի և վերջացած է համարում Յազկերտի երկրորդ և Ոնորխոսի երկրորդ տարում. այն-ինչ Ասողիկը նրանց հարստութեան տևողութիւնը հաշուում է 559 տարի և վերջացած է համարում Թէոդոսի 24-րդ տարում: (Խորենացին տևողութիւնը չունի, իսկ վերջացած է համարում Վռամի և Թէոդոսի ժամանակ): Այստեղ էլ ուրեմն գալիս ենք նոյն եզրակացութեան— Բ դպրութիւնը Արշակունիների ցանկը չէ կազմել ըստ Խորենացու և Ասողիկի:

Բայց այս բաւական չէ: Կայ մի ուրիշ հանգամանք, որ միանգամայն անկարելի է դարձնում ենթադրութիւնը՝ թէ Խորենացին և Ասողիկը աղբիւր եղած լինին Բ դպրութեան եռանուն և երկանուն կանոնների համար: Բ դպրութիւնը այստեղ ներկայացնում է, ինչպէս չայտնի է՝ թագաւորների ժամանակակիցութիւն (սինխրոնիզմ), այն-ինչ ոչ Խորենացին և ոչ Ասողիկը սինխրոնիկ ցանկեր չունին, և նրանց տուած տարիներից չէ կարելի կազմել սինխրոնիզմներ: Խորենացու մօտ երբեմն դէպքով չիւշուում են համաժամանակ թագաւորներ, բայց երբ նրա այս ցուցումները հաւաքում աւ համեմատում ենք Բ դպրութեան հետ՝ աննկա-

րադրելի խառնակութիւն է առաջ է գալիս. նրանք անմիաբան են միմեանց և հակասող: Օրինակ, ըստ Խոր. (Բ, հր) Սասանեան հարստութիւնն սկսուեց Փիլիպպոս կայսեր ժամանակ (244—249). իսկ ըստ Բ զպր. Աւրեղիանոս կայսեր երրորդ տարին (272). ըստ Խոր. (Գ, ք) Որմզդի երկրորդ տարին համապատասխանում է Կոստանդի 8-րդ և Խոսրովի առաջին տարուն, իսկ ըստ Բ զպր. Խոսրով ժամանակակից չէ Կոստանդին, և Որմզդի երկրորդ տարին համապատասխանում է Կոստանդիասի և Կոստասի 5-րդ տարուն. ըստ Խոր. (Գ, ժա) Տիրանի առաջին տարին համապատասխանում է Կոստանդիանոսի որդի Կոստանդինի 17-րդ տարուն, իսկ ըստ Բ զպր. նա համապատասխանում է Կոստանդիանոսի 22-րդ տարուն ըստ Խոր. (Գ, ժբ) Շապուհ Որմզդեան ժամանակակից է Տիրանին, իսկ ըստ Բ զպր. Շապուհը թագաւորում է Տիրանի որդի Արշակի 6-րդ տարում. ըստ Խոր. (Գ, ժգ) Յուլիանոսը ժամանակակից է Տիրանին, իսկ ըստ Բ զպր. Յուլիանոսը թագաւորում է Տիրանի որդի Արշակի 24-րդ տարում. և այլ ալոպիսի եօթն զուգադրութիւններ, որտեղ Բ զպրութիւնը հակասում է Խորենացուն: Երկու զուգադրութեան մէջ միայն համաձայն են Բ զպրութիւնն ու Խորենացին — Արշակ, Վաղենտիանոս և Վաղէս ժամանակակից են Շապուհ երկայնակեացին (որ թագաւորեց 70 տարի, այնպէս որ այսքան տարիների ընթացքում դժուար

էր նորանց ժամանակակից չլինել Շապուհին), և որ Վաւաշապուհ ժամանակակից է Արկադին ու Վաւաժին, որոնք նոյնպէս թագաւորել են աւելի քան քսանական տարի: Ուրեմն սինխրոնիզմի բացակայութիւնը Խորենացու և Ասողիկի մէջ, և Խորենացու պատահական սինխրոնիկ ցուցումների անմիաբանութիւնը Բ զպրութեան հետ՝ ամենից աւելի մեղ համոզում են, որ Բ զպրութեան երրորդ և չորրորդ մասի, եռանուն և երկանուն կանոնների համար ևս իբրև աղբիւր չեն ծառայել Խորենացին և Ասողիկը, և որ վերնադրում չիշուած Ստեփ. Տարօնացին ուրիշ անձ է:

### ՍՏԵՓԱՆՈՍ ՏԱՐՕՆԱՅԻՆ

Ո՞վ է այս Ստեփանոս Տարօնացին, և նա իրօք գոյութիւն ունեցել է թէ ոչ:— Այս հարցերին բարեբախտաբար այսօր կարելի է փոքր ի շատէ գոհացում սալ:

Հ. Գարեգին Զ. Հայկական զպրութեան պատմութեան մէջ (հատ. Ա, եր. 277, Բ տպ.) չիշում է մի Ստեփ. Տարօնացի, աշակերտ ս. Մեսրոպի, համաձայն մի հին լիշատակարանի, որ տպագրուած է «Արարատ» ամսագրի Ա տարում: Այս ցուցմունքի

վրայ ակնարկել էր և Ն. Բիւզանդացին, ինչպէս  
վերը տեսանք:

Արդ «Արարատ» ամսագրի Ա. (1868) տարում,  
մի քանի համարներում շարունակ տպագրուած է  
մի ընդարձակ լօղուած, «Անընդհատ շարունակու-  
թիւն Առաքելական լաջորդութեան Ուղղափառ Ս-  
եկեղեցւոյ Հայաստանեայց» վերնագրով: Յօդուածի  
հեղինակը, որ իւր անունը չէ ստորագրել, եր. 4 է  
ասում է. «Այս խնդրոյ մասին մեծ լոյս և օժան-  
դակութիւն կ'տայ հին ձեռագրքէ մի (որ Ա. Էջ-  
միածնայ մատենադարանէն կ'ըմբարուի) ձղուած  
և գողցուած երեք հատ թերթերը, որ Հայոց չհիթ  
(779) թուականին, այսինքն՝ ասկէց հինգ հարիւր  
երեսուն և ութն տարի լառաջ գրուած է կամ ընդ-  
օրինակուած»: Նոյն երեսում ծանօթութեան մէջ  
լալտնում է հետևեալը. «վերջին անգամ ի Պօլիս  
գտնուած ժամանակնիս, որ պէտք էր գալինք ի  
Ս. Էջմիածին, Վհհ. կաթողիկոսը վերոյիշեալ երեք  
թերթերը, հետը գիրք մ'ալ... ձեռք բերաւ պ. Թ.  
Մինրդատեանցէն Ս. Էջմիածնայ Մատենադարանին  
մէջ պահելու համար»: Ապա եր. 102—105 նա մէջ  
է բերում «խիտ մաշուած հին մագաղաթեայ երեք  
թերթերուն պարունակութեան ամբողջ օրինակը»,  
որ, ինչպէս լալտնում է 57 երեսում՝ «վերոյիշեալ  
թերթերուն ամենայն կերպով ձիշտ օրինակն է...»

մէջը ամենեին ոչ բառ մը աւելացնելով և ոչ կէտ  
մը պակսեցնելով:

Ահա այդ թերթերից մեզ կարևոր մասը:

«Յիշկգրութիւք եպիսկոպոսաց Առքէին վիճակիս  
Արտաղու, զոր գտաք ի հին լիշտկրնէ միոջ, որ էր  
գրեալ, զը, թուական Հայոց, ձեռամբ Յօհաննէս  
սպասաւորէ, ի սուրբ ուխտէն Մաղարթայ, այսպս...»

«Այլ և գտաք լալլ պատմութիւն մի հնագոյն և  
անվերծանելի. զոր շրնկբը անցուցեալ էր ի գիր  
լաջորդութի սբ Առաքելոյն, Թաղէոսի՝ ի կեսարիայ  
կապագովկացոց վիճակին, ՚ի Թէոֆիլոսէ Աշակերտէ  
Առաքելոյն: Գրել հանդերձ մ'նգրուք: Եւ անուն  
նորին Ստեփաննոս Տարաւանցի, որ էր աշկրտ սբն  
Մեսրոպայ: Ուստի մեծաւ փփգնօք և բղմ տաժան-  
մամբ գաղփարեցի զի մի կորիցէ իսպառ: Քանզի  
ոչ էի զիպեալ ուրեք մատենի. վս որոյ սրբան մար-  
թացոք հանել ի լոյս, ի մատնէ անտի, համառաւարիւ  
կարգեսցուք, աստ ցսքն Գրիգոր Լուսաւորիչ: և  
անտի մինչև ցսքն Բարսեղ կեսրցի»: —

«Յետ Աւարնկն քարոզութեանց սբ Առաքե-  
լոյն և Առաջին լուսատուին մերոյ, Թաղէոսի» և  
այլն<sup>1)</sup>:

1) Ի նկատի ունենալով, որ «Արարատի» 1868 թ.  
շատ հազուադիւր է՝ կարևոր համարեցինք զրտածքիս  
վերջը, Բ լաւելուածում, ամբողջապէս արտատպել Ստե-  
փաննոս Տարաւանցու այս հատուածը, որ այժմ առանձին  
հետաքրքրութիւն ունի:

Այս հետաքրքրական լիշատակարանից երևում է, որ ԺՊ դարում մի անձանօթ հեղինակ Փաղէոս առաքեալի չաջորդութեան մասին գրելիս՝ օգուտ է քաղել ի միջի աչլոց Ստեփանոս Տարօնացոյց, որին կոչում է ս. Մեսրոպի աշակերտ: Ստ. Տարօնացին գրած է եղել մի պատմութիւն հանդերձ ժամանակագրութեամբ: Այս պատմութեան մատեանը շատ հին և անվերծանելի է եղել, և անձանօթ խմբագրողը, որ ուրիշ տեղ այդ մատեանին հանդիպած չէ եղել՝ նրանից համառօտելով քաղել է՝ որչափ կարողացել է, որպէսզի իսպառ չկորչի:

Որ այս Ստ. Տարօնացին Ասողիկը չէ՝ կարիք չկայ ապացուցանելու. բաւական է միայն լինել, որ Ստ. Տարօնացոյց քաղուած նիւթը ամենեին չկայ Ասողիկի պատմութեան մէջ, և նրա գործածած ուղղագրական ձևերն ու լեզուն աւելի հին են և ընտիր: Միայն աչքի է ընկնում «տրա» ձևի գործածութիւնը փոխանակ «ամա» կամ «ղսա» ձևերի, և չաճախ աննախդիր հայցականի գործածութիւնը՝ փոխանակ զ նախդրով հայցականի: Բացի այս երկու երևութից՝ մնացած լեզուն հին և ընտիր է և յատուկ անունների ուղղագրութիւնը վաղեմի:— Թէ արդեօք Ստ. Տարօնացին լիրաւի ս. Մեսրոպի աշակերտ է եղել, ինչպէս կարծում է ձեռագրի գրիչը, թէ աւելի նոր ժամանակի հեղինակ՝ այս խնդրով չենք զբաղուի. մեզ համար կարևորն այն է, որ հին ժամանակ գոյութիւն է ու-

նեցել այս անունը կրող մը հեղինակ, որ գրել է «պատմութիւն հանդերձ ժամանակագրութեամբ», այսինքն այնպիսի մը գրուածք, որ միանգամայն համապատասխանում է Բ գպրութեան բովանդակութեանը (եռանուն և երկանուն կանոններին). ուրեմն ամենայն իրաւամբ կարող ենք ասել, թէ Բ գպրութեան վերնագրում լինուած Ստեփանոս Տարօնացոյց, հաւաստի և ճշմարիտ մատենագրի պատմագիրքը լիրաւի գոյութիւն է ունեցել, և նրանից օգտուել է Բ գպրութեան հեղինակը:

Համեմատութիւնը Բ գպրութեան երրորդ և չորրորդ մասի և Ստեփ. Տարօնացոյց մեզ հասած պատառիկի՝ ցոյց է տալիս մի ընդհանուր մեթոդ երկուսի մէջ և նիւթի նմանութիւն. երկուսն էլ ժամանակագրական ցանկեր են. երկուսն էլ պատմական նիւթերով աղքատ. երկուսն էլ թէ լաջորդութիւնների և թէ տարիների թուերի ճշտութեան կողմից կասկածելի: Գուցէ այս հանգամանքներն են եղել պատճառ, որ Ստ. Տարօնացոյց այս պատմական-ժամանակագրական աշխատութիւնը, հետաքրքրութիւն կամ գրական արժէք չհերկայացնելով՝ անտես է արուել և անհետացել:

Գալով «Արարատի» լօղուածագրի հաղորդած տեղեկութիւններին երեք հին մագաղաթեայ թերթի մասին՝ մենք առիթ չունինք նրանց մասին կասկածելու, մանաւանդ որ այդ թերթերի գոյու-

թեանը և գնուելուն իբրև վկայ է հանդիսանում երջանակալիշատակ Գէորգ կաթողիկոսը, որի թուլտուութեամբ տպագրուած էր «Արարատը»<sup>1)</sup>:

Աւրեմն Բ դպրութիւնը կապել Ասողիկի հետ և այս հիման վրայ նրա խմբագրութեան ժամանակը մինչև ժ.Ա. դարն իջեցնելը լոկ մի թիւրիմացութիւն է, որ առաջ է եկել մի պարզ գուգադիպութիւնից. Տարօն ընդարձակ դաւառից եղել են երկու մատենագիր Ստեփանոս անունը կրող:

1) Յիշեալ անտորագիր չօգուածի հեղինակի և մագաղաթեայ երեք թերթերի մասին տեղեկութիւն ստանալու համար մենք դիմեցինք ի մելի ալոց Կ. Պոլիս, Սբբ. Վահրամ եպիսկոպոս Մանկունուն, որի պատասխանից քաղում ենք հետեւեալ տողերը. «Արարատում . . . Անընդհատ շարունակութիւն և այլն չօգուածը իմ գրածն է... իսկ խնդրածդ թերթերը՝ ոքք գնուած էին Թ. Միհրդատեանցէ, պիտի գտնուին Հայրապետական գրադարանի մէջ՝ մի մոխրագոյն հաստ թղթեայ պահարանում... Գրադարանի քովը Մեծ կոնդակը ևս կախուած պիտի լինի՝ զրեանց ցուցակով: Եթէ անհատատարիմ ձեռքեր չեն միջամտած՝ անդ վնասեցէք: Ծագկեալ ալ վան կոչուած Հայրապետական ներքին մեծ դահլիճում էր գրագարանը»: Բացի սրանից Սբբ. Վահրամ եպիսկոպոսը ստուգութեամբ յայտնում է, թէ այդ թերթերը կտրուած են եղել Ս. Էջմիածնի մատենագարանի մի ձեռագրից, ինչպէս խոստովանել է ինքը Թ. Միհրդատեանցը: Այս «Հայրապետական գրադարանը», ինչպէս լսեցինք՝ այժմեան Վեհ. Կաթողիկոսը փոխադրել է մեծ Մատենագարանը:

Արիշ տեղեկութիւններ չկարողացանք ձեռք բերել:

մէկը միւսից զոնէ 400 տարի առաջ ու չեա ապրած. որոնցից հինը իբրև աղբիւր է ծառայել Բ դպրութեան, իսկ նորը, Ասողիկը, օրուտ է քաղել այս Բ դպրութիւնից: Ժ.Ա. դարի խմբագրութեան կապանքը վերացնելուց չետոյ՝ Բ դպրութիւնը մեր աչքին ներկայանում է՝ Սեբէոսի Ա. դպրութեան և բուն պատմութեան մէջ տեղաւորուած մի ժամանակագրական գրուածք, քաղուած Մ. Խորենացու և մի հին հեղինակի, Ստ. Տարօնացու պատմութիւնից: Թէ սով է այս առաջին դպրութեան հեղինակը, երբ են նրանք գրուած և ինչու գրուած են Սեբէոսի պատմութեան սկզբում՝ — այս կլինի մեր քննութեան առաջիկայ նիւթը:

Հեղինակ ասելով՝ մենք չենք հասկանում այս դպրութիւնների բովանդակութիւնը շարադրող, Այաթանդեղեան արձանագրութիւնը կամ Մար-Աբասեան մատենանը հնարող, այլ լոկ խմբագրող այդ աղբիւրների այն ձևով՝ ինչպէս պատահում ենք դպրութիւնների մէջ. այսինքն այն անձը, որ երկու դպրութիւնների մէջ խօսում է առաջին գէմքով և չայտնում է, թէ այս և այն աղբիւրներից առնում է իւր նիւթը: Այս անձը բանասիրութեան մէջ կոչուած է Անձանօթ (Анонимъ). մենք պէտք է քննենք, թէ սով է Անձանօթը:

### ՍԵՐԷՍԻ ՊԵՏՄՈՒԹԻՒՆԸ ԵՆ ԵՐԿՈՒ ԳՊՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

#### Ա. ԱՐՏԵՔԻՆ ԿԱՊ

Արքէոսի պատմութեան հրատարակութիւննէ-  
րը ճիշտ հասկացողութիւն չեն տալիս այն մալը  
ձեռագրի մասին՝ որից տպագրուած են. ձեռագրի  
կերպարանքը մանաւանդ ալլափոխուած է երկրորդ  
տպագրութեան մէջ (Ս. Պետերբուրգ, 1879), որ  
ուղղակի կարող է մուտրութեան մէջ ձգել ընթեր-  
ցողին, գուցէ և ձգել է շատերին: Մեր բազմե-  
րախտ ուսուցիչը, պրօֆ. Պատկանեան, Արքէոսի  
օուսերէն թարգմանութեան ժամանակ համոզում  
գոյացնելով, թէ Ա. և Բ դպրութիւն կոչուածները  
Արքէոսին չեն պատկանում՝ հայերէն հրատարա-  
կութեան մէջ, այս համոզման համաձայն, ձեռ-  
փոփոխութեան է ենթարկել իւր բնագիրը (Ա. տը-  
պագրութիւնը և նորագոյն գրչագիրը), և այնպէս է  
կղզիացրել Ա. և Բ դպրութիւնները, որ նրանք  
հէնց արտաքին տեսքից պէտք է համարուին Ար-  
քէոսին չպատկանող, օտարամուտ հատուածներ:  
Հրատարակչի առաջարանից չեսոյ, որտեղ լա-  
տնուած է, թէ բուն Արքէոսի գրուածք է համա-  
րում երեք դպրութիւններից միայն վերջինը (բուն  
պատմութիւնը)՝ անմիջապէս տպուած է «Գպրու-  
թիւն Ա», առանց հեղինակի անուան (եր. 1): Գո-  
րան լաջորդում է (եր. 11) «Գպրութիւն Բ», նայն-

պէս առանց հեղինակի անուան. ապա գալիս է  
(եր. 22) հետեւեալ վերնագիրը. «Պատմութիւն Ար-  
քէոսի եպիսկոպոսի ի Հերակլն. Նախերգանք», և  
այնուհետև գլուխ Ա, Բ և այլն: Այնպէս որ այս  
տպագրութեան մէջ Ա. և Բ դպրութիւնները չեն  
կոչուած Արքէոսի, չեն մտած ընդհանուր գլխա-  
կարգութեան մէջ և բոլորովին առանձնացած են  
Արքէոսից:

Առաջին տպագրութիւնը (Թ. Մինդաստեան-  
ցի, Կ. Պօլիս, 1851) շատ տարբեր կերպարանք  
ունի. հրատարակչի առաջարանից ու ցանկից չե-  
սոյ նա կրում է վերնագիր. «Պատմութիւն Ար-  
քէոսի եպիսկոպոսի ի Հերակլն. Գպրութիւն Ա,  
(եր. 1). սրանից չեսոյ (եր. 14—26) ղետեղուած է  
հրատարակչի հետազօտութիւնը Ազաթանգեղեան  
արձանագրութեան մասին. ապա գալիս է (եր. 27)  
«Պատմութիւն Արքէոսի եպիսկոպոսի. Գպրութիւն  
Բ», սորան լաջորդում է (եր. 42) «Նախերգանք  
հեղինակին Գ դպրութեան», և այնուհետև (եր. 46)  
«Պատմութիւն Արքէոսի եպիսկոպոսի. Գպրութիւն  
Գ, Գլուխ Ա», չեսոյ շարունակաբար գլուխ Բ, Գ...  
Ուրեմն այս տպագրութեան մէջ լիչեալ երկու դը-  
պրութիւնները կապուած են Արքէոսի պատմու-  
թեան հետ, և ամբողջը ներկայացրուած է իբրև  
մի գրուածք՝ երեք դպրութիւնից բաղկացած, և  
երեքն էլ կրում են վերնագիր՝ Պատմութիւն Ար-  
քէոսի:

Սակայն այս տպագրութիւնն էլ լրիւ գաղտփար չէ տալիս այն դրութեան մասին, որ ունեցել են այս դպրութիւնները բուն ձեռագրի մէջ: Բարեբախտաբար հրատարակիչն իւր առաջաբանում տեղեկութիւններ է տալիս ձեռագրի ձևի և իւր արած ձևային փոփոխութիւնների մասին: Աչապէս՝ մենք իմանում ենք, որ Սեբէոսի առաջին հրատարակիչ Թ. Միհրդատեանցն է բաժանել ամբողջ գրուածքը երեք դպրութիւնների <sup>1)</sup>. այնպէս որ հռչակաւոր «Ա. դպրութիւն», «Բ. դպրութիւն» անունները չկան ձեռագրում: Առաջին դպրութեան վերնագրում հրատարակիչը ամբողջութեամբ պահել է ձեռագրի վերնագիրը—«Պատմութիւն Սեբէոսի և պիսկոպոսի ի Հերակլէն». իսկ Բ և Գ դպրութեան վերնագրում ինքն է աւելացրել իւր կողմից՝ «Պատմութիւն Սեբէոսի կպիսկոպոսի» <sup>2)</sup>. ուրեմն ձեռագիրը միայն մի խորագիր է ունեցել հէնց սկզբում (Ա. դպրութեան գլխում) «Պատմութիւն Սեբէոսի կպիսկոպոսի ի Հերակլէն», և այնուհետև ոչ

1) «Միայն այսչափ փոփոխութիւնս մուծաք առ ի լուսաւոր լարդարել դմատեանս, այսինքն չերիս դպրութիւնս բաժանեցաք զբովանդակ գործն»: Կանխարան. Եր. ԺԴ—ԺԵ:

2) «Եւ յաւելար ի սկիզբն Բ և Գ դպրութեան զխորագրութիւնն «պատմութիւն Սեբէոսի կպիսկոպոսի», բայց զառաջին մասին անփոփոխ պահեցաք «ի Հերակլէն» ասելով»: Անդ, Եր. ԺԵ:

այսպիսի խորագիր և ոչ դպրութիւնների բաժանում: Ապա հրատարակիչը, իւր հասկացածի պէս, բաժանել է երրորդ դպրութեան նիւթը գլուխների և իւր կողմից գրել է իւրաքանչիւր գլխի բովանդակութիւնը, թէպէտ բնագիրն ունեցել է իւր լատուկ գլխակարգութիւն <sup>1)</sup>. ուրեմն Ա. դպրութիւն, Բ. դպրութիւն, Նախերգանք, ապա Գ. դպրութիւնն իւր Ա, Բ... գլուխներով՝ հրատարակիչինն են և ոչ ձեռագրինը: (Բայց Բ. դպրութեան վերնագիրը, «Արդ, եթէ կամիս, ով ընթերցասէր, երկրորդեցից ի պատմագրացն Մովսիսի Խորենացուց և Ստեփանոսի Տարաւնացուց» և այլն՝ բնագրինն է և ոչ հրատարակիչինը) <sup>2)</sup>: Բացի սրանից՝ տեղեկանում ենք Նոյն տպագրութեան ծանօթութիւններից, թէ այնտեղ, ուր գտնուում է այժմ «դպրութիւն Ա» վերնագիրը՝ ձեռագիրն ունեցել է Գլուխ Ա <sup>3)</sup>.

1) «Եւ թէպէտ էր ի բնագիրս գլխակարգութիւնք. բայց մեք ի պատշաճ տեղիս եղաք, հանդերձ ծանօթական տեղեկութեամբ, այսինքն բովանդակութեամբ ի ներքոյ պարունակեալ գործոցն»: Անդ, Եր. ԺԵ:

2) «Ահա մինն սա է՝ զոր պատմագիրս լիչէ ի սկիզբն Բ. դպրութեան՝ դասելով ընդ Խորենացուցն «Ստեփանոս ճշգրիտ մատենագիրս ասելով... բայց ո՛ր է Տարսնացիս այս՝ ո՛չ է մեզ ծանօթ», և այլն: Անդ, Եր. ԺԵ:

3) «Ի բնագրին էր Գլուխ Ա. բայց մեք եղաք ԳԸ-ՊՐՈՒԹԻՒՆ Ա. ըստ բաժանման մերոյ չերիս դպրութիւնս»: Անդ, Եր. 1, ծանօթ.:

որտեղ ալժմ գտնուում է «Գպրութիւն Բ»՝ ձեռագիրն ունեցել է Գլուխ Գ <sup>1)</sup>։ որտեղ ալժմ գտնուում է (Գպրութիւն Գ ըստ առաջին տպագրութեան) Գլուխ Ա՝ ձեռագիրն ունեցել է Գլուխ Զ <sup>2)</sup>։

Այս անդեկութիւնների օգնութեամբ Սերէոսի պատմութեան արտաքին ձևն ու բաժանումները պէտք է աչսպէս վերականգնել. —

Պատմութիւն Սերէոսի եպիսկոպոսի ի Հերակլէն։

Գլուխ Ա. «Աւ եղև ոչ ի կամալական պիտուից վարժ խուզակի...» (=Ա. դպր. ա մասն)։

(Գլուխ Բ). «Ապատամբութիւն պարթևաց որ եղև ի լալս ժամանակի։ Աւ եղև լետ մահուանն Աղեքսանդրի կայսեր Մակեդոնացուց...» (=Ա. դպր. բ մասն)։

Գլուխ Գ. «Արդ՝ թէ պիտու է քեզ, սլ ընթերցատէր, երկրորդեցից ի պատմագրացն Մովսիսի Խորենացու և Ստեփաննոսի Տարսնացուց, հաւատոի և ճշմարիտ մատենագրաց, զորդի ի հաւրէ ձանաչելու Յետ մահուանն Աղեքսանդրու՝ թագաւորէ Արշակ քաջ...» (=Բ. դպր. ա մասն)։

(Գլուխ Գ). «Աւ արդ՝ երկակի կանոնաւ զպարսից։

1) «Ի բնագրին էր Գլուխ Գ. մեք եղաք ԳՊՈՒԹԻՒՆ Բ»։ Անդ, եր. 27, ծանօթ.։

2) «Ի բնագրին էր Գլուխ Զ. մեք եղաք ԳՊՈՒԹԻՒՆ Գ»։ Անդ, եր. 45, ծանօթ.։

և զՅունաց հաստատելով նշանակեցից զթագաւորութեան ժամանակն։ Արդ՝ թագաւորէ պարսից Յաղկերտ...» (=Բ. դպր. բ մասն)։

(Գլուխ Ե). «Աւ եղև ի նուազիլ ժամանակաց սէրութեանն Արշակուն.»...» (=Նախերգանք)։

Գլուխ Զ. «Աւ եղև լամս Պերոպի արքայի Պարսից՝ բարձունն ամենաչն իշխանութեանցն՝ և կարգաց և աւրինաց քրիստոնէութեան...» (=Գլ. Ա)։ Աւ սլն։ <sup>1)</sup>

1) Վիեննայի Մխիթարեանց դրատանը դանում է մի ձեռագիր օրինակ Սերէոսի պատմութեան (թ. 52), արտադրուած 1851 թուին նոյն Բաղիշեան ձեռագրից՝ որից առնուած է և Թ. Միհրդատեանցի տպագրութեան օրինակը։ Այս օրինակում էլ գլուխները նույնպէս են բաժանուած՝ ինչպէս զրինք մենք, համաձայն Միհրդատեանցի ցուցմունքներին։ Այս օրինակում էլ «Սերէոսի Հալոց եպիսկոպոսի պատմութիւն ի Հերակլ կայսր» վերնագիրը դրուած է «Իրբև խորագիր ամբողջ զրբին, իսկ զսրութեանց բաժանում չկայ, այլ երկու առաջին (կեղծ Սերէոսի) Գպրութիւնքն ալ իրբև գլուխ Ա, Բ, Գ, Դ թուարկուած են»։ — Ձեռագրին բաժանմունք ամենեկին շին համաձայնիւր տպագրելուն հետ, որուն Գ գպրութիւնը լը գլուխ ունի 2և ազգիրը բաժանուած է 50 մասանց կամ զլսոց .. Տպագրելուն մէջ (էջ 35) Բ գլխուն ծալը կցուած անկապ «Մատեան ժամանակեան՝ պատմութիւն թագաւորական» կտորը «ը» գլխաթիւր կըկրէ»։ Յ. Տաշեան, Յուլիակ հալ ձեռագր. Մատենագ. Մխիթ. ի Վիեննայ, եր. 249, էջ 1—2։

Ելմամբնի մատենագրանում, ինչպէս լսեցինք ը. Մեարոպ Վ. Տէր-Մովսիսեանից՝ կալ Սերէոսի բուն ձեռագիրը օրը Գ. Պատկանեանը չէր գտել աչնտեղ։

Սերէոսի պատմութիւնն այս կերպով իւր սկզբնական հարազատ ձեին վերածելուց լետոյ՝ նոյն-իսկ արտաքին կողմից բոլորովին անհաւանական է դառնում այն ենթադրութիւնը, թէ «Ա. և Բ. դպրութիւնները» անհարազատ են և «պատահաբար» են կցուած նրա պատմութեան սկզբին: Տեսանք, որ չէ եղել և չկայ «Ա. դպրութիւն», իբրև մի ամբողջութիւն, և ոչ «Բ. դպրութիւն», իբրև մի ուրիշ ամբողջութիւն, այլ կան Սերէոսի պատմութեան Ա, Բ, Գ, Դ. դրոխներ, որոնք գլխակարգութեամբ անբաժան կերպով կապուած են լաջորդ դրոխների, բուն պատմութեան հետ: Այս «դպրութիւնները» անհարազատ համարելու համար՝ պէտք կլինէր ենթադրել, որ մի անձանօթ հեղինակ մի աննպատակ գրուածք, «Ա. դպրութիւնը» չօրինելով՝ գրել է Սերէոսի պատմութեան սկիզբը, սրա վերնագիրը խարդախութեամբ ջնջելով և իւր զբոուածքի սկզբում դնելով. մի քանի դար վրան անդնելուց լետոյ՝ մի երկրորդ անձանօթ հեղինակ, գրել է դարձեալ մի ուրիշ աննպատակ գրուածք («Բ. դպրութիւն»), որ պատահաբար կցուել է նոյն Սերէոսի պատմութեան, և տարօրինակ կերպով՝ ոչ թէ բուն սկզբում («Առաջին դպրութիւնից» առաջ), կամ պատմութեան վերջում, ինչպէս պէտք էր սպասել պատահականութեան դէպքում, այլ մի ամբողջութիւն դարձած գրուածքի մէջը (Ա. դպրութեան և բուն պատմութեան մէջ): Այնուհետև

մի երրորդ անձանօթ՝ այս՝ երկու պատահական անհարազատ լաւելուածներ ընդունած գրուածքը նոր բաժանել է գրուխների, և անհարազատ լաւելուածները ընդհանուր գլխակարգութեամբ միացրել է բուն Սերէոսի պատմութեան հետ: Այսպիսի անհրաժեշտ ենթադրութեան անհաւանականութիւնը բացատրութեան կարօտ չէ. ուստի հէնց միայն արտաքին ձեի վրայ հիմնուելով՝ մենք իրաւունք կունենալինք ասելու, թէ «Ա. և Բ. դպրութիւն» կոչուածները Սերէոսի գրուածներն են, նրա պատմութեան անբաժան մասը:

Բ. ՆԵՐՔԻՆ ԿԱՊ

Այս միակ ուղիղ տեսակէտից որ նայինք՝ այն ժամանակ միայն մեզ հասկանալի կդառնան՝ ոչ միայն «Ա. և Բ. դպրութեան» նշանակութիւնը, այլ և Ա. դպրութեան ներածութեան «Աւ եղև ոչ ի վամաչական պիտոյից...» խօսքերը, որոնց մինչև այժմ տրուած բացատրութիւններն անգոհացուցիչ են:

Սերէոս եպիսկոպոսը մտադիր լինելով գրել իւր ապրած, պատմական դէպքերով նշանաւոր ժամանակի պատմութիւնը՝ հարկ է համարել—ինչպէս արել են և շատերը—նախապէս համառօտ կերպով պատմական և ժամանակագրական տեղեկութիւն-

ներ ապա իւր պատմելիք շրջանին նախընթաց եւ զող ժամանակների մասին: Իւր այս մտադրութիւնը նա լայնուում է ներածութեան (գրքի առաջաբանի) մէջ հետեւեալ խօսքերով.

«Յւ եղև ոչ ի կամայական պիտոյից վարժ խուզակի զանտարագրել <sup>1)</sup> ժամանակ և զնախնի քաջացն ձեռնարկելով զրոշմել վիպասանութիւնս, զիմն լիշատակել զառասպելս, և ի նոյն շարագրելով ասացից զառ ի յապալսն եղելոյ (եղելոց?), և ցուցից համառաւտիւք զարդեաց ժամանակացս զազեախցս վերաբերութեան զամս և զաւուրս հինգ թագաւորացն լիշատակելով»:

Պարզ երևում է այս խօսքերից, որ հեղինակի գրուածքը երեք շրջանի պատմութիւն է բովանդակելու. 1. նախնի քաջերի վիպասանութիւնը, որի համար ինչ-որ առասպելներ (= զրոյցներ) պէտք է չիլէ. 2. դրանից վետոյ պէտք է «չարագրէ» (չարունակէ գրել) յետոյ (այսինքն նախնի քաջերից վետոյ) պատահածները, և 3. վերջը համառասպէս պէտք է ցոյց տալ ներկայ (այսինքն իրան հեղինակին ժամանակակից) աղէտալի ժամանակների հինգ թագաւորների օրերն ու տարիները (= անցքերը):

(Պէտք է այստեղ նկատել, որ նոյն երեսում

<sup>1)</sup> Ձեռագրում այս բառի վրայ «պատիւ» կայ զըրուած: Տաշեան, Յուցակ Ձեռագրաց, լիշեալ տեղում:

դարձեալ պատահում են «հինգ թագաւորներ» — Հայոց և Պարթևաց: Ք. Պատկանեանը իւր ուսմութեն թարգմանութեան մէջ (եր. 1. ծան.) ասում է, թէ այստեղ (առաջին անգամ լիշուող) հինգ թագաւորները ոչ մի նշանակութիւն չունին. ինքը լսածարութեամբ կկարդար ձին (փոխանակ հինգ)՝ եթէ միայն մէկ անգամ պատահէր այս բառը: Ուրեմն նա այս երկու անգամ լիշուող հինգ թագաւորները նոյնացնում է, բայց բացատրութիւն չէ տալիս, թէ ո՞վ են նրանք: Ն. Մառ. (Անծանօթի նախնական Հայոց պատմ., եր. 279) նոյնպէս նոյնացնում է այս երկու հինգ թագաւորները և զըտնում է, որ սրանք պէտք է լինին — Սելեկոս Նիկատոր, Անտիօք Ստոեր, Անտիօք Թէոս, Արշակ մեծ և Արշակ փոքր, որոնց պատմութիւնը լինում է Ա. դարութեան երկրորդ մասում (= Յ գլուխ պատմ. Սերէոսի), և մի ուրիշ տեղ (եր. 290) ասում է, որ աւելի ճիշտ կլինէր՝ «Հայոց և Պարթևաց հինգ թագաւորների պատմութիւն» խօսքն ընդարձակել և ասել «Ատորոց, Պարթևաց և Հայոց հինգ թագաւորների պատմութիւն»: Շատ հաւանական է, որ երկրորդ անգամ լիշուած «Հայոց և Պարթևաց» հինգ թագաւորները նրանք լինին՝ որոնց վրայ մատնանիչ է լինում Ն. Մառ. բայց այս «Հայոց և Պարթևաց» հինգ թագաւորների հետ չէ կարելի նոյնացնել առաջին անգամ լիշուած «հինգ թագաւորները». «Հայոց և Պարթևաց» հինգ թագաւորների օ-

րերն ու տարիները՝ արձանագրութեան վրայ են եղել գրոշմուած Ազաթանգեղոսի ձեռքով (ըստ զիպան արձանագրին գրոշմելով ի վերայ վիմի զամբս և զաւուրս հինգ թագաւորացն Հայոց և Պարթևաց, յունարէն գպրութեամբ»)։ այնինչ առաջին անգամ լիշուած «հինգ թագաւորները» ժամանակակից են հեղինակին, (սլ էլ որ սա լինի)։— «արդեաց ժամանակացս զաղետիցս վերաբերութեան զամս և զաւուրս հինգ թագաւորացն լիշատակելով»։ Ազաթանգեղեան արձանագրութիւնը գտընուելիս է եղել Մծբին քաղաքում, Մանատրուկ թագաւորի պալատի առջև. լետոյ այս պալատը փուլ է եկել և իւր աւերակների տակ ծածկել է նաև այս արձանագրութիւնը. լետոյ պարսից թագաւորը պալատի աւերակները փորել է տուել՝ սիւները հանելու համար, և այս առիթով գարձեալ բացուել է արձանագրութիւնը. սրանից Մար Աբաս Մծուրնացի փիլիսոփան մատեան է շինել, և Մար Աբասի աշակերտներից այս մատեանը ձեռք է բերել Բ գպրութեան հեղինակը. հասկանալի է ուրեմն, որ այս հեղինակը չէր կարող ժամանակակից լինել Ազաթանգեղոսին, ուրեմն և չէր կարող իրան ժամանակակից համարել այն Պարթև և հայ թագաւորներին, որոնց անունները Ազաթանգեղոսը գրել էր արձանի վրայ։ Ուստի անշուշտ տարբեր խմբեր են երկու անգամ լիշուած հինգ թագաւորները)։

Եւ արդարև Սերէտը, համաձայն իւր ծրագրին, նախ գնում է հայոց նախնի քաջերի պատմութիւնը (այսպէս անուանուած՝ հպկապեան շըրջանը)։ Սա կազմում է նրա գրքի Ա գլուխը, որի աղբիւրն է Մար Աբասի մատեանը։

Այնուհետև Բ—է գլուխներում նա զետեղում է «առ ի յապալսն եղեալ» պատմութիւնը, լաջորդաբար դնելով նախ Պարթևների ապստամբութիւնը Սելևկացիներից և Պարթև ու Արշակունի հարստութիւնների սկզբնաւորութիւնը (որ շարունակութիւն է Ա. գլխի) և տալով այս երկու հարստութեան թագաւորների ցանկը։ Սա կազմում է նրա պատմութեան Բ գլուխը, որի աղբիւրներն են «ժամանակագիրը» (գուցէ Եւսեբիոս, «ժամանակագրութեան» հեղինակը) և, թերևս ցանկերի համար՝ Ազաթանգեղեան արձանագրութիւնը։ Ապա նա «երկրորդում է» Պարթևների ցանկը մինչև նըրանց բարձուը ըստ Խորենացու («հաւաստի և ճշմարիտ պատմութեան <sup>1)</sup>»։ այնուհետև շարունակում է Սասանեանների, Յունաց կայսրների և հայ Արշակունիների եռանուն ցանկը՝ ըստ Ստ. Տարօնացու պատմութեան, մինչև Արշակունիների բար-

<sup>1)</sup> Գուցէ Սերէտը երկրորդել է և Արշակունիների ցանկն սկզբից մինչև Խորոսի ժամանակը, դարձեալ ըստ Խորենացու, Մամիկոնեանների ծագման հատուածից առաջ նկատուած՝ թուղթ ընկած տեղում։ Տես Յաւելուած Ա։

ձուճը: Սա կազմում է նրա պատմութեան երրորդ գլուխը: Չորրորդ գլխում նա շարունակում է պատմութեան թեւը, Արշակունիների բարձումից լետոյ Պարսից և Յունաց թագաւորների ցանկերը գնեւոյ՝ մինչև Սասանեանների բարձումը: (Այս գլխում պէտք է նկատել երկու աղբւր,—սկզբում դարձեալ Ստ. Տարօնացին, իսկ վերջում՝ արդէն ինքը Սեբէոսը, որ իբրև ժամանակակից՝ դնում է պարսիկ և լոյն թագաւորների ցանկը: Երկու աղբւր ենք ենթադրում՝ որովհետև այս գլխի սկզբում սաստիկ սխալ են անձերն ու տարիները և թագաւորների ժամանակակցութիւնը, այն-ինչ վերջին մասում, լատկապէս Խոսրով Նուշիրվանի (531—579) և Յուստինիանոսի (527—565) ժամանակներից սկսած՝ լանկարծ ուղղում են ժամանակագրութիւնն ու սինխրոնիզմները և երբեմն մասնակրկիտ ճշտութեան հասնում): Այս գլխով հեղինակը շարունակել է իւր պատմութեան ու ժամանակագրութեան թեւը և միանգամայն ժամանակագրական աղիւտակ է կազմել այն շրջանի համար, որ բուն պատմութեան նիւթն է կազմում—մինչև Սասանեանների բարձումը: Յաջորդ 6 գլուխում (որ տպագրութիւնների մէջ մկրտուած է Թ. Միհրդատեանցի «Նախերգանք հեղինակին Գ դպրութեան» անշաջող անունով) հեղինակը շարունակում է Հայոց պատմութիւնը, Արշակունիների բարձումից սկսած, (շարունակութիւն Գ գլխի, որից

վետոյ հեղինակն ստիպուած էր դնել թագաւորական լաջորդութեան ցանկը). համառօտ լիշում է Արշակունեաց բարձումից վետոյ Սասանեանների քաղաքականութիւնն և առաջին կրօնական պատերազմը, բայց երկար չէ կանգ առնում, որովհետև ուրիշները (լատկապէս Նշիշէն. երևում է՝ Սեբէոսը Ղ. Փարպեցու պատմութիւնը չէ տեսած) արդէն գրել են. ապա լիշում է մի առ մի այն անցքերը, որոնք առաջին կրօնական պատերազմին լաջորդեցին և որոնք ինքը մտադիր է գրել: Զ և է գլխներում (տպագրիւնների Ա և Բ գլուխները) նա շարունակում է հայոց պատմութիւնը,—Վահան Մամիկոնեանի կռիւը, մարզպան նշանակուելը, լաջորդ մարզպանները և հայոց հետ նրանց մղած կռիւները—և պարսից պատմութեան գլխաւոր անցքերը—Վահրամ Չորինի ապստամբութիւնը, Արմզդի սպանուելը և Խոսրով Փարվէզի թագաւորելը: Սա կազմում է նրա պատմութեան երկրորդ մասը:

Երրորդ մասը, բուն ժամանակակից պատմութիւնը, սկսում է գլխով, որ կրում վերնապիւր. «Սատեան ժամանակեան, պատմութիւն թագաւորական»: Այստեղ պէտք է փնտռել ներածութեան «զարդեաց ժամանակացս զաղեաից վերաբերութեան զամս և զաւուրս հինգ թագաւորացն»: Եւ լիբաւի, այս «անկար» գլուխը, որ բանաստեղծական նկարագիր է հեղինակի պատմելիք զիպուածներին

իբր ներածութիւն բուն պատմութեան՝ միանգամայն արդարացնում է մեր ակնկալութիւնը. նա վերնագիր ունի «մատեան ժամանակեան (այսինքն ժամանակակից), պատմութիւն թագաւորական» (զբրքի սկզբում լիչուած հինգ թագաւորների). խկ աղետները չաջորդում են անմիջապէս. «Ճառեցից... զանցից կործանմանն... զի վերուտ զարթուցանել սրտամտութիւն, և զառ ի ներքոյ բորբոքեալ զբարկութիւն. զհրոյն և զարեան հեղեղել և զհինիցն արշաւանս. և զմահաբերն ասպատակ... և զհարաւայինն զարթուցեալ մեծաւ բորբոքմամբ՝ յարձակեալ ի վերայ միմեանց... որք իբրև զմբրիկ աւզոյ թռուցեալ, փոթորկեալ, ընթացեալ ասպականել զառ ի ներքոյս ամենայն, աւարել զլերինս և զբլուրս, պատառել զղաշտս վայրաց, և խորտակել զվէմս և զքարինս ի ներքոյ զարշապարաց եքիվարաց և լառաթուր սմբակաց»: Ահա այս աղետալի ժամանակներն են հինգ թագաւորների օրերըն ու տարիները, և Սեբէոսի պատմութեան այս ժամանակակից մասում պէտք է փնտռել այդ հինգ թագաւորներին. դրանք՝ յունաց աչն հինգ թագաւորներն են, որոնց ժամանակ կատարուած դէպքերը նկարագրուած են Սեբէոսի պատմութեան այս ժամանակակից մասում, այսինքն—Մօրիկ, Փոկաս, Հերակլ, Նրակղակ և Կոստոս. առաջին տն կայսրը, որ լիչուում է այս ժամանակակից պատմութեան մէջ՝ Մօրիկն է, և վերջինը, որի

կենդանութեամբ վերջանում է պատմութիւնը՝ Կոստոսն է <sup>1)</sup>:

Սրանից տեսնում ենք, որ Ա. և Բ դպրութիւն կոչուածները ոչ միայն օտար չաւելուածներ չեն, որոնք իբր թէ «պատահաբար» կցուել են Սեբէոսի պատմութեան և նրա հետ ոչ մի կապ չունին, այլ նրա անհրաժեշտ մասերն են, որոնցով անընդհատաբար պատմուած է հալոց պատմութիւնը, նախնական ժամանակներից սկսած մինչև հիշմանակի օրերը, և եթէ նրանցից որեէ մէկը պակասէր՝ Սեբէոսի ծրագիրը թերի կմնար և պատմութեան թելը կընդհատուէր: Տեսնում ենք, որ միայն այս կերպով հասկանալի կղառնալ զբքի ներածութիւնը, իւր «ալժմեան աղէտալի ժամանակների հինգ թագաւորներով»:

Սեբէոսի պատմութիւնն, ուրեմն, զարձեալ կարելի է երեք մասի բաժանել, հիմնուելով նրա ներածութեան վրայ, բայց բաժանումն արդէն ուրիշ կերպ պէտք է կատարուի.—Ա. մաս—նախնական (վիպական) ժամանակ—(Գլ. Ա). Բ. մաս—անցեալ պատմական ժամանակ—(Գլ. Բ—Է), և Գ. մաս—ժամանակակից պատմութիւն—(Գլ. Ը—մինչև վերջը):

<sup>1)</sup> Կոստանդինն, քանի որ նա թագաւորել է «սակաւ աւուրս» (եր. 112), ուրեմն պատմական-ժամանակագրական տեղ չէ գրուել՝ Սեբէոսը հաշուի չէ առնում Բ դպրութեան ցանկի մէջ էլ նրան և Նրակղակին միասին նշանակում (եր. 20):

### Գ. ՆԵՐՔԻՆ ՀԱՄԵՐԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Այս արտաքին ամբողջութիւնը հաստատուելուց լետոյ՝ դառնանք քննելու, թէ արդեօք այս դպրութիւնները իրանց բովանդակութեամբ համերանջն են միմեանց հետ և բուն պատմութեան հետ. այս դանազան տեղերում հազարդուած պատմական և աշխարհագրական տեղեկութիւնները չեն հակասում արդեօք միմեանց. հակասութիւնն անշուշտ կասկածելի կդարձնէր նրանց միեւնոյն հեղինակի գոյժ լինելը, իսկ համերաշխութիւնն, ընդհակառակը, մի նոր զօրաւոր ապացոյց կլինէր նրանց հեղինակի նույնութեան: Հասկանալի է, որ մի պատմական գրուածքում, որտեղ զէպքերը աւանդուած են լաջորդաբար և էլ կարիք չէ լինում նրանց երկրորդ անգամ լիշատակելու՝ քիչ կպատահին համեմատութեան կէտեր. այնու ամենայնիւ բաւականաչափ նիւթ գտնուած է թէ Ա. և թէ մանաւանդ Բ դպրութեան մէջ, որոնք միմեանց հետ և բուն պատմութեան հետ համերաշխ են, և ընդհակառակն, չկայ ոչ մի հակասութիւն Սերէոսի պատմութեան այս երեք մասերի մէջ:

Ահա համերաշխութեան մի քանի օրինակներ Ա. դպրութեան և գրուածքի միւս մասերի մէջ:

1) Բուն պատմութեան մէջ (եր. 37) Սերէոսը գրում է, թէ Վահրամ Մինրեանդակը Մուշեղ Մա-

միկոնեանին նամակով յորդորում է լետ կանգնել Սասանեան Խոսրովից և իւր կողմն անցնել, խոստանալով, որ եթէ չազթէ՝ անկախ թագաւորութիւն կտայ հայոց, այնպիսի սահմաններով՝ որ «առ նախնեօքն իսկ» հայոցն են եղել, այսինքն «ամենայն երկիրն Հայոց մինչև ցԱպիկոն և ցՂուռն Աղուանից, և ցԱսորոց կողմանէ զԱրուաստան և զՆոր Շիրակն մինչև ցսահմանս Տաճկաց... և ընդ արևմուտս մինչև ցԱխարիա Կապադովկացոց: Եւ ես մի իշխեցից քան (դ) Չարասպ անցանել լայնկոյս»: Այս սահմանները, որ «նախնեաց ժամանակ» ունեցել են հայերը՝ լիշեցնում են այն սահմանները, որ Արշակ առաջին պարթև թագաւորը տուեց իւր որդուն փոքր Արշակին՝ Հայաստանի վրայ թագաւոր նշանակելով, ինչպէս գրուած է Ա. դպրութեան մէջ (եր. 9). — «պատուցանէ նմա սահմանս զԱրուաստան առ երկրան Տաճկաց և առ երկրան Ասորոց: Եւ զԱսպուտիկայ առ Կիւղիկեաւ՝ մինչև ցեզր ծովուն մեծի արևմտից, և ցՆիւսիսու կողմանէ ի լեառն մեծ Կովկաս, որ ձգի ընդ կողմանս արևելից, և անցանէ առ սահմանաւն առ ամուր աշխարհաւն Մարաց, և հասանէ ի լեառն Չարասպ և անցանէ առ Նոր Շիրակ երկրաւն»: <sup>1)</sup>

<sup>1)</sup> Այս համեմատութիւնը նախ բերել է Գ. Խալաթեանցը, թէպէտ մերից տարբեր նպատակով «Հայոց Վէպը», էր. 72:

2) Ա. դպրութիւնը լիչում է (եր. 1), որ Արշակ առաջին Պարթևը ապրեց 130 տարի և թագաւորեց Քուշանաց երկրում, Բահլ շահաստանում: Նոյնը վկայում է և երկրորդ դպրութեան սկզբում: Արշակի 130 տարի ապրելու տեղեկութիւնը ուրիշ տեղ չկայ՝ բացի Ա. և Բ. դպրութիւններից. իսկ Բահլ շահաստանը շարունակ լիչում է ամբողջ զբրբում:

3) Ա. դպրութեան մէջ (եր. 2) Սերէսուր լիչում է Հալկի և Արամանեակի մի քանի սերունդները, որոնց կոչում է «սզգածին արք»: Եր. 7 լիչում է, թէ զաղթական Մարսեակի սերունդները խառնուեցին այսզգ Արամանեակայ: Իսկ Բ. դպրութեան մէջ, երբ խօսք է լինում Մամիկոնեանների մասին՝ նա լալանում է, թէ Մամիկոնեանները (հակառակ Բագրատունիներին) «ոչ են որդիք ազգածինն Արամանեակայ, այլ են եկեալ ի ճենաստանէ»: Երկու տեղումն էլ Արմենակի, և ոչ Հալկի կամ Արամի, անունով է կոչում բուն հալ սերունդները:

4) Նոյն-իսկ այն տարբերութիւնը, որ նկատուում է Ա. և Բ. դպրութեան մէջ Պարթևների սկզբնաւորութեան և թագաւորների անունների ու տարիների մէջ՝ կարող է ծառայել միայն իբրև ապացոյց նրանց ներքին համերաշխութեան: Ա. դպրութեան մէջ Սերէսուր օգտուելով հեղինակաւոր «ժամանակագրից» կամ Ագաթանգեղոսի արձանագրութիւնից, ըստ Մար Աբասի մատեանին,

դնում է պարթևների սկզբնաւորութիւնը, Արշակունեաց թագաւորութեան ծագումը և պարթև թագաւորների ցանկը: Բայց որովհետև մի ուրիշ ոչ-նուազ հեղինակաւոր պատմագիրը, «Ճշմարիտ և հաւաստի Մ. Խորենացին» շատ տարբեր է աւանդում միևնույն նիւթը, ուստի Սերէսուր, չկարողանալով նրանց միաբանեցնել՝ հարկ է համարում իւր մի անգամ դրածն «երկրորդել» ըստ Խորենացու: Այսպէս վարուել են և ուրիշները մեր պատմագիրներից: Ուստի ալստեղ չկայ հակասութիւն, այլ կան տարբեր աղբիւրներ, որոնց երկուսին էլ լիչում է հեղինակը՝ չկարողանալով մէկին գերազանցութիւն տալ միւսից: Այս երկու աղբիւրներն էլ մէջ բերելը նշանակում է, որ ինքն հեղինակը զգում է նրանց տարբերութիւնը:

Բ. դպրութեան մէջ, ինչպէս ասացինք՝ աւելի շատ կան համեմատութեան կէտեր բուն պատմութեան հետ, շնորհիւ այն հանգամանքին, որ Բ. դպրութեան վերջում զետեղուած է ժամանակագրական չանկ լուծաց և պարսից այն թագաւորների, որոնց ժամանակներն ու գործերը պատմուած են զրքում: Մինչև դրանց լիչելը՝ մատնացոյց լինինք համեմատութեան մի շատ նշանաւոր կէտի վրայ:

1) Բ. դպրութեան մէջ (եր. 18) Սերէսուր զբրում է. «Յամին ժա Վաւամայ Պարսից արքայի թագաւորէ Յունաց Ոնորիտս ամս իբ: Վաւամչա-

պուն է: Յազկերտ Ղառաջինն: Յամի երկրորդի Յազկերտի որդու Վռամայ, և լամի երկրորդի Ունորեայ կալսեր բարձաւ թագաւորութիւնն Հալոց՝ որ տեհաց ամս նե: Եւ վախճանեցաւ և վճարեցաւ: Այսինքն Սերէսուը, հակառակ բոլոր հայ պատմագիրների տեղեկութեան, Արշակունեաց թագաւորութեան բարձուը դնում է Յազկերտի և Ունորի տի երկրորդ տարում, Վռամշապուհ թագուորի ժամանակ, որ ըստ նորա՝ վերջին հայ արշակունի թագաւորն է: Արդ նոյն բանը կրկնում է Սերէսուը և բուն պատմութեան մէջ (եր. 22).—«Եւ եղև ի նուազի ժամանակաց տէրութեանն Արշակունեսց ի Հայաստան աշխարհի, ի բառնս տէրութեանն Վռամշապուհ արքայի՝ տիրէ ի վերայ սորա ազգն Կարքեղովմայեցի իշխանութեանն»:

Համեմատելով Բ զպրութեան ժամանակագրական ցանկը բուն պատմութեան հետ՝ պատահում ենք հետեւել համերաշխութիւններին.

2) Ըստ պատմութեան (եր. 71) Մօրիկի թագաւորութեան իզ տարին <sup>1)</sup> համապատասխանում է Խոսրովի ժո տարուն:—Ըստ Բ զպր. (եր. 20). Խոսրովի ա տարին=Մօրիկի է-երորդին, ուրեմն ժո տարին=Մօրիկի ի-ին:

3) Ըստ Պատմութեան (եր. 71) Փոկաս թա-

<sup>1)</sup> Այստեղ տարու շիտթութիւն կալ. Ա տպ. ըստ ձեռագրին ունի իզ. իսկ Բ տպ.՝ ի:

գաւորում է Խոսրովի ժո տարին:—Նոյնն է և ըստ Բ զպր.:

4) Ըստ պատմութեան՝ Երակղ թագաւորում է Խոսրովի իբ տարում—«Փոսրով իբ. Երակղոս գառաջինն» (եր. 78) և նրա թագաւորութիւնը տևում է 30 տարի (եր. 108):—Նոյնն է և ըստ Բ զպրութեան. — «Յամի ի(ք)երորդի <sup>1)</sup> Խոսրովայ թագաւորէ Յունաց Երակղոս՝ որդի Երակղի, ամս լ: Խոսրով իբ. Երակղոս գառաջինն» (եր. 20):

5) Ըստ պատմութեան (եր. 111—112) Երակղից լետոյ թագաւորում է նրա որդին Կոստանդին, որ ստակաւ ինչ աւուրս թագաւորեալ՝ զսեւալ ի Մարտինեայ մարէ իւրէ մեռանէր. Եւ թագաւորէ Երակղոս որդի Երակղեայ... և ապա՝ Կոստաս որդի Կոստանդինի, եւ անուսի յամուն հաւրն իւրոյ Կոստանդին: Կոստանդինի ա տարին համապատասխանում է Յազկերտի ժ տարուն:—Նոյնն է և ըստ Բ զպր. (եր. 20—21)—«Վախճանի երանելին Երակղէս, և թագաւորեն որդիք նորա Կոստանդին և Երակղակ: Ի նմին ամի մեռաւ Կոստանդին զաւեալ ի մարէն: Եւ թագաւորէ Երակղակ: Գարձեալ փոխեցաւ Երակղակ, և թագաւորէ Կոստաս որդի Կոստանդեայ, որ կոչեցաւ յամուն հաւր իւրոյ

<sup>1)</sup> Բնագրում սխալմամբ գրուած է է-երորդի, փոխանակ իբ-երորդի, ինչպէս գրուած է անմիջապէս լետոյ:

Կոստանդին: Յազկերտ է-երորդ, Կոստաս զառա-  
ջինն» <sup>1)</sup>:

6) Պատմութեան մէջ լիշուած վերջին յոյն  
կայսրն է Կոստանդին, որի քանի տարի թագաւո-  
րելը չէ նշանակուած: Նրա ժա տարին համապա-  
տասխանում է Յազկերտի ի. և Խմայելացոց ժթ.  
տարիներին (եր. 137):—Նոյնն է և Բ զպրութեան  
մէջ—«Յազկերտ ի: Կոստանդին ժա: Արքայն Խ-  
մայելի (ժ)թ» <sup>2)</sup>: Այստեղ նոյնպէս չէ նշանակուած  
Կոստանդինի քանի տարի թագաւորելը:

7) Ըստ պատմութեան՝ Խոսրով Անուշըրուան  
որդի Կաւատայ (եր. 36) թագաւորում է խը տա-

<sup>1)</sup> Այստեղ Յազկերտի է-րդ տարին, ինչպէս և քիչ վե-  
րը լիշուած նրա դ-րդ տարին սխալ են և հակասում են նոյն  
Բ զպրութեան հաշուին: Բ. զպր. վկայում է քիչ վերը,  
թէ Նրակղ թագաւորեց 30 տարի, և ապա՝ թէ Նրակղի  
23 տ. = Յազկերտի 1 տ., և Նրակղի 24 տ. = Յազկերտի 2 տ.  
տրեմն Նրակղի մահուան տարին, նրա թագաւորութեան  
30-րդը, պէտք է համապատասխանէր Յազկերտի 8-րդ  
տարուն և ոչ 6-րդին, ինչպէս գրուած է. (ժոխանակ լի-  
նելու ը՛ աղբաւորութեամբ գրուած է զ, և այս հիման  
վրայ ուղղուած է յաջորդ թիւը՝ է, ժոխանակ թ-ի): Հե-  
տեւայ զուգարութիւնն էլ—Յազկերտի ի տարին=Կոս-  
տանդինի ժա տարուն, նոյնն է ապացուցանում:

<sup>2)</sup> Տպագրուած օրինակներում՝ տեսնում ենք թ, որ  
չալունի սխալ է, ժոխանակ ժթ-ի, որովհետեւ յաջորդ տա-  
րին, որ է Կոստանդինի ժբ. տարին՝ զուգարուած է Խ-  
մայելացոց տէրութեան ի. տարուն:

րի (եր. 28):—Նոյնն է և ըստ ցանկի Բ զպր.—  
«Թագաւորէ Խոսրով որդի Կաւատայ ամս խէ», որ  
քիչ վետոյ ուղղուած է 48-ի, քանի որ ըստ ցանկի՝  
Խոսրովի 37 տարին=Յուստիանոսի 1 տ., և Խոս-  
րով մեռնում է Յուստիանոսի 12-րդ տարում:

8) Ըստ պատմութեան (եր. 90) Խոսրով Ա-  
պրուէզ թագաւորում է աւելի քան 34 տարի:—  
Ըստ Բ զպրութեան նա թագաւորում է 37 տարի:

9) Ըստ պատմութեան՝ Կաւատ թագաւորում  
է 6 ամիս (եր. 98), և խոռեմ թագաւորում է կարճ  
ժամանակ (եր. 99): Նոյնն է ըստ Բ զպր.—«Չկէս  
ամին խոռեմայ ի կէս ամին Կաւատայ չաւել(եալ)  
ասացից ամ մի»:

10) Ըստ պատմութեան (եր. 99) Բբոր բամ-  
բիշը, Խոսրովի դուստրը, թագաւորում է 2 տարի:—  
Նոյնն է և ըստ Բ զպր.—«Բբոր բախիշն դուստր  
Խոսրովայ՝ ամս բ»:

11) Ըստ պատմութեան (եր. 99) Բբորից վե-  
տոյ կարճ ժամանակով թագաւորում են զանազան  
ցեղերից թագաւորներ.—(Մոռեամ՝ Բբորից առաջ),  
Մոռոխ Որմիզդ, Խոսրով չաղդէ Սասանայ, Ազար-  
միզուխա, Որմիզի թուն Խոսրովայ:—Նոյնն է և  
ըստ Բ զպրութեան.—«Չամս ևկամտիցն և ծա-  
ռայիցն թագաւորեցելոցն, որպէս խոռեմայն և  
զՄոռոխ Որմիզին և զԽոսրովայն և զՈրմիզին՝ որք  
բռնութեամբ կալան զթագաւորութիւնն... ի սոյնս  
չաւելեալ կարգեցից թիւ»:

12) Ըստ պատմութեան (եր. 137) վերջին Սասանեան թագաւորն է Յազկերտ, որ 20 տարի է թագաւորում և սպանում, որով և Սասանեան հարստութիւնը վերջանում է:—Նոյնն է ըստ Բ դպրութեան:

13) Ըստ պատմութեան (եր. 137) Սասանեան հարստութիւնը տևում է շիւր տարի:—Ըստ Բ դըպրութեան՝ շը տարի: Այս երկու թուերից սրն է աղաւաղուածը՝ դժուար է ասել, քանի որ Բ դըպրութեան մէջ նշանակուած տարիների իսկական դումարն է 510 տարի, իսկ Սասանեան հարստութեան բուն պատմական տեղութիւնը՝ 426 տարի: Այս վերջին իսկական թուականից թէ Բ դպրութեան և թէ պատմութեան աւելի քան 100 տարով շեղուելը՝ ապացոյց է դարձեալ նրանց համեմարաշխութեան. մի տառի տարբերութիւնը երկուսի մէջ (մէկում է, միւսում իս) հետեանք է աղաւաղութեան, որից մի քանի օրինակ այստեղ բերինք, մի քանիսն էլ կրերենք Ա լաւելուածում:

14) Ըստ պատմութեան (եր. 108, 109) խմայելացոց առաջին եւքը Արաբիայից կատարուած է Նրակիլի ժամանակ, և «չորժամ ելին լարեեւք որդերն Իսմայէլի ի Սին անապատէ»՝ նրանց թագաւորն է եղել Ամու:—Նոյնն է և ըստ Բ դպր.— Իսմայէլացիք Նրակիլի իդ տարում «ելին սրտաքս ի Սինէ անապատէ... Նրակիլս իդ: Ահ արքայ Իսմայէլի՝ դառաջինն»: և այլն:

Այս փաստերի վրայ աւելացնելու է և այն նշանաւոր իրողութիւնը, որ թէ Բ դպրութիւնը և թէ պատմութիւնը վերջանում են միևնույն շրջանով—Սասանեան հարստութեան բարձումով, որ տեղի ունեցաւ 652 (կամ 653) թուականին: Պարզ է, որ Սերէոսը, իւր պատմական աշխատութիւնը ձեռնարկելիս՝ նպատակ է ունեցել նրան վերջացնել այս նշանաւոր պատմական դարեշրջանով, ինչպէս երևում է ներածութեան «հինգ թագաւորների» ժամանակից և Բ դպրութեան ցանկի վերջին ցուցումից, և այսպէս էլ իրադարձել է իւր նպատակը: Բայց պատմութիւնը վերջացնելուց լետու, իբրև ժամանակակից և եկեղեցական մարդ, չէ կարողացել լուել մի-երկու դէպք, եկեղեցական պատմութեան վերաբերեալ, և իւր նախնական ծրագրից դուրս՝ լիչել է Ներսէս կաթողիկոսի վերադարձը աքսորից, Քէոզորոս Ռչտունու մահից լետու, և Առապարի եկեղեցու շինութիւնը վերջացնելու հետամուտ լինելը: Այս դէպքերը ընկնում են 657—8 թուականներում: Պատմութեան վերջաբանի մէջ նրա լիչած վերջին տեղեկութիւնն է Մաւլասի միահեծան թագաւորելը (661 թ.): Այս լաւելուածոյ տեղեկութիւնները բացատրուած են շատ բնական կերպով, և Բ դպրութեան ու պատմութեան համեմարաշխութիւնը, ծաւալի կողմից, չէ խանգարուած:

Այս բազմաթիւ համերաշխութիւնները մի կողմից պատմութեան և միւս կողմից դպրութիւնների մէջ՝ միայն մի կերպով կարելի է բացատրել — նրանց հեղինակի նույնութեամբ: Անկարելի է ենթադրել, օրինակի համար, որ Բ դպրութիւնը յօրինուած լինի Սեբէոսից չետոյ, նրա պատմութեան հիման վրայ, որովհետեւ պատմութիւնը չէ պարունակում այնքան ժամանակագրական նիւթ, որ կարելի լինէր նրանից հանել Բ դպրութեան ժամանակագրութիւնը: Անկարելի է նույնպէս ենթադրել, որ այս ցանկը յօրինուած լինի Սեբէոսից առաջ, և Սեբէոսը, իրան ժամանակակից ղէպքերը պատմելիս, իւր գիտցած ժամանակները շարժարեցրած լինի մի անձանօթի յօրինած ցանկին, մանաւանդ որ այս ցանկը, ինչպէս ցոյց են տալիս նրա վերջին ժամանակագրական տեղեկութիւնները՝ ուղիղ այն ժամանակ է գրուած, երբ գրուած է և պատմութիւնը: Մենք առաջ ասել էինք, թէ Ա և Բ դպրութիւններն ու պատմութիւնը միասին վերցրած՝ կազմում են մի ամբողջութիւն, և եթէ մի գլուխ նրանցից հանուի՝ չաջորդութեան թելը կընդհատուի: Այժմ պէտք է աւելացնենք, որ Բ դպրութեան ցանկի վերջին մասն ուղղակի անհրաժեշտ անդամն է պատմութեան, իբրև սինխրօնիկ ժամանակագրութիւն նրա համար:

Գ. ԼԵՁՈՒԻ ԵՒ ՈՃԻ ՀԱՄԵՐԱՇՅՈՒԹՅՈՒՆ

Վերը մէջ բերուած նմանութիւններին և համերաշխութեան համապատասխան է և լեզուային համերաշխութիւնը դպրութիւնների և պատմութեան մէջ: Միևնույն լեզուն ու ոճը, գրելու միևնույն սովորութիւնը, միևնույն խօսքի դարձուածքները, որ սիրելի և ընտել են հեղինակին՝ գործ են անուած ամբողջ գրքի մէջ, առաջին դպրութեան սկզբից մինչև պատմութեան վերջը: Այս նմանութիւնը նկատել է Գ. Թալաթեանցը, որ առաջինն է եղել որ համեմատել է Ա դպրութեան բնագիրը Սեբէոսի պատմութեան հետ՝ նիւթի, այսինքն լեզուի տեսակէտից: Միւս բանասէրները այս տեսակէտից չեն քննել առաջին դպրութիւնը, իսկ Բ դպրութիւնը առ հասարակ ենթարկուած չէ եղել մանրամասն քննութեան: Մենք մեզ թոյլ ենք տալիս թարգմանաբար բերել այստեղ Գ. Թալաթեանցի եզրակացութիւնը, քանի որ ինքնեւրս էլ միևնույնը պէտք է ասէինք: «Մեր հատուածի (Ա դպրութեան) բնագիրը մանրամասնաբար զըննելով՝ ես եկայ այս եզրակացութեան, որ նա ապշեցնելու չափ (паразительно) նմանութիւն ունի

ամենից առաջ և ամենից աւելի Սեբէոսի պատմութեան հետ, որի հետ միացած է և նւթապէս: Այս նմանութիւնը, որ երբեմն հասնում է նոյնութեան՝ նկատուած է երկու գրուածքների ոճի և գրելու եղանակի մէջ, նրանց խօսքի կազմութեան և մի քանի սովորութիւնների մէջ—ոչ միայն քերականութեան, համաձայնութեան և բառերի գործածութեան կողմից, այլև այն աշխարհագրական ու տեղագրական առանձնապատուկ բառերի կողմից, որ միայն նրանց մէջ են պատահում: («Հայոց Վէպը», էր. 68): Յարգելի բանասէրի այս եզրակացութիւնը և լիարուան արտաբացութիւնը աւելի նշանակութիւն ունին այն պատճառով, որ նա և ոչ մի բողբոջ թույլ չէ տուել կարծիք՝ թէ իւր համեմատած երկու գրուածքներն էլ միեւնոյն անձին — Սեբէոսին են պատկանում: Նա ենթադրում է, թէ Ա. դպրութեան անձանօթ հեղինակը օգտուել է Սեբէոսից և այդ աստիճան ենթարկուել է նրա ազդեցութեան. այս պատճառով է, որ նա «ապշեցնող» է կոչում իւր նկատած նմանութիւնը երկուսի մէջ, որ երբեմն նոյնութեան է հասնում: Սեր տեսակէտով՝ ոչ մի ապշեցնող երևոյթ չկալ այստեղ, այլ մի ամենաբնական, անհրաժեշտ բան, որի զինելը կարող էր մեզ ապշեցնել և ոչ թէ լիւնելը:

Ապա պ. Խալաթեանցը բերում է (էր. 69—71) մի ցանկ այն հասարակ և լատուկ անունների ու

դարձուածքների, որոնք բնորոշ և ընդհանուր են Ա. դպրութեան և պատմութեան մէջ, և չիտու ամբողջ հատուածներ, որոնց մէջ երեւում է գրելու միևնոյն սովորութիւնը («Հայոց Վէպը», էր. 71—74): <sup>1)</sup>

Մենք, քանի որ նպատակ ունինք ցոյց տալ Ա. Բ. դպրութիւնների և պատմութեան հեղինակի նոյնութիւնը՝ պարտաւորութիւն կենք զգում նոյնպէս բերել հարկաւորներից մի քանի օրինակ՝ իբրև ապացոյց նրանց լեզուի և ոճի համեմատութեան:

Բնորոշ ուղղագրութեամբ լատուկ անուններ:

Արամանկակ, Արամենակ. Ա. դպր. էր. 2 («ազգածին»), 3, 4, 5, 7 («ազգ Արամանկակ»): — Բ. դպր. էր. 12 («ազգածին Արամանկակ»):

\* Արուաստան <sup>2)</sup>. Ա. դպր. 9: — Պատմ. 33, 37 և այլն:

Ամն. Բ. դպր. 20: — Պատմ. 109:

<sup>1)</sup> Գ. Խալաթեանցի այս աշխատութեան մասին մեր գրած մատենախօսութեան մէջ «Մշակ», 1896, № 62, 63) մենք զննատել էինք Ա. դպրութեան լաջող համեմատութիւնը Սեբէոսի պատմութեան հետ, բայց եզրակացութիւնը համարել էինք անընդունելի, ինչպէս և այսօր ենք համարում:

<sup>2)</sup> Աստղանիշ համեմատութիւնները (բացի Բ. դպրութիւնից) բերուած են և «Հայոց Վէպի» մէջ:

\* Ասպեա (= Բաղրատունի). Ա. դպր. 9:—  
Պատմ. յաճախ:

\* Բահլ Շահաստանի, չերկիրն Քուշանաց. Ա.  
դպր. 7, 9 (2 անգամ):—Բ. դպր. 11:—Պատմ.  
67 (և 30):

Բբոր բամբիշ, Խոռոխ Որմիղդ. Բ. դպր. 20:  
—Պատմ. 99:

\* Կապկոհ. Ա. դպր. 8:—Պատմ. 37, 143:

\* Կապուտկեայ. Ա. դպր. 9:—Պատմ. 146 (Կող-  
մանք Կապուտկացոց):

\* Մրծուին. Ա. դպր. 10:—Պատմ. 58, 92 (2  
անգամ):

Բնորոշ դարձուածքներ և ասացուածքներ:

\* «Ջնախնի քաջացն ձեռնարկելով՝ դրոշմեը  
վիպասանութիւնս, դիմն լիշատակել զսուսպելս». Ա.  
դպր. 1:—«Ջանցից կործանման առասպելս վիպասա-  
նելով»: Պատմ. 35:

«Բայց ես նախ առաջին զվէպս յահեզն ար-  
քայ եւ յարի այրն սկսայց ասել» Ա. դպր. 1:—«Եւ  
արդ՝ ասացից զվէպս ի կործանիչն և չապականողն  
Խոսրով». Պատմ. 35:

\* «Անդ հայելով ի մտեանն Մար Աբայ փի-  
լիսոփայի Մծուրնացւոր»: Ա. դպր. 1:—«Ալ սակայն  
անդր հայելով ի կարգս ուսումնասիրացն»: Պատմ. 151:

«Թափեցից իսկ ալսար ի քեզ զկապարճս  
իմ»: Ա. դպր. 4:—«Թափեցին ի նոսա զկապարճս իւ-  
րեանց»: Պատմ. 75:

«Ապստամբեալ ի բաց կացին Պարթևք ի ծա-  
ռայութենէ Մակեդոնացոց»: Ա. դպր. 7:—«Ապրս-  
տամբեալ ի բաց կացին ի նմանէ»: Բ. դպր. 12:—«Ապրս-  
տամբեցին Հայք և ի բաց կացին ի Յագաւորութենէն  
Յունաց»: Պատմ. 138...

«Թագաւորեցոյց Արշակ զորդի իւր զԱրշակ փո-  
քըը կոչեցեալ ի վերայ աշխարհին Հայոց»: Ա. դպր.  
9:—«Թագաւորեցոյց Թէոդոս զՊապ որդի Արշակայ ի  
վերայ աշխարհին Հայոց»: Բ. դպր. 17:

«Մեռաւ Կոստանդին դաւեալ մաւրէն» Բ. դպր.  
20:—«Կոստանդին դաւեալ ի Մարտինեայ մաւրէ իւրմէ  
մեռանէր». Պատմ. 112:

«Ընդ Խամալէլացիսն որք ելին արտաքս ի Սի-  
նէ անապատէ հրամանաւ Աստուծոյ առնել անապատ զա-  
մենայն երկիր». Բ. դպր. 20:—Պատմ. 109. «Ելին չա-  
րեւէք որդիքն Խամալէլի ի Սին անապատէ»:—104.  
Մահմէտ... որպէս ի հրամանէն Աստուծոյ երեւալ»:—  
135. Չորրորդ Թագաւորութիւն (Խամալէլացոց)...  
որ արար անապատ զամենայն երկիր»: «Սին անապատ»  
նաև Պատմ. եր. 151:

«Սպառեն զգաւրն ապստամբական». Բ. դպր. 12:  
—«Փախստական լինէր զաւրն ապստամբական».  
Պատմ. 39:

«Ազգ լինի նորին, եթէ Թագաւորեաց Անտիո-  
քոս. լուծանէ Արշակ զԴեմետրիոս»: Ա. դպր. 8:—  
«Ազգ լինի ձենբակուրի. գումարէ և նա զաւար իւրոց  
կողմանն». Բ. դպր. 12:—«Ազգ լինի երակլի կալ».

տեր... առնու զզարս իւր և դառնայ: Պատմ. 92:  
— Եւ այլն և այլն:

Նշանակելու է նաև մատենագրի սովորութիւնը, թէ ինչպէս նախատէս զիշում է իւր գրելիքը և ինչպէս լիով ցոյց է տալիս իւր աղբիւրները.—

Ա. դպր. 1. «Յուցից համառատութիւնք զարդեաց ժամանակացս... զամս և զառուրս նինդ թագաւորացն»:

” ” «Զվէպս լահելն արքայ և յարի այրն սկսաց ասել :

Բ. դպր. 11. «Երկրորդեցից ի պատմագրացն... զորդի ի հաւրէ ճանաչելու:

” ” 18. «Երկակի կանոնաւ զՊարսից և զՅունաց... նշանակեցից զթագաւորութեան ժամանակն»:

Պատմ. 35. «Ասացից զվէպս իկործանիչն Խոսրով»:

” 110. «Ասացից և զՀրէիցն զպատմամբողացն զխորհուրդսն» և այլն:

Ա. դպր. 1. «Անդ հայելով ի մատեանն Մար Աբայ փիլիսոփայի... զոր իմ գտեալ ի Միջագետս ի նորին աշակերտացն՝ կամեցայ ձեզ զբուցակարգել»:

Բ. դպր. 12. «Որպէս լուայ լառնէն մեծէ, որ էր եկեալ հրեշտակութեամբ ի ճեհնաց թագաւորէն առ արքայն Խոսրով. յոր իմ նորցեալ ի գրանն թէ»...

Պատմ. 110. «Զայս լուաք յարանց գերելոց ի Խոսրով ժատտան Տաճկաստանէ, որոց ինքեանք իսկ ակնաստես եղեալ պատմեցին մեզ զայս բան»:

Աւելորդ ենք համարում օրինակները յաճախել: Արեւիլ է ամբողջապէս արտագրել Ա. և Բ. դպրութիւնների պատմական հատուածները և իւրաքանչիւր նախադասութեան և բնորոշ զարձուածքի դէմ համապատասխան օրինակներ բերել պատմութիւնից: Մենք իբրև նմուշ մի փոքրիկ հատուած բերենք Բ. դպրութիւնից.—

Բ. դպր. եր. 12

Համեմատութիւններ.

«Եւ զարածողով լինէին Մամիկն և Առնակն

«Եւ զարածողով լինի Բէլ արքայ ի Բաբելոն»: Ա. դպր. եր. 3:

ի միում տեղսջ աշխարհին իւրեանց և բաժանի զաւր աշխարհին լերկուս:

«Ապտամբեալ ի տեղի մի ամբացաւ»: Պատմ. 137: «Զարբ նորս բաժանեալ յերիս մասսնս»: Պատմ. 107.

Ազգ լինի ձենրակուրի:

«Ազգ լինի Երակլի կայսեր...»

Գումարէ և նա զչաւրըս իւրոյ կողմանն

առնու զզարս իւր և դառնայ: Պատմ. 92.

և զնայ ի վերայ նսցա ի պատերազմ:

«Եւ զնայ ի վերայ նոցա ի պատերազմ»: Պատմ. 49.

Եւ զարձակին ի վերայ միմեանց,

«Եւ յորժակի ի վերայ նոցա»: Պատմ. 93.

հարկանեն սրով սուսերի

«Հարին զնոս սրով սուսերի»: Պատմ. 117.

և սպառեն զգաւրն  
«սպասմամբական»:

«Չամենայն ըստ թիւն քա-  
ղաքաց... սպառեաց սրով»:  
Պատմ. 71.— «Փոխստա-  
կան լինէր զաւրն ապստամ-  
բական»: Պատմ. 39:

Այս համեմատութիւններէց բաւականաչափ  
երևում է, որ Ա և Բ դպրութիւններն ու պատմու-  
թիւնը լեզուով, ոճով, դարձուածքներով, մատե-  
նագրելու սովորութիւններով ևս բոլորովին հա-  
մերաչիւս և նման են միմեանց՝ ինչպէս միևնույն  
գրքի զանազան երեսները:

### Ե Զ Բ Ը Կ Ը Ց Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Բ

Մինչև այստեղ շօշափուած կէտերը ամփոփե-  
լով՝ տեսնում ենք, որ

- 1) Լուրջ հիմք չունին այն սուարկութիւն-  
ները, որոնց պատճառով Ա և Բ դպրութիւնները  
համարուել են անվաւերական— ոչ Սեբէոսի գործ:
- 2) Վերին աստիճանի անհաւանական է, որ  
երկու անկապ, միմեանցից անկախ գրուածքներ,  
մէկը միւսից մօտ 400 տարի առաջ և լետ լօրին-  
ուած՝ պատահաբար գալին կցուէին Սեբէոսի  
պատմութեան սկզբին, այն էլ նախ Ա դպրութիւ-  
նը կցուէր, և ապա, 400 տարի չտող, Բ դպրու-

թիւնը զար այս երկուսի մէջ ընկնէր, և այնուհե-  
տև միայն գիրքը բաժանուէր զլուսնների:

3) Բ դպրութեան վերնագրում նշանակուած  
Ստեփանոս Տարօնացին Ասողիկը չէ, այլ աւելի  
հին մատենագիր, պատմական-ժամանակագրական  
մի գրուածքի հեղինակ, որի անունը և մի պատա-  
ռիկ գրուածքից՝ հասել է մեր ձեռքը մի հին ձե-  
րագրի մէջ:

4) Բ դպրութեան սկզբում գետեղուած Պար-  
թև թագաւորների ցանկը Ասողիկն է արտագրել  
այս դպրութիւնից (և ոչ ընդհակառակն), իւր կող-  
մից լաւելումներ անելով: Ասողիկը ուրիշ տեղեր էլ  
երեսներով արտագրում է Սեբէոսից:

5) Բ դպրութեան սկզբում գետեղուած Պար-  
թև թագաւորների ցանկը Սեբէոսը քաղել է Մ. Խո-  
րենացու Բ գրքի Բ, Գ, Կը, ԿԹ, հա զլուսններից. ե-  
ւանուն և երկանուն ցանկի առաջին մասը՝ Ստե-  
փանոս Տարօնացուց, իսկ երկանուն ցանկի վեր-  
ջին մասը կազմել է իրանից, իբրև ժամանակա-  
կից:

6) Ա և Բ դպրութիւնները, իբրև կղզիացած  
անանուն աշխատութիւններ, ինչպէս ներկայա-  
ցրուած են Ս. Պետրբուրգի տպագրութեան մէջ՝  
գոյութիւն չունին Սեբէոսի ձեռագիրներում: Բնա-  
գիր ձեռագիրը ունի մի վերնագիր— «Պատմութիւն  
Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլին», որից չտող  
ժալիս են Ա, Բ, Գ, Դ զլուսններով («Ա և Բ») կոչ-

ուած զպրուծիւնները, Ե զլիտով՝ «Նախերգանք» կոչուածը. տպագրի Ա. գլուխը՝ ձեռագրում Զ զըլուխն է: Այնպէս որ այն զպրուծիւնները նիւթապէս անբաժանելի կերպով կապուած են պատմութեան հետ:

7) Ա. և Բ զպրուծիւնները՝ ամբողջացնող մասն են պատմութեան, որոնք անընդհատ կերպով լաջորդարար աւանդում են հայոց պատմութիւնը, նախնական ժամանակներից սկսած մինչև Սասանեանների բարձումը: Ա. զպրուծեան ներածութիւնը հասկանալի կդառնայ՝ երբ պատմութեան մասն համարենք այս երկու զպրուծիւնները:

8) Թէ զպրուծիւնների և թէ պատմութեան մէջ տիրում է համերաշխութիւն պատմական հայեացքների, տեղեկութիւնների և ժամանակագրութեան կողմից: Բ զպրուծեան վերջին մասը անհրաժեշտ բանալի է՝ պատմութեան ժամանակագրութիւնը լիովին հասկանալու համար:

9) Վայրուծիւնների և պատմութեան մէջ տիրապետում են միևնույն լեզուն, ոճը, բնորոշ բառերը, մատենագրելու սովորութիւնը: Այս նմանութիւնը հասնում է նոյնութեան:

Այս հիմունքների վրայ լինուելով՝ մենք իրաւունք ունինք եզրակացնելու, թէ

10) Ա. և Բ զպրուծիւնները անձանթ հեղինակը նոյն ինքն Սերէոս եպիսկոպոսն է, Հերակլի պատմութեան հեղինակը, և թէ այս զպրուծիւնները

նա գրել է իւր պատմութեան հետ՝ իբրև նրա առաջին զլուխները:

11) Սերէոս եպիսկոպոսը, իւր պատմութիւնը գրելիս՝ օգտուել է ի միջի ալոց և Մովսէս Խորենացու պատմութիւնից, կոչելով նրան «Ճշմարիտ և հաւաստի մատենագիր»:

### ԵՐԲ Է ԳՐՈՒԸՍ ՍԵՐԷՈՍԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ո՛չ ինքը Սերէոս և ոչ նրանից լետոյ եկող հեղինակները չեն հաղորդում այն մասին ճիշտ տեղեկութիւն, այնպէս որ մնում է նոյն պատմութեան քննութիւնից հանել մտաւորապէս ստույգ ժամանակ այս պատմութեան չօրինուելուն:

Չանազան տեղեկութիւններ կան թէ պատմութեան մէջ և թէ նրանից դուրս, որոնք ցոյց են տալիս, թէ Սերէոսը ժամանակակից է եղել է զարի առաջին կէսի՝ և երկրորդ կէսի սկզբների ղէպքերին: Այսպէս՝ չալանի է կանոնագրքերից, որ «Տէր Սերէոս եպիսկոպոս Բագրատունեաց» մասնակից է եղել Գունայ ժողովին (646 թ.) և իբրև ութերորդ անձ ստորագրել է այդ ժողովի արձանագրութեան <sup>1)</sup>։ — Նա իբրև ժամանակակից՝ պատ-

<sup>1)</sup> Տես «Եւրոպա» 1852, № 21.— Տաշեան, Յուլյակ հայերէն ձեռագրաց. հր. 654, էջ 1, որտեղ կոչուած է «Տէր Սերոս Բագրատունեաց եպիսկոպոս»:

մական տեղեկութիւններ է հաւաքել Խոսթաստանից վերադարձած գերիներից այն լաղթութիւնների մասին, որ արաբացիք տարան Պարսկաստանում 637—640 թուականների շրջանում. (Պատմ. եր. 110):—Մամլեկոնեանների ծագման մասին պատմելիս լայտնում է, թէ նրանց նախնիքների մասին աւանդութիւնը ինքը լսել է «ի դրանն արքունի, չառնէն մեծէ, որ եկեալ էր հրեշտակութեամբ ի ճենաց թագաւորէն առ արքայն Խոսրով. (եր. 12): Այս Խոսրովը՝ միայն Խոսրով Բ Փարվէզը (590—628) կարող է լինել, որի օրերով ուրեմն Սերէսը առիթ է ունեցել Պարսկաստան դնալու և արքունի պալատում գտնուելու:—Սերէսը՝ է դարի կէսերին ժամանակակից լինելը երևում է և այն հանգամանքից, որ մինչ պատմութեան սկզբներում, Խոսրով Նուշիրվանի և չաջորդ զէպքերը նկարագրելիս ժամանակը շարունակ անորոշ խօսքերով է լայտնում՝ <sup>1)</sup> լետոյ սկսում է որոշ և ճիշտ տարիներ նշանակել <sup>2)</sup>, և քանի մտնում է պատմութեան վերջը՝ այնքան մանրամասն և ճիշտ են դառնում նրա ժամանա-

<sup>1)</sup> «Յայնմ ժամանակի», «Յայնժամ», «Եւ եղև ի ժամանակի լայնմիկ», «Եւ եղև ընդ աւուրան ընդ այնոսիկ» և այլն: Տես Գլ. Ե, 2, Ը, Ժ, ԺԲ - մինչև ԺԵ:

<sup>2)</sup> ԻՍ գլխից սկսեալ, որի մէջ չիշուած զէպքերը վերաբերում են 603 թուին:

վագրական ցուցումները, ուր ոչ միայն տարիներն է չիշում, այլ չաճախ և տարուայ եղանակներն <sup>1)</sup> և նոյն իսկ օրերը <sup>2)</sup>: Այս ցուցումները նշանակում են, որ Սերէսը է դարի առաջին կէսում ապրել և գործել է իբրև չափահաս մարդ, ուրեմն և ժամանակակից է իւր նկարագրած զէպքերին:

Վալով պատմութեան դրուելու ժամանակին՝ մենք վերևը տեսանք, որ Սերէսը սկզբնական նպատակն է եղել իւր պատմութիւնը հասցնել մինչև Մասանեան հարստութեան բարձումը (652—3): Գուցէ այս թուականից 2—3 տարի լետոյ էլ ձեռնարկած լինի իւր պատմութեան: Այս թուականից չետոյ նրա պատմութեան մէջ, աւելի չիշատակարանի ձեով, հաղորդուած են մի քանի տեղեկութիւններ, որոնք հասնում են մինչև 658 թուականը: Այնուհետև Վերջարանում, «Թէպէտ վայրապարտողելով» համառօտապէս չիշում է 658—661 թուականներում պատահած զէպքերը, մանաւանդ արաբացոց մէջ ծագած ներքին երկպառակութիւնները, որոնց հետեանքն եղաւ Մաւրաւի միապետելը (661): Սրա զահալալութեան չիշատակութեամբ էլ աւարտում է Սերէսը իւր գրքի վերջաբանը, այս խօսքերով. «Եւ հնազանդեցուցեալ (Մաւրասայ) ընդ ինքեամբ, և թագաւորէ ի վերայ

<sup>1)</sup> Տես եր. 140, 143, 146, 149 և այլն:

<sup>2)</sup> Տես եր. 82, 117, 141 և այլն:

կալուածոց որդւոցն Խամալէլի, և առնէ խաղաղութիւն ընդ ամենեսին. ամէն»։ Ուրեմն Սեբէոսի պատմութիւնը 661 թուից չեառ ոչինչ չէ լիշտանչ Վախասի գործերը, ոչ նրա թագաւորութեան տարիներում (661—680) Հալաստանի վիճակը, ոչ Ներսէս կաթողիկոսի մահը (671 թ.) ոչ նոյն խիկ Կոստաս կալսեր մահը (668)։ Այս հանդամանքներն ի նկատ առնելով՝ կարող ենք ամենայն հաւանականութեամբ ասել, թէ Սեբէոսը իւր պատմութիւնը վերջացրել է 661 և 668 թուերի միջաւազրում։ Այս տարիները շատ լաւ յարմարում են նրա կեանքի և գործունէութեան տարիները հետ, որ վերը լիչեցինք։

Ուրեմն Սեբէոսը, եօթներորդ դարի վաթսնական թուականներին, Սեղբաստրոսի և Սոկրատի հալերէն թարգմանութիւնից գտնէ 10-15 տարի առաջ, օգտուել է Մովսէս Խորենացու պատմութիւնից, իբրև «հաւաստի և ճշմարիտ» մատենագրից։ Մովսէս Խորենացու պատմութիւնը տարածուած և հռչակուած է եղել եօթներորդ դարի կեսերին։

### ՅԵՒԵԼՈՒԸԾ Ե

#### Մի քանի ուղղագրութիւններ Սեբէոսի պատմութեան.

Սեբէոսի պատմութիւնը միայն մի, բառական նոր ժամանակի (ռճիա) ձեռագրով հասած լինելով մինչև մեր ժամանակը՝ պարունակում է բազմաթիւ աղաւաղութիւններ։ Բացի առանձին առանձին բառերի և հատուածների աղաւաղութիւնից, որոնք մանաւանդ պարզ երևում են, երբ համեմատելու լինինք Սեբէոսի պատմութիւնը Ասողիկի այն տեղերի հետ, որոնք բառացի արտագրուած են նրանից՝ <sup>1)</sup> այս պատմութեան մէջ կան դուրս ընկած թերթեր, թերթերի ու հատուածների չեա և առաջ դատուորութիւններ և եկամուտ հատուածներ, որոնք շփոթութեան մէջ են ձգում ուսումնասիրողին։ Օգուտ քաղելով ներկայ հանգամանքից՝ աւելորդ չենք համարում դնել այստեղ մի քանի ուղղագրութիւններ՝ որոնք ճիշտ կամ հաւանական ենք գտնում, սպասելով որ Սեբէոսի մի ասպից լաւագոյն հրատարակութիւն, որին շատ կարիք կայ, ուղղագրէ և ուրիշ բազմաթիւ թերութիւնները։ Սեր ցուցակում չեն մտել այն

<sup>1)</sup> Համեմատել Ասողիկ եր. 89—98=Սեր. 119—123. Ասողիկ 112—113=Սեր. 30—32 և այլն։

ուղղադրութիւնները, որոնք առաջարկուած են եղել արդէն ուրիշներից, և նրանք՝ որոնք աւելի աննշան երեւցան մեզ՝ այստեղ զետեղելու համար:

Ա.— Բ դպրութեան մէջ, Պարթևների ցանկի և Մամիկոնեանների վերաբերեալ հատուածի մէջ, ինչպէս ասել ենք՝ պակասում է մի հատուած: Բնագրի աղաւղութիւնն այստեղ ակներև է: Արտաշիր Սասանեանի մասին խօսելով՝ Սեբէոսը ասում է. «... թագաւոր է ինքն, և լետ նորա պայազատք նորին զնոյն ձև աւրինադրէն զՄամիկոնէիցն սակա ազգաց զնեղութիւնն: Քանզի— ոչ են սոքա որդիք ազգածնին Արամանեկալ» և այլն: Ասողիկը, որ Պարթևների ցանկն արտագրում է Սեբէոսից՝ ունի. «և լետ նորա պայազատք նորին զնոյն ձև աւրինակի»: սրա վրայ էլ վերջանում է զլուսը Ասողիկի մէջ և սկսում է նոր զլուս՝ Արշակունիների մասին: Աղաւղութիւնը այստեղ կարելի է բացատրել կամ նրանով, որ Մամիկոնեանների հատուածը միջանկեալ է, կամ՝ որ այստեղ խօսքը պակաս է, թուզթ գուրս ընկնելով: Առաջին ենթադրութիւնը անհաւանական է նրանով, որ Սեբէոսի պատմութեան մէջ ոչ մի չարմար տեղ և առիթ չկայ այսպիսի բովանդակութեան հատուած զետեղելու: Իսկ երկրորդ ենթադրութիւնը հաւանական է երկու պատճառով: Նախ՝ որ հայ հեղինակը, զնելով Պարթևների ցանկը ըստ Խորենացու՝ չէր կարող զանց անել ըստ նոյն մատենագրի զնել և Արշակունիների ցանկը (քանի որ Ա. դպրութեան մէջ

եղածը շատ բանով տարբերում է Խորենացուց): Նա քիչ վերը լիչել էր, թէ Արշակ քաջից լետու թագաւորական տոհմը բաժանուել է Պահլաւ և Արշակունի հարստութիւնների և զնում է Պահլաւների ցանկը. բնական էր ուրեմն սպասել, որ նրանցից լետու զնէր և Արշակունիների ցանկը (ինչպէս և Ասողիկը ունի), և նրանց հասցնէր մինչև այն ժամանակ, երբ վերջացաւ Պարթևաց հարստութիւնը, որպէսզի այնուհետև, Սասանեաններից սկսած, զուգընթաց տանէր երեք ազգերի թագաւորների ժամանակագրութիւնը: Երկրորդ՝ որ այս ենթադրութիւնն ընդունելով՝ Մամիկոնեանների հատուածն այստեղ բնական իւր տեղումն է լինում. որովհետև, հեղինակի ասելով, Մամիկոնեանները Հայաստան են եկել Խոսրով մեծի ժամանակ՝ ուստի Խոսրովի պատմութեան մէջ չարմար կլինէր լիչել նրանց զալստեան մասին. իսկ պակասող հատուածը պէտք է Խոսրովի լիչատակութեամբ վերջանար, որի ժամանակ վերջացաւ Պարթևների հարստութիւնը: Եւ արդարև, շարունակութեան մէջ տեսնում ենք Արտաշրի հետ՝ Խոսրով մեծին լա տարում, առանց լիչելու նրա առաջին տարիները և պատերազմները Արտաշրի դէմ:

Բ.— Միջանկեալ ենք համարում հետեւեալ հատուածը Բ. դպրութեան մէջ. (Ա. տպ. եր. 35., Բ. տպ. եր. 16). «Սա (այսինքն Յուլիանոս «նզովածն») որդի է քեռ մեծին Կոստանդիանոսի. թողուլ

զքրխտոնէութիւնն և եղև կռայաշա: Ի նոյն ա-  
 ւուրս երանելին Աթանաս հալածեցաւ չԱրիանո-  
 սացն՝ զոր Սոկրատն պատմէ. Ի սուրբն Աոտան-  
 ղիանոսէ սկսանի և մինչ ի փոքր Քէոզոսն դան-  
 սրբոց և զսրբոց գործքն և զհայրապետացն զուղղա-  
 փառութիւնս: Յուլիանոս և Գաղիանոս, որդիք  
 Գաղմատիանոսի ումմն, մնացին որք ի մէկ հաւ-  
 րէ, և ոչ ի մարէ, զոր սնոցց Աոտանոց բարե-  
 պաշտն. յետոյ եղին կռայաշա: Աոտի քոյր թագա-  
 ւորին Աոտանոցէ, կին Աիկիանէ թագաւորին՝ որ  
 ի բռնազբաւսելն մեռաւ: Միջանկեալ և անհա-  
 րադատ ենք համարում այս հատուածը զանազան  
 պատճառներով. 1) Բ զպրութիւնը պարունակում  
 է ժամանակագրութիւն, և շատ քիչ անգամ՝ տա-  
 լիս է պատմական կարևոր տեղեկութիւններ. իսկ  
 այս հատուածը, բացի այն որ ժամանակագրութիւն  
 չէ պարունակում՝ մի հաւաքումն է մանր-մունք,  
 կցկտուր, անկապ, երկրորդական տեղեկութիւն-  
 ների, կրօնական, մատենագրական, ընտանեկան  
 բովանդակութեամբ, որպիսի նիւթ չկալ և չէր կա-  
 րող լինել Բ զպրութեան ծրագրի մէջ: Նթէ Բ զը-  
 պրութեան հեղինակը արժան էր համարել այստեղ  
 լիչել Աթանասի հալածուելը, Աոտի թագուհու  
 մահը և այլն, ինչո՞ւ նա զանց պէտք է անէր լիչել  
 և ուրիշ շատ նմանօրինակ, բայց շատ աւելի նշա-  
 նաւոր դէպքեր, թէկու՞ղ հէնց նոյն Սոկրատից  
 (≡ փոքր Սոկրատից): 2) Այս հատուածի լեզուն և

ոճը ստոր են և ամենին չեն շարմարում Բ զը-  
 պրութեան միւս մասերի լեզուն, որ կանոնաւոր  
 է, բարձր և կապակցուած: 3) Անհաւանական է  
 ենթադրել, որ Բ զպրութեան հեղինակը միայն  
 այստեղ, Յուլիանոսի անունից լետոյ, այդքան մի-  
 մեանց հետ կապ չունեցող քաղուածներ անէր Սո-  
 կրատից, իսկ միւս տեղերում ոչ մի բան չառնէր  
 նրանից: 4) Վերջապէս, եթէ լիրաւի Բ զպրու-  
 թեան հեղինակը Սերէոսն է, ինչպէս աշխատեցինք  
 ապացուցանել՝ ապա նա չէր կարող այս հատուա-  
 ծում գտնուող տեղեկութիւնները առնել փոքր Սո-  
 կրատից, որ Սերէոսի պատմութեան գրուելուց մօտ  
 35 տարի լետոյ է թարգմանուելը—Նորայր Բիւ-  
 զանդացին («Հանդէս ամսօրեայ», 1893, եր. 276)  
 այս հատուածը համարում է հարադատ մասն Բ  
 զպրութեան և Սերէոսի ձեռքով քաղուած փոքր  
 Սոկրատից: Այս կարծիքը վերոլիչեալ (1, 2, 3)  
 պատճառներով մենք չենք կարող ընդունել:

Այս Բ զպրութեան, ինչպէս և պատմութեան  
 միւս մասերում կան և ուրիշ մանր միջանկեալ  
 կտորներ, որոնք կարևորութիւն չունենալով՝ զանց  
 ենք անում լիչել:

Գ.— Սերէոսի պատմութեան սկզբներում (Ա  
 տպ. եր. 53—63, Բ տպ. եր. 30—36) մի քանի  
 տեղ խօսքն անկապ է և անհասկանալի՝ այն պատ-  
 ճառով, որ ձեռագրի մէջ մի քանի թուղթ լետ և

առաջ են եղել դասաւորուած և մի հատուած՝ ուրիշ տեղ է զետեղուած:

Աղաւաղութիւնն սկսում է հետեւել տեղից (Ա տպ. եր. 53, Բ տպ. եր. 30). «Ապա եկն ինքն արքայն Անուշ Ընուան Խոսրով որպէս զՎնդոյն կապեալ եղ ի Գրուանդականի»<sup>1)</sup> և այլն, և վերջանում է հետեւեալ տեղում (Ա տպ. եր. 63, Բ տպ. եր. 36). — «Եւ էին երկու որդիք սպարապետիս այսորիկ, անուն միոյն Վնդոյ եւ երկրորդին Վստամ: Եւ զաւրս աշխարհին Հայոց ընդունէին գումարել» և այլն: Այս աղաւաղուած հատուածի մէջ կայ մի ուրիշ աղաւաղութիւն (Ա տպ. եր. 59, Բ տպ. եր. 34), որտեղ երբ պատմուած է, թէ ինչպէս Մօրիկ կայսրը Ներսէս ստրատելատին զօրքով օգնութեան զրկեց Խոսրովին՝ անկարծ ընդհատուած է պատմութիւնը, մէջ է ընկնում Վնդոյի և Վստամի մասին անկապ տեղեկութիւն, ապա, դարձեալ անկապ կերպով, յաջորդում է ցանկ այն մարզպանների, որոնք եկել են Հայաստան:

Այս աղաւաղութիւններն ուղղելու համար՝ բաժանենք վերոյիշեալ երեսները չորս կտորի:

<sup>1)</sup> Բ տպագրութեան մէջ պրօֆ. Պատկանեանը այստեղ նկատելով մի սխալ և պատմական հակասութիւն աշխատել է ուղղել այսպէս. «Ապա եկն ինքն արքայն (Որ մի զ զ որդի) Անուշ Ընուան Խոսրով(ու), որ զՎնդոյն կապեալ եղ ի Գրուանդականի»: Բայց այս ուղղագրութիւնը լաջող չէ:

Առաջին կտորը սկսում է՝ «զՎնդոյն կապեալ եղ ի Գրուանդականի»... և հասնում է մինչև «պանցեն զՈրմիզդ և նստուցեն թագաւոր զորդի նորա զՍոսրով» (Ա տպ. 53—56, Բ տպ. 30—32). (1): Երկրորդ կտորը՝ անմիջապէս յաջորդող հատուածից սկսեալ—«Խօրհուրդ արարեալ լուծանել զնա և աւնել իւրեանց առաջնորդ»... մինչև «զՆերսէս ստրատելատ լՍտրուոց և զզաւրս նոցա... ըստ հաղարաւորաց, ըստ գնդից, ըստ զբաւշից իւրեանց» (Ա տպ. 56—59, Բ տպ. 32—34). (2): Երրորդ կտորը՝ անմիջապէս յաջորդող հետեւեալ հատուածը. «Արդ՝ վասն զի մայր շապհոյ դուստր Ասպարապետին այնորիկ, որ էր նախարար տանն Պարթեաց, որք մեռեալ էին, քոյր Վնդոյի և Վստամայ. և ինքն Վնդոյ էր այր իմաստուն և խորհրդական, և սրտիւ արիագոյն» (Ա տպ. 59, Բ տպ. 34). (3): Զորրորդ կտորը՝ անմիջապէս յաջորդող պատմութիւնը, սկսելով «որպէս ասացի. և արար պատերազմ մի մեծ ի Մեղիտինէ» խօսքերով՝ մինչև «Եւ էին երկու որդիք սպարապետիս այսորիկ, անուն միոյն Վնդոյ և երկրորդին՝ Վստամ» խօսքի վերջը: (Ա տպ. 59—63, Բ տպ. 34—36). (4):

Արդ այս կտորները պէտք է դասաւորել հետեւեալ կարգով. 4—1—3—2: Այս ժամանակ կըստանանք բոլորովին կապակցուած իմաստ.—«Ապա եկն ինքն արքայն Անուշ Ընուան Խոսրով (4) որպէս ասացի, և արար պատերազմ մի մեծ ի Մեղիտինէ....

Աւ էին երկու որդիք սպարապետիս այսորիկ, ա-  
նուն միոյն Վնդոյ և երկրորդին Վստամ՝—(1)  
զՎնդոյն կապեալ եզ ի Գրուանդականի... սպան-  
ցեն զՈրմիզդ և նստուցեն թագաւոր զորդի նորա  
զԽոսրով:—(3) Արդ՝ վասն զի մայր շատհոյ, դուս-  
տըր ասպարապետին այնորիկ, որ էր նախարար  
տանն Պարթեաց, որք մեռեալ էին, քսլը Վնդոյի  
և Վստամալ, և ինքն Վնդոյ էր ալ իմաստուն և  
խորհրդական և սրտիւ արիագոյն՝—(2) խորհուրդ  
արարեալ (=արարին) լուծանել զնա և առնել իւ-  
րեանց առաջնորդ... զՆերսէս ստրատելատ զԱ-  
սորուց և զգաւրս նոցա ըստ հազարաւորաց, ըստ  
զնդից, ըստ գրաւչից իւրեանց»: Սրանից վտայ  
գալիս է բնական շարունակութիւնը.—«Աւ զգաւրս  
աշխարհին Հայոց ընդունէին գումարել, որք ի ժա-  
մուն առձեռն գտեալ, և անցեալք ի հանդիսի,  
իբրև հազարք հնգետասանք» և այլն:

(Երրորդ կտորի մէջ «շապուհ» բառը («մայր  
շապիտ») ոչ թէ չատուկ անուն է, այլ հասարակ  
անուն, փոխանակ ասելու՝ արքայորդի (շահզադէ):  
Խորենացին (Բ, հէ) մեկնել է այս բառը.—«և վա  
նորա որդի նորին, որ անուանեցաւ Շապուհ, որ  
լսի՝ արքայի մանուկ (var. սրբայամանուկ): Աքքէտը  
երևի ի նկատի է ունեցել Խորենացու այս ճիշտ  
մեկնութիւնը շապուհ բառի, բայց դործ է ամել  
անլաջող կերպով՝ իբրև հասարակ անուն: Իսկ  
հատուածի իմաստը, վերոյիշեալ կերպով դասաւ-

րելուց վտայ, պարզ է.—Պարսից մեծամեծները  
խորհուրդ են անում սպանել Որմիզդին և թագաւո-  
րեցնել նրա մանկահասակ որդուն Խոսրովին. բայց  
որովհետև այս արքայորդու (շապուհի) մայրը, Որմիզդի  
ձեռքով սպանուած սպարապետի դուստրը, քսլը  
էր Վնդոյի և Վստամի (որոնցից մէկին Որմիզդ  
բանտարկել էր, իսկ միւսը փախել էր)՝ ուստի  
խորհուրդ են անում Վնդոյին բանտից ազատել և  
Վստամին փախուստից վա կանչել, որպէսզի  
դան ապստամբութեան զլուխ կանդնին և իբրև  
քեռիներ՝ պաշտպանեն իրանց քրոջ որդուն, Խո-  
սրովին 1):

Գ.—Բառերի և թուերի աղաւաղութիւն-  
ներ 2):

- Բ տպ. 13=Ա տպ. 30. Նշիանոսի կայսեր, = Արև-  
զիանոսի կայսեր:  
" 14= " 32. Յամին Լ. երորդի Արտաշրի: =  
Յամին լր. երորդի Արտաշրի:  
" 15= " 33. Վախճանի կայսրն Յունաց  
Մաքսիմիանոս, և թագաւո-

1) Խոսրովի մօր և քեռիների մասին տես Nöldeke,  
Tabari, հր. 145 և ծան. 4, հր. 273 և ծան. 1 և այլն—  
շատ նման Սերէոսի աւանդածին:

2) Թուերի աղաւաղութիւնները, Բ զպլուրթեան մէջ,  
ուղղուած են նոյն ցանկի նախընթաց և հետեորդ թուերի  
համեմատութիւնից:

րէ Գալիանոս:—Վախճանի կայսրն Յունաց Կոստանդիանոս, և թագաւորէ Մաքսիմիանոս և Գալիանոս:

- Բ տպ. 16=Ա տպ. 35. Ծապուհ որդի Որամազդայ ամն հ:—...ամն հդ.
- ” 18= ” 38. Եւ լամի Յազկերտի թագաւորէ Յունաց Կոստանդիաս: =Եւ չ.ա ամի Յազկերտի...
- ” ” = ” ” Թագաւորէ Յունաց Անաստաս ամն խէ:—ամն իւ:
- ” 19= ” 39. Թագաւորէ Խոսրով որդի Կաւատայ ամն խէ:—...ամն խը:
- ” 20= ” 40. Յամի ի. երորդի Խոսրովայ Պարսից արքային: = Յամի իբ. երորդի...
- ” ” = ” ” Երակղոս ամն ի. Արտաշիր զառաջինն: = Երակղոս ժը. Արտաշիր զառաջինն:
- ” ” = ” ” Եւ լերկրորդ ամի միաբանեալ Պարսից արքայի ընդ Իսմայէլացիսն: = Եւ լերկրորդ ամի Յազկերտի Պարսից արքայի միաբանեալ Հռէից ընդ Իսմայէլացիսն <sup>1)</sup>:

<sup>1)</sup> Տես Սերէոս, գլ. Լ.

- Ա տպ. 24—Բ տպ. 41. Յազկերտ է. երորդ. Կոստաս զառաջինն:—Յազկերտ ժ. երորդ...
- ” ” = ” ” Կոստանդին ժա. արքայն Իսմայէլի թ:—... արքայն Իսմայէլի ժՅ:
- ” 27= ” 49. Եւ կալեալ ճանապարհ գնաց ի տեղի մի:—Եւ կալեալ ճանապարհ գնաց ի ՄեղիՏի (նէ) <sup>1)</sup>:
- ” ” = ” ” Երթեալ ամրացան ի գետն մեծ:—Երթեալ ամրացան ի գետըն մեծ:
- ” 30= ” 54. Եւ սուղ ինչ աւարան ի մեծամեծ դանձուցն:—Եւ սուղ ինչ աւարաման... (Տես և երես 44 «աւարաման»), և Ասող. եր. 113):

<sup>1)</sup> Միջին երկաթագրի Մ և Տ զրերի նմանութիւնից ձաղաձ ազաւազութիւն: Տես և եր. 6. Յագարա մ, Յիրա մ — ուղղուած՝ Յագարա ա, Յիրա ա. — եր. 23 տեսանել — ուղղուած՝ մեաննել, և ներքեւ Վաղենտին ան տի — Վաղենտին ան մի տ — Մելիտինէի այս կտիւն է, որը պատմագիրը չի շում է քիչ չետոյ. — «Ապա եկն ինքն արքայն Անուշ Բառան Խոսրով, որ պէս ասացի (եր. 26 — 27), և արար պատերազմ մի մեծ ի Մեղիտիսն է, չորում պարտեցաւ և գնաց:» (եր. 30 և 34):

- Ա. սույ. 44=Բ. սույ. 75. Առեալ զգանձն արքունի՝ հասուցեն առ նա այնպէս իմն փութանակի: Գլտացեալ եւ վասն իրացն եւ իշխանքն չունականք...=Առեալ ըզգանձն արքունի՝ հասուցեն առ նա: Այնպէս իմն փութանակի գլտացեալ վասն իրացն եւ իշխանքն չունականք...
- ” 50= ” 83. Մինչդեռ նա նստէր ի ջերմի:==...ի ջերմի (Տես 4 տող չետոյ):
- ” 51= ” 85. Կռուալ ռազմի նիզակամուխ ճակատի: = Կռուել ռազմ ի նիզակամուխ ճակատի:
- ” 55= ” 91. Անցուցանել լԱփրիկէ, եւ առնել նոցա անդ ի մէջ նոցա, եւ առնել զնա անդ ի մէջ զաւրացն՝ որ...=Անցուցանել լԱփրիկէ եւ առնել զնա անդ ի մէջ զաւրացն՝ որ...
- ” 83= ” 132. Քանզի (var. քանի) ոչ միսիթարեաց զմեզ... լիչեցուցանելով զմեզ զառաջին երթեւեկն: = Քանիովն (քանիճն) միսիթարեաց զմեզ... լիչե-

- ցուցանելով մեզ զառաջին երթեւեկն: (Մորեստոսի թուրթը շատ աղաւաղուած է, մանաւանդ կէտադրութիւնն անդոճացուցիչ է, որով անհասկանալի է դառնում):
- Ա. սույ. 93=Բ. սույ. 148. Նստեալ ի վերայ նուստ երիվարի: = ...նուոց երիվարի:
- ” 96= ” 152. Արձակէ զՌաշ ոմն (var. զըռաշան ոմն) իշխան... եհաս Ռաշն այն... Եւ զՌաշն այն մեծարեալ...=Արձակէ զՌաշան ոմն իշխան... եհաս Ռաշնայն... Եւ զՌաշնայն մեծարեալ...
- ” 97= ” 152. Կնքեալ աղ ըստ առաջին աւրինակին զՅուդասա... ընդ Յուդասա:
- ” 102= ” 161. Որ ի խոր վիրաւորեաց (ձեռ.՝ որ ի խորխոռունեաց): = Որ ի խոր խոցեաց:
- ” 108= ” 170. Ընդ ճանապարհս ձորոյ լաշխարհն Տարաւնոյ (Ա. սույ. Տարնոյ): = ...լաշխարհն Ասորոց: (Ըստ ցուցակի վրիպակաց Ա. սույազրին):

- Ա. տպ. 113 = Բ. տպ. 177. Խորհէր Վաղենտին անտի ի միտս իւր: = ... Վաղենտին անմի(տ) ի միտս իւր:
- „ 139 = „ 216. Բայց այլուր և հրամայեմ... = Բայց այլուր ուր և հրամայեմ:
- „ 152 = „ 237. Երեք (որդիք) Համադասպայ (և) եղբայր մի ի պատանդի: (Փակագծի մէջ դրուած բառերը հրատարակիչներինն են՝ աղաւաղութիւնը ուղղելու նպատակով): = Ե: էր Համադասպայ եղբայր մի ի պատանդի:

### ՅԵՒԵԼՈՒՅԺ Բ.

Մի պատահիկ Ստեփանոս Տարանացու գրուածքից <sup>1)</sup>:

«Յեա Աւետարնին քարոզութեան սբ Առաքելոցն և Առաջին լուսատուին մերոյ, Թաղէոսի, ազդամար սբ Հողոցն, 'ի վերին Հայաստանէ հնաս 'ի քղքն Կապադովկացոց Հայաստան աշխարհիս, և եթող անդ աշակերտն իւր, Թէոփիլոս, կարգելով եպս չալմ վիճակին, որ Անտիոքացի յորջորջէր: Առ սա գրեաց ասնն սքն Ղուկաս, զաւետարանն և զպրակս Առաքելոցն: Եւ ինքն Առաքեալն դարձաւ վերստին 'ի վերին Հայս: և Թէոփիլոս զկնի վրդպեալին իւրոյ Թաղէի, եկաց անդ Կեսարիա իբր չամս, իդ: ուր բարւոք կովրելով զԵկեղեցին Քրիստոսի, փոխեցաւ չաստեացս: Սորա աշակերտ և չալորդ եկաց Երուանդ Եպս ի նահանգէն Վամրաց. ասնն զամանէ թէ լեալ է Բ-դ Եպս Կապուտկացոց աշխարհին: Սա եւ իբր ժգ ամ հովուելով զԵկեղեցին, վճարեաց զկեանս իւր: Սորին չալորդ եկաց Սիւքիանոս եպս ի նոյն նահան-

<sup>1)</sup> Արատարուած «Յրարատ» ամսագրից, Ա. տարի (1868), Կր. 104—105:—Տես ալս գրքում Եր. 55:—Այս հատուածն արտատպուած է և Սամ. Անեցու պատմութեան ծանօթութիւնների մէջ, Կր. 281—283.

զէն Աեսարիոյ, որ բզմ սքանչելիս առնէր, սա լետ  
 հովուելոյ զՆկեղեցին, լամս: վճարեաց զկեանս իւր  
 բարի մահաւամբ: Սորա լաջորդեաց Մէրեան, կամ  
 Միհրան եպս որ էր քղք: Նդեսացի, սա կովրել  
 զՆկեղեցին, իբր լամս, ժգ: Ապա Ադրբիոս եպս,  
 իէ, ամ, սա նհտկել եղև լերկիրն իւր Սերաստիալ,  
 վս 'ի Քս հտցն: Ապա զկնի սորա Վլասիոս եպս,  
 լամս: կովրեց զհտցեալս 'ի Աեսարիա: լետ սր  
 Վահան եպս, լամս, ժբ: նորին լաջորդ Ալփիանոս  
 եպս, լամս: Ապա Մեհրուժան եպս, որ կովրեց զե-  
 կեղեցին Քսի, լամս իե: (Պենտանոս, քրոյ լաջորդ  
 Աղեքսանդրոսն, լիշէ. տես Նւսերի, պամ. Նկեղ-  
 դպ. զ, զԼ, ժգ: 1) Սր լաջորդ եկաց Աղեքսանդր  
 Նպս, որ ազդամբ սր Հոգւոյն դնաց լերտղէմ, և  
 անդ կառավարեաց հաւատացեալսն Քսի, փոխա-  
 նակ ձերոյն Նարկեսոսի եպսապետի: ոպ և ուսու-  
 ցանէ քեզ Նւսերի: Սա իբր, ժ, ամ կովրեց կար-  
 ցոց եկղցին: զկնի սր, Արքեղայոս եպս լամս: լետ  
 սր, լաջորդեաց Պարմէլիանոս եպս, որ և արար  
 զպամութս եկեղեցւոյն, և մեծի խորովու թղբին  
 մերոյ: Սա էր աշակերտ Արտղինէսի, և կրեաց վը  
 ճմարտութե բզմ հլծնս, և մքոց բանիւ և թղթով  
 ընդ դէմ հերձապետին Պաւղոսի Շամշտացւոյն: և


1) «Փակագիծներով նշանակածներս (Պենտանոս և  
 այն) լուսանցը գրուած էր օտար գրիչով և նորագիր»:  
 (Ծանօթ. «Ռարբատի» լօղուածի հեղինակին):

փոխեցաւ 'ի կեանս բարի մահաւամբ: եկաց առաջ-  
 նորդուե, լամս, իբ: Ապա Աղեմէոս եպս, սա լետ,  
 ժե, ամ կովրելոյ զՆկեղեցին, նահատակեցաւ ի  
 ժմնկս Նիոկղետիանոսի Ապսեր Հռովմայեցոց, 'ի  
 Ղիւսիոս դքսէն: Ապա զկնի սորին լաջորդեաց սքն  
 Ղեոնդ, որ զլուսաւորիչ Հայրն մեր ձեռնադրեաց  
 Արք-եպս և Քնանպետ Տանս Հալոց: և եկաց սա  
 բզմ ամս խղղութթ և փառօք մինչև 'ի սր ժողովն  
 Նիկիոյ: որ եղև հրամանաւ մեծի կայսեր Աոստան-  
 զիանոսի, և զկնի ժողովոյն վախճանեցաւ սրբութթ  
 կովրել զհօտ իւր իբր լամս, լբ: Չկնի սորա լա-  
 ջորդեաց Ղուկիանոս կամ Յղիւկիանոս, որ գրեաց  
 բզմ պիտանի ճառս Նկղցւ: Սա կացեալ լաթու-  
 իւր իբր լամս, ժբ: Սորա լաջորդեաց Տիանէոս կամ  
 Նիոնէսիոս լամս, իե: զկնի սորին, Նւսերիոս, որ  
 գսքն Ներսէս ձեռնադրեաց, սա կացեալ լաթու-  
 իւր սրբութթ, իբր լամս ժթ: լետ սորա լաջորդեաց  
 սքն Քարսեղ, որ 'ի նոյն Աեսարիոյ զամրաց ծնեալ  
 էր: Սա երջանիկ և արղիւնաւոր գտաւ ի սր Հարս,  
 զի բզմ ճառս և կանաւնս գրեաց, և բարուք կա-  
 ուավարեալ զՆկեղեցին Քսի փոխեցաւ առ ցանկա-  
 լին և լոյսն բնաւից Քս: Աացեալ 'ի Հայրպոտ-  
 թեան լամս, : Ապա Նղադիոս եպս, որ գրեաց  
 զվարս սքն Քասիլիոսի վրդպտին իւրոյ: Սա կա-  
 ցեալ 'ի լաթու իւր իբր լամս, ժե: և վճարեց զկե-  
 նըս իւր: (Փիրմոս, որ գտաւ լեփեսոսի սր ժղն 'ի

դատապարտութիւն ամպարշտին Նեստորի: ասեն  
թէ սա զկնի եղաղիտսի չաջորդեաց»: <sup>1)</sup>

Եւ Քսի լուսոյն մերոյ փառք լւտնս:

Անա ալսքան սակաւուք բաւեսցի, և զիս վի-  
շելոյ մի դանդաղիր սով ընթերցաւ, աղաչեմ:  
Թ՛վն չնթ:



---

<sup>1)</sup> «Փակագիծներով նշանակեալ փլումս և այլն տե-  
ղերը օրինակին լուսանցը գրուած էին»: (Ծանօթ. «Արա-  
րատի» լօղուածի նշղինակին):

ՀՐԵՏՈՒՆԿԱԿԱՆ ԲՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀՐԵՏՈՒՆԿԱՆ ՓԻՆՆԵՐԸ

1879 թ.	1	Թաւամազ մկրտ. (սպառ.)	Թարգման. օր. Ե.	— 40
1880 թ.	2	Կարմիր լապտեր,	Ս. Մարկոսեանի	— 30
	3	Մանկական երգեր,	Կամուս-Քաթիկոսայի	— 15
	4	Թոմաս եղբոր անակր,	Թարգմ. օր. Ե. Ս. Մ.	— 45
	5	Մտերիւ և նրա ջնջելու շնոր.	(սպառ.) Ս. Ք.	— 10
	6	Նեղ և խոնաւ ընտելարանների մասին,	Է. Ա.	— 10
1881 թ.	7	Մոլոխի խորհրդայնայ Պատմութիւն Հայոց (սպ.)		— 80
	8	Փոքրիկ ձեւարկ գործնական անասուններ		— 50
	9	Կամուս-Քաթիկոսայի բանաս. (սպառ.)		— 50
	10	Որբնիցօնի պատմութիւն. Թարգմ. Կ. ք. Ա.		— 60
1882 թ.	11	Ուխտաւորք, աշխ. Ս. Պատկան (սպառուած)		— 75
	12	Գանուակ և Առաստանիկ, (միկտիկ, Թարգմ. Ե.)		— 25
	13	Սայաթ-Նօվայ, աղղային երգիչ.		— 5
	14	Ծննդեան պատմութիւնք.		— 10
	15	Ազաժմանդեկեայ պատմութիւն.		— 1
1883 թ.	16	Վելլական լրագրիչայ, Ա. Սրբաբանի.		— 50
1885 թ.	17	Վանայ սաղ, Նէրննիլ. Ա. Հասար.		— 75
	18	Փնջիկ, գրեց Աղէբանդը Արարատան		— 20
	19	Նամուս, վէպ. Ներվանդադէկ (սպառ.)		— 1
	20	Սահվանոսի Տար. Ստղիան Պատմ. տիկեր.		— 2
1886 թ.	21	Թիֆլիսեցց ժողովուրդի կեանքը, Կ. Ս.-Աղէբս.		— 1 50
1887 թ.	22	Ղևոնդ պատմագիր		— 2
1888 թ.	23	Սըրազան պատմութիւն (սպառ.) { Ս. ք. Սա-		— 30
	24	Կասաղիք կրօնի (ուսուցչ. համ.) { Հակեանի.		— 1 75
1889 թ.	25	Սոկրատէս, Թարգմ. օր. Թ. Սահիոյ (սպառ.)		— 10
1890 թ.	26	Պատմութիւն Հայոց, Պայտանեանի (սպառ.)		— 1 50
	27	Ուղեցոյց գործնական շերամայ. Ա. Մ. Ե.		— 40
1891 թ.	28	Ժամանակագրութիւն Հայոց, Յ. Գարգիլի.		— 1 25
	29	Վարդ-Ռէպիլ, Սպիլի, Թարգմ. Ե. Յ.		— 10
	30	Նալ և Կամայեանի թիւ, Յ. Նովոպի.		— 20
	31	Ստուած գիւէ արդարն ու մեղադրը, (սպառ.)		— 7
	32	Հասարակ Սպիտարին, Վայրնիլի.		— 10
	33	Լինհարդ և Վերարդի, Պեսալոյցցիլի		— 25
	34	Յաւելուած ի զիր պատմութ. Ստղիան.		— 20
	35	Նաւի փոքրաւորք. Մ. Սոզնէլ, Թարգմ. Յ. Լ.		— 15
	36	Ուսնեց Յովսէփ, Ն. Սպիլի, Թարգմ. Ի. Յ.		— 15
	37	Մեծապատիւ մուրացիաններ Յ. Պ. (սպառ.)		— 40
	38	Աղղային ջոջեր, Յ. Պարանեանի (սպառ.)		— 1

32	Իր աւրա, Սժէշիօհ	— 15
40	Շնիկ, Առլիխովայի, Թարգմ. օր. Ա. Ա. (սպառ.)	— 5
41	Շնեղրին, Երև. ք. զրոյցներ.	— 10
42	Տարասինցի Տարաս, Գողչի, Թ. ք. Թ. Զ.	— 40
43	Օրշնանի կոյսը, Թարգմ. Յ. Խ. (սպառուած)	— 25
44	Յար. Արարատեանի կեանքը, Թարգմ. Պ. Պ.	— 75
45	Գաղափարական քաջանայ, (սպառուած)	— 75
46	Րհամնիքի յոյսը, Թարգմ. օր. Մ. Տ. Յ. (սպառ.)	— 10
47	Հոսոյսի ձևաակարք, Պարոնեանի (սպառ.)	— 1
48	Քիմիա, Բահիի, Թարգմ. Ա. Մէլք. Սլլաչի.	— 40
49	Շնեղրին, Երև. ք. վէպիկ, Թարգմ. Մ. Աղաբ.	— 15
50	Ստոմայ ճաւեր, Կարեգին ստրկաւազի	— 50
51	Ջաւախի բուրմուխը, և Լալայեանցի	— 25
52	Գատակարակութիւն, Սպինս. Թարգմ. Մ. Ղ.	— 1
53	Սրուսան, Նմիգտի, Թարգմ. Ա. Մ. Քալանթար	— 20
54	Իան Կիրան, Սէյլանի	— 20
55	Տարաս-Բուրա, Ն. Գողչի, Թարգմ. Մ. Ա.	— 40
56	Փշրանքներ, Վ. սարկ Նովոսիլեանի	— 50
57	Երկու քոյր, Ղ. Սղայեանի	— 25
58	Դրախտի բնաանիք զ. սպ. Խրիմ. Հայր. (սպառ.)	— 60
59	Սիրաբ. և Սամուէլ, զ. սպ. (սպառ.)	— 50
60	Փարձանքների լստ-կարան, Բոբրեթի, Թարգմ. Օհ.	— 20
61	Մակրիթ, Շնկապիլի, Թարգմ. Ա. Մալխասեանց.	— 50
62	Պատեօր, Ա. Կարեգեանի և Ա. Քալանթարի	— 20
63	Խօրեա, բժ. Վաչ. Սիճրոնա	— 5
64	Խարաղի սղայ, Ա. Քամուլեանի	— 40
65	Հանրամատչելի բնախօսութ., Վ. Լուսինկիչի	— 1
66	Պարասին աղջիկը, Երէզնի, Թարգմ. Վ. Շ.	— 80
67	Խաչ Խոր, Յ. Աղաբեանի.	— 60
68	Էլիսէա, Կաղբէի, Թարգմ. Տ. Փերումեանի	— 45
69	Չորրորդ մտքը, Վան-Մէյկի	— 5
70	Դրախտի բնաանիք զ. սպ. Խրիմ. Հայրիկի	— 50
71	Սիրաբ. և Վամուէլ, զ. սպ.	— 50
72	Չոր, ցնոր Հողի մասին, Ա. Քալանթարի	— 15
73	Ստղաբաշխութիւն, Մյումնար., Թարգմ. Տ. Յ.	— 1
74	Մանուկները Հողատարութիւն, (սպառուած)	— 20
75	Մուկուչի Հաւիլը, Պ. Նեղլիանովի, Թ. Գ. Ա.	— 15
76	Երկու Հեքեաթ, Կարմէն Սելիմայի, Թ. Ստ. Մ.	— 10
77	Կովկասի գերին, Թարգմ. Պ. Պ. (սպառուած)	— 20
78	Մեծուսի բաղիկը, Թ. Ղ. Ա. (սպառուած)	— 5
79	Վէպիկներ, Շիրվանցաղի	— 40
80	Գարբիեթի, Ա. Քալանթարի (սպառուած).	— 40
81	Պեպոս Գուրեան, Սըլահ Զօպանեանի.	— 50

1892 Թ.

1893 Թ.

1894 Թ.

82	Շնիկի կալանաւորը, Մ. Հարամանի, Թ. Կ. Վ.	— 60
83	Հասկա, Շնկապիլի, Թ. անդ. Յ. Խան-Մասեհ.	— 75
84	Քննական արտ. Հայոց, Ա. Կարապաշ, մասն Ա.	— 1
85	Նոյն, մասն Բ.	— 1
1895 Թ.	86 Նոյն, մասն Գ.	— 4
	87 Նոյն, մասն Դ.	— 1
	88 Պատմութիւն Հայոց, Ա. Պալասանեանի, բ. սպ.	— 1 50
	89 Ակնայ Հնու-Թիւրք, Յ. Ճանիկեանի	— 2
	90 Ուրբեխեանցի մանուկը, Այդալի զրոյցները	— 10
	91 Կօշիկարը Երաժեշտ, Տրատչիլի	— 5
	92 Խնձորենիների երկրում, Այդալի զրոյցները	— 10
	93 Երկու եղբայր, տիկ. Մոսկովների, Թարգմ. Պ. Պ.	— 60
	94 Մեծայ. Մուրացիների, Պարոնեանի, զ. սպ.	— 40
	95 Նախադրութիւն բուսաբանութեան, Ա. Քիշիշ.	— 80
	96 Հաղապի մէկը, Ն. Մամիկեանի	— 60
	97 Ինչպէս կողմէ, Շնկապիլի, Թ. Յ. Խան-Մասեհ	— 50
	98 Կարոյական առողջապահութ. բժ. Վ. Երզր.	— 50
	99 Կեղեքէ, վէպ, Վ. Խ. Նիմրովիչ Կանչեհիօհ.	— 10
100	Գոնդ արմատեանի, Վ. Կարբիլի, Թ. Հ. Ասաբ.	— 5
	101 Գոնդ Սղայի	— 5
	102 Ճանապարհորդ զորարը,	— 3
	103 Մանկական լստ, պատկերներով.	— 1 20
1896 Թ.	104 Կենդանիների երկրանքը, Թարգմ. Շիրվանցաղի.	— 15
	105 Վրէժ, Վի գր-Սօպասանի, Թարգմ. Լ. Մ. Ա.	— 5
	106 Ակամայ մարտապան, Թարգմ. Տ. Յովհաննիս.	— 15
	107 Մուշուր Այդալի, Թարգմ. Յ. Օհանեանի.	— 10
	108 Մանուկը Հողագործ, Չ. Կարբիլի, Վ. Մ. Ա.	— 7
	109 Նախադրական, Թարգմ. օր. Ն. Առլիխովեանի	— 7
	110 Երկուսի Մարիօն, Թարգմ. Մեղիկեանի	— 10
	111 Րոմօ և Ջուլիան, Շնկա., Թարգմ. Յ. Խան-Մաս.	— 60
	112 Աղգային Չոքեր, Յ. Պարոնեանի, զ. սպ.	— 1
	113 Չորայից Ն. Ռուսակինի, Թարգմ. Մ. Տ. Անդր.	— 15
	114 Մեղիկեանցի Վահանը, տիկ. Ա. Յակոբեանեանի	— 10
1897 Թ.	115 Անկախ դերձակը	— 40
	116 Մոսկովների	— 40
	117 Քննած զեղեցիկներ	— 40
	118 Կարմիր զլխարի	— 40
	119 Գուլիկէրը Թիւրքների աշխարհում	— 40
	120 Գուլիկէրը Հսկաների աշխարհում	— 40
	121 Նապաստակ և Ողնու զրաղը	— 40
	122 Լուսերեսիկ	— 40
	123 Ճշմարտութիւնը մշտ յաղթում է.	— 40
	124 Օրբերոնի Հրաշալի եղջիրը	— 40

Ն. Երեզ  
պատկեր  
Ներով

125	Դաւիթ Կողտեր շէրը, Չարլս Գեկիկենը, Թ. Պ. Պ. 1 —
126	Դաւընկերները, Աննե՛նակոյս, Թ. Ն. Կիւլնազար. — 50
127	Խժռողներ, պրոֆ. Մ. Բողդ. Թ. Լ. Ս. Աղամ. — 50
128	Ընտիր պատմութեամբ, Ալֆ. Կողէի, Թ. Վ. Փափ. — 40
129	Հաս կիներ, Ա. Ահարոնեանի . . . . . — 40
130	Կեանքի տեսարաններ, Քասեկի . . . . . — 50
131	Ոսկի շինողներ, Յշոկիկ, Թ. Խ. Մարտիրոսեանի. — 50
132	Գուլիկերի ճանապարհորդ, Թ. Դ. Աղայեան. — 50
133	Թուչունների աշնանային տեղափոխութիւնը — 5
134	Վե՛նեակի վաճառականը, Շէկո, Թ. Յ. Խ. Մաս. — 40
135	Երկրաչարժ և Հրարէ. լեաներ, Լուսիկիկի. . . . . — 15
136	Վէպիկներ և զրոյցներ, Գիզը Մոպաս. Թ. Հ. Աս. 1 —
137	Բողդէա, կողմ Մա. Ս. . . . . — 20
138	Երկրի և երկինքի մասին, Վ. Լուսիկիկի . . . . . — 10
139	Կոնֆալցիոս, կողմ Գ. Բաղը . . . . . — 20
1898 Թ. 140	Այդեաբրական օդերործութիւն, Յ. Պետրոսեանի — 40
141	Գիւլպատնոս, մարտի. և գործ. Լ. Խան-Սղեանի. — 50
142	Կե՛նդանիների աշխարհում, Լուսիկիկի. . . . . — 30
143	Արքայ լիր, Շէկոյ. Թ. անդ. Յ. Խան-Մասեհեանի. — 50
144	Յո երթաս, Սենկիկիկի. Թ. լե՛Տ. Սա. Լիսիկեան 1 50
145	Ինչ է Տէրխաթը, Կոստոյիկայի, Թ. Դ. Աղ. — 10
146	Մարդ եմ, Երեբոն, Թ. գերմ. Ս. Մայրապետեց. 1 —
147	Սղը և կեանքը, Թ. Լ. Տէր-Յակոբեանց. — 10
148	Խորամանկ աղուէոր, Ալիկիկի. Թ. Պ. Պաօշեանց. 10
149	Կղզիները լորդը, Վալտեր Կոտտի, Թ. Յ. Գ. Միրը. 1 —
150	Վանայ սաղը Բ. Հատը (մամուլի սակ . . . . . — —
151	Հանրիէա, Թ. Կողտէի, Թ. Ֆրանս. Լ. Խ. . . . . — 35
152	Պատըլ, Թ. Գ. Բաղը . . . . . — 20

Վաճառում են Ընկերութեան գրասենեակում, նոյնպէս և բոլոր գրաՎաճառանոցներում:  
 Ընկերութեան հասցէն—Тифлиси, Тифлисское  
 Общество Изданія Армячскихъ книгъ.